ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագրի իրականացման վերլուծություն

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Վանաձոր
2012

Սույն տպագրությունը հնարավոր դարձավ Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստանի աջակցությամբ:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

1 Կառուցվածքային և կազմակերպական բարեփոխումներ 7

2 Կրթական բարեփոխումներ 11

3 Ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառի բարեփոխումներ 15

4 Քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ 18

5 Քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացների հստակեցմանը, ոստիկանության կողմից իրականացվող միգրացիոն վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ 22

6 Նոր անձնագրային համակարգի ներդրման հետ կապված բարեփոխումներ 26

7 Թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ 28

8 Կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման, կիբեռհանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ 31

9 Այլ մարմինների եւ կազմակերպությունների հետ համագործակցության բարելավմանն ուղղված բարեփոխումներ 35

10 Ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ 38

11 Ոստիկանությունում ծառայող (աշխատող) անձանց սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ 41

ԱՄՓՈՓՈՒՄ 43

Հավելված 1 47

Հավելված 2 63

Ներածություն

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեության կարևոր ուղղություններից է ոստիկանության գործունեությունը և գործառույթները կարգավորող օրենսդրական նորմերի և նրանց կիրառման վիճակի ուսումնասիրությունը, խնդիրների բացահայտումը, մարդու իրավունքների խախտումների կանխարգելման և խախտված իրավունքների վերականգնման նպատակով: Առանձնահատուկ ուշադրության են արժանանում ոստիկանության կառույցների հետ քաղաքացիների հարաբերությունները: Այդ տեսակետից կարևոր է ոստիկանության գործունեության վերաբերյալ ոստիկանության գործունեության բարեփոխումների ծրագրերը և նրանց գնահատականը: Մենք ելնում ենք ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված դրույթից՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Մյուս կարևոր սահմանադրական դրույթը իրավական պետության հասկացությունն է, որի հիմքում ընկած են հետևյալ մոտեցումները՝

1. պետական մարմնի գործառույթների հստակ իրավական սահմանումների հստակությունը,
2. պետական մարմինների գործունեության և գործողությունների կանխատեսելիությունը,
3. իրավաչափությունը:

Ներկայացվող վերլուծության մեջ ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 2010 թ. ապրիլի 1-ի թիվ 354-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի (հետագայում՝ ծրագիր) իրականացման արդյունքները:

Բարեփոխումների ծրագրով նախատեսված է եղել իրականացնել օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ, վերջիններիս ապահովման համար կատարվել են վերլուծություններ, ուսումնասիրություններ:

Դեռևս 2011 թվականի նոյեմբերին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը դիմեց ՀՀ ոստիկանությանը Ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագրի իրականացման վերաբերյալ, մասնավորապես՝ մարդու իրավունքների, ներառյալ ոստիկանության աշխատակիցների պաշտպանության վրա ուղղակի ազդեցություն ունեցող մի շարք միջոցառումների մասին տեղեկատվություն ստանալու համար: 2011 թ. նոյեմբերի 23-ին, ի պատասխան նշված գրության, ՀՀ ոստիկանության շտաբը հայտնել է, որ տեղեկատվություն չի կարող տրամադրվել, քանի որ դրանց մի մասը վերաբերում են պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող իրավական ակտերին, նաև այն պատճառով, որ տվյալ պահին ծրագիրը գտնվում է ամփոփման փուլում:

Շուրջ մեկ ամիս անց ոստիկանության պաշտոնական կայքէջում տեղադրվել է ՀՀ

ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը (հետայսու՝ հաշվետվություն)[1]: Ծրագիրը կազմված է 67 կետից, հաշվետվությունը՝ 25 էջից:

Վերլուծության կատարման համար հիմք է հանդիսացել ՀՀ ոստիկանության կողմից հրատարակված հաշվետվությունը:

Վերլուծության մեթոդաբանություն

Բարեփոխումների ծրագրով սահմանված նպատակները, ըստ իրականացման վիճակի պայմանականորեն բաժանվել են 2 խմբի՝

- նպատակներ, որոնց ուղղությամբ իրականացվել են գործողություններ:
- նպատակներ, որոնց ուղղությամբ գործողություններ չեն իրականացվել:

Բացի այդ, ծրագրով ձևակերպված նպատակների և միջոցառումները իրականացումը գնահատվել է ըստ հետևյալ սանդղակի՝

1. ամբողջությամբ իրականացվել են,
2. մեծամասամբ իրականացվել են,
3. կիսով չափ իրականացվել են,
4. մեծամասամբ չեն իրականացվել,
5. չեն իրականացվել:

Հարկ է նշել, որ ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված հաշվետվությունը պարունակում է նաև տեղեկություններ գործողությունների վերաբերյալ, որոնք նախատեսված չեն եղել ծրագրով:

ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագրով միջոցառումների իրականացումը գնահատվել է ոչ միայն ըստ քանակի, այլև գնահատվել է նրանց կատարման բովանդակությունը ելնելով մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքներից, միջազգային պայմանագրերով ՀՀ կողմից ստանձնած պարտավորություններից, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մասին մի շարք բանաձևերից (թիվ 1609 (2008), 1620 (2008), 1643 (2009)), 15 սեպտեմբերի 2011թ. Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մասին զեկույցից:

Ընդհանուր դիտարկումներ

Բարեփոխումների ծրագրի և նրա կատարման հաշվետվության կառուցվածքի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ ընդհանուր դիտարկումները

[1] http://www.police.am/am/aycer/1180-2010-12-15-21-49-01

- որոշ նպատակներ ձևակերպված են անհստակ, ինչի հետևանքով դժվար է նաև գնահատել նրանց իրականացումը: Օրինակ՝ «Ոստիկանությունում գործառույթների հստակեցում, անհարկի կրկնությունների բացառում» միջոցառման մեջ, չի նշվում, թե որ գործառույթները չեն հստակ և որոնք են անհարկի կրկնությունները:
- Ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մեջ բացակայում է որոշ գործողությունների և միջոցառումների վերաբերյալ ամբողջական և լիարժեք տեղեկատվություն:
- Հաշվետվության մեջ խիստ ընդհանրական են ներկայացված որոշ գործողությունների վերաբերյալ տեղեկությունները, մասնավորապես վերլուծությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Օրինակ՝ հաշվետվությունը պարունակում է շատ քիչ տեղեկատվություն կոնկրետ ոլորտներում իրականացված վերլուծությունների մասին: Այնինչ ծրագրի տվյալ բաղադրիչը շատ կարևոր է, քանի որ ակնկալվող արդյունքների/նպատակների ոչ հստակ ձևակերպման պարագայում վերլուծությունները և ուսումնասիրությունները թույլ են տալիս հայտնաբերել այն թիրախային և կոնկրետ հարցերը, որոնց լուծման նպատակով իրականացվել են այդ գործողությունները: Բացի այդ, ծրագիրը պարունակում է նպատակներ, որոնց շրջանակներում գործողությունները հարկավոր է մշակել՝ ելնելով ծրագրով նախատեսված վերլուծությունների, ուսումնասիրությունների արդյունքներից, իսկ հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն տվյալ վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքում ձեռք բերված կամ ստացված եզրահանգումների մասին:
- Հաշվետվության մեջ հիշատակված գերատեսչական ակտերը՝ ՀՀ ոստիկանության պետի որոշումները և հրամանները, հասանելի չեն. տեղադրված չեն և հրապարակված չեն :
- Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն ծրագրի իրականացման համար նախատեսված և իրացված ֆինանսական միջոցների մասին:
- Հաշվետվությունը լիովին չի ներկայացնում օրենսդրական փոփոխությունների բովանդակության, նպատակի և ազդեցության վերաբերյալ տեղեկություններ:

1 Կառուցվածքային և կազմակերպական բարեփոխումներ

ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում նախատեսված է եղել իրագործել կառուցվածքային և կազմակերպական բարեփոխումների 7 նպատակ: Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն 7 նպատակներից 2-ի վերաբերյալ:

Նպատակներ, որոնց իրագործման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ

1. *Ոստիկանությունում գործառույթների հստակեցում, անհարկի կրկնությունների բացառում*[2]

Սույն նպատակի իրականացման ուղղությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կառուցվածքն ու թվաքանակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 2069-ՆԳ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում,
- ՀՀ ոստիկանության տրանսպորտային վարչության լուծարում և վերջինիս գործառույթները ՀՀ ոստիկանության տարածքային մարմիններին և Պետական պահպանության վարչության փոխանցում (ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 367-ՆԳ որոշում):

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն Ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայությունների, ուսումնական հաստատությունների և տարածքային մարմինների գործառույթների վերանայման, դրանց իրականացման, մարդկային ռեսուրսներով ապահովվածության ուսումնասիրության արդյունքների մասին: Հաշվի առնելով, որ այս նպատակին հասնելու ուղղությամբ նախատեսված է եղել ուսումնասիրությունների իրականացում, որոնց հիման վրա պետք է կատարվեին փոփոխություններ: Մինչդեռ հաշվետվությամբ ներկայացված չէ ո՛չ ուսումնասիրությունների իրականացման փաստը, ո՛չ ուսումնասիրությունների արդյունքները, և հասկանալի չէ, թե ինչի հիման վրա են կատարվել նշված փոփոխությունները, և արդյոք դրանք կատարվել են ամբողջ ծավալով:

2. *Քաղաքացիական հատուկ ծառայության ներդրում ոստիկանությունում*

Ըստ հաշվետվության, ոստիկանության 441 ծառայող անցում է կատարել քաղաքացիական հատուկ ծառայության, որոնցից 406-ը՝ Անձնագրային և վիզաների վարչությունում, 30-ը՝ Ֆինանսաբյուջետային վարչությունում, 5-ը՝ Կադրերի վարչությունում: Կադրերի վարչությունում ստեղծվել է Քաղաքացիական հատուկ ծառայության անձնակազմի կառավարման բաժին, որը կազմակերպում է ՀՀ ոստիկանության քաղաքացիական ծառայության պաշտոններում ծառայողների համալրման գործընթացը:

[2] Համարակալումը համապատասխանում է ծրագրի մեջ նշված նպատակի համարին:

Անհնար է հստակ գնահատական տալ տվյալ գործողության ամբողջական իրականացման վերաբերյալ, քանզի բարեփոխումների ծրագրով նշված չէ, թե ոստիկանության որ ծառայություններում և վարչություններում է նախատեսված եղել ներդնել քաղաքացիական հատուկ ծառայություն:

Մյուս կողմից հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն այն մասին, թե ինչ չափանիշներով են ընտրվել վարչությունները՝ քաղաքացիական հատուկ ծառայության ներդրման համար:

Միևնույն ժամանակ հաշվետվությունը չի ներառում տեղեկատվություն, թե ինչ իրավական ակտեր են ընդունվել ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության ներդրման նպատակով:

Հաշվետվությունը հստակ տեղեկատվություն չի տալիս, թե ինչ ծավալով է ներդրվել քաղաքացիական հատուկ ծառայությունը նշված վարչություններում:

5. Թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրում

Հաշվետվության համաձայն ԵԱՀԿ աջակցությամբ պիլոտային կարգով շուրջ մեկուկես տարի գործում են համայնքային ոստիկանության 2 հենակետեր արդեն իսկ գործում են Երևան քաղաքում, կառուցվել է ոստիկանության մեկ նոր հենակետ, նոր հենակետերի ներդրման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից առանձնացվել են ևս 16 տարածքներ: Համայնքային ոստիկանության մոդելի ներդրման և ընդլայնման աշխատանքների կազմակերպման նպատակով ոստիկանության պետի 01.10.2010թ. թիվ 2049-Ա հրամանով նշանակվել են պատասխանատու ծառայողներ (ՀԿԱՎ պետի տեղակալ, Արաբկիրի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ): Համայնքային ոստիկանության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրման նպատակով ԱՄՆ կառավարության և ԵԱՀԿ աջակցությամբ ՀՀ ոստիկանության 5 աշխատակիցներ գործուղվել են ԱՄՆ՝ Կանզաս նահանգ: Գործուղման արդյունքում ձեռք բերված փորձն այժմ օգտագործվում է համայնքային ոստիկանության գործառույթների մշակման աշխատանքներում: 2011 թվականի ապրիլի 4-ին ՀՀ ոստիկանության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի միջև ստորագրված համագործակցության մասին հուշագրի Լրացուցիչ Արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ նշված աշխատանքներին ներգրավվել է նաև ԵԱՀԿ կողմից հրավիրված համապատասխան փորձագետ, որի կողմից տրվել է համայնքային ոստիկանության աշխատակիցների գործառույթների, նրանց կողմից կատարվող աշխատանքների գնահատման նկարագրությունը, մշակվել և ներկայացվել է համայնքային ոստիկանության ղեկավարման 4 մոդել: Կատարված աշխատանքների ամփոփման արդյունքում ՀՀ ոստիկանության պետի 02.12.2011 թ. թիվ 3535-Ա հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության համայնքային ոստիկանության ծառայության կանոնադրությունը, որը ուժի մեջ է մտնելու 2012 թվականի հունիսի 1-ից: Նախատեսվել է համայնքային ոստիկանությանն օժանդակողի ինստիտուտը (օժանդակողներ կարող են լինել ՀՀ ոստիկանության երկարամյա կենսաթոշակի անցած անձինք, որոնք կարող են վերապատրաստվել ոստիկանության ուսումնական

հաստատությունում:

Ըստ հաշվետվության, մինչ հրամանի ուժի մեջ մտնելը իրականացվելու են համայնքային ոստիկանության ծառայողների վերապատրաստում, պարեկապահակետային ծառայության, տեղամասային տեսուչների, անչափահասների գործերով տեսուչների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերլուծություն, ինչպես նաև շարունակվելու է նշված բնագավառում առկա խնդիրների և ռիսկերի վերհանումը:

Հաշվետվության մեջ ներառված չէ որևէ տեղեկատվություն «Կազմ-հաստիքային փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի և «Ոստիկանական հենակետերի տիպային գործառույթները սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակման վերաբերյալ: Այնինչ թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրման հիմնական նպատակներից է նաև ոստիկանական կետերի գործառույթների մշակումը և հստակեցումը: Հաշվի առնելով, որ թաղային ոստիկանությունը մի կառույց է, որի արդյունքում անմիջականորեն է ապահովվելու ոստիկան-քաղաքացի կապը, ապա անհրաժեշտ է, որ համայնքային ոստիկանության հենակետերի գործառույթների մասին իրազեկված լինեն նաև քաղաքացիները: Համայնքային ոստիկանության վերաբերյալ օրենսդրական փաստաթղթերի անհասանելիության արդյունքում փակ են նաև համայնքային ոստիկանության ծառայողների ենթակայության և ֆինանսավորման հետ կապված հարցերը:

6. Երևան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայության կատարելագործում

Ըստ հաշվետվության, այս նպատակին հասնելու համար կատարվել են հետևյալ գործողությունները

- իրականացվել են տեսադիտարկման համակարգերի ներդրման հայեցակարգերի, տեխնիկական առաջադրանքների մշակման և ֆինանսական հաշվարկների իրականացման աշխատանքներ: Մարդաշատ վայրերի տեսահսկման տեսախցիկները հանձնվել են ՀՀ ոստիկանությանը:

Հաշվետվությունից հստակ չի հասկացվում, թե արդյոք տեսախցիկները տեղադրվել են և այդ տեսախցիկների շահագործման համար ոստիկանության որ ստորաբաժանումն է պատասխանատու, ինչպես նաև ինչ սարքավորումներ են ձեռք բերվել, դրանց քանակը և դրանց ձեռքբերման համար իրացված ֆինանսական միջոցների չափը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների: Հաշվետվությունից պարզ չէ նաև, թե տեսադիտման համակարգի ներդրման նպատակով ում կողմից է մշակվել և ում կողմից հաստատվել հայեցակարգը, ինչպես նաև սահմանված չեն տեսախցիկներով ձեռք բերված տեղեկատվության տնօրինման, օգտագործման իրավական հիմքերը: Իրականացված գործողությունների վերաբերյալ տվյալները հնարավորություն չեն տալիս վերստին գնահատելու դրանց կատարման արդյունավետությունը:

• Պարեկապահակետային ծառայությունը անհրաժեշտ հանդերձավորումով, հատուկ միջոցներով և զենքով ապահովման միջոցառման շրջանակներում ընդունվել են 14.04.2011 թ. ՀՀ կառավարության «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրը և այն կրելու ժամկետները սահմանելու մասին» թիվ 425 որոշումը և 01.06.2011 թ. ՀՀ ոստիկանության պետի «Ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 2 հրամանը: Ոստիկանության արտաքին ծառայություն իրականացնող ծառայողներին նոր համազգեստով և անհրաժեշտ միջոցներով հանդերձավորման գործընթացը դեռևս ընթանում է: *Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն, թե ինչ հատուկ միջոցներ և զենք են ձեռք բերվել, որքան և որքան ֆինանսական միջոցներ են իրացվել:*

Ըստ հաշվետվության, շահագործման չի հանձնվել Երևան քաղաքի վարչության կազմում ոստիկանական ուժերի և միջոցների օպերատիվ կառավարման կենտրոնը: Ըստ հաշվետվության, այն կհանձնվի շահագործման մինչև 2012 թվականի ապրիլ ամիսը: Միևնույն ժամանակ, իրականացվել են կենտրոնի ստեղծման նախապատրաստական աշխատանքները, ամփոփված են օպերատիվ արձագանքման կենտրոնը տեխնիկապես համալրելու համար կայացած մրցույթի արդյունքները: Ինչպես ծրագրում, այնպես էլ հաշվետվության մեջ ներկայացված չի այս կենտրոնի գործառույթները և նշանակությունը, ինչպես նաև կենտրոնի ստեղծման նախապատրաստական աշխատանքների պատասխանատուները:

Ներկայացված չէ տեղեկատվություն պարեկապահակետային ծառայության վերակարգերի աշխատանքում նոր մեթոդների ներդման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

7. Ոստիկանության Երևան քաղաքի վարչության և ենթակա տարածքային մարմինների օպերատիվ ստորաբաժանումներում քրեական հետախուզության ծառայության ճյուղային սպասարկման (նեղ մասնագիտացման) սկզբունքի ներդրում:

Ըստ հաշվետվության, Ոստիկանության Երևան քաղաքի բոլոր բաժիններում և բաժանմունքներում քրեական հետախուզության բաժանմունքների հենքի վրա ավարտվել է ճյուղային սպասարկման մոդելի ներդրումը: Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն այն մասին, թե մասնավորապես քրեական հետախուզության ծառայության շրջանակներում մասնագիտացման ինչ ուղղություններ են ձևավորվել քրեական հետախուզության ծառայության մեջ, նեղ մասնագիտացման ինչ վերապատրաստումներ են կազմակերպվել և ոստիկանության քանի աշխատակից է մասնակցել այդ վերապատրաստումներին: Քանի որ հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն «Կազմ -հաստիքային փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի և «Գործառույթների վերաբաշխման մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակման, ընդունման և կիրառման վերաբերյալ, ապա անհնար է դառնում գնահատել տվյալ միջոցառման կատարման բովանդակությունը:

Նպատակներ, որոնց վերաբերյալ հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում

3. *Ոստիկանության ծառայությունների և տարածքային մարմինների տեղեկատվական շտեմարանների ինտեգրում և շահագործում միասնական համակարգչային գերատեսչական ցանցում*
4. *Պետական մատնադրոշմային գրանցման համակարգի ստեղծում*

Այսպիսով, կառուցվածքային կազմակերպական բարեփոխումների շրջանակներում նախատեսված 7 նպատակներից միայն 5 նպատակների վերաբերյալ կա տեղեկատվություն ՀՀ ոստիկանության կողմից տարածված հաշվետվությունում, սակայն նշված 5 նպատակների իրականացման վերաբերյալ տարածված տեղեկատվությունը վերստին ամբողջական և չափելի չէ:

2 Կրթական բարեփոխումներ

Կրթական բարեփոխումների ուղղությամբ նախատեսված է եղել իրագործել թվով 10 նպատակ, որոնցից 4-ի վերաբերյալ հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում:

Նպատակներ, որոնց իրագործման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ

8. *Նախնական, միջին, բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում «ոստիկան» մասնագիտության սահմանում*

Այս նպատակի ուղղությամբ սահմանվել են ոստիկանական գործ մասնագիտության երեք աստիճանները՝ նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության գծով, սակայն նպատակը ամբողջությամբ չի իրականացվել, քանի որ հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն «Հեռակա ձևով մասնագիտական միջին և բարձրագույն կրթության, ինչպես նաև դիպլոմավորված մասնագետի և բակալավրի կրթական ծրագրերով ուսուցանվող մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2000 թվականի թիվ 242 որոշման մեջ փոփոխության և/կամ լրացման կատարման մասին և հաշվետվության մեջ նշված չէ տվյալ միջոցառման անհրաժեշտության բացակայության մասին:

9. *Ոստիկանության միասնական կրթահամալիրի (ուսումնական հաստատություն) կազմակերպում*

Հաշվետվությունը տրամադրում է տեղեկատվություն «ՀՀ ոստիկանության կառուցվածքը և աշխատողների առավելագույն թիվը և ղեկավարների տեղակալների թիվը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.12.2002 թ. թիվ 2069-Նգ որոշման մեջ ՀՀ կառավարության 28.04.2011 թ. թիվ 621-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Ըստ հաշվետվության, նշված որոշման արդյունքում

ոստիկանության ուսումնական կենտրոնը դուրս է եկել ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների կազմից: Ոստիկանության կրթակամալիրը իր կանոնադրության համաձայն, իրականացնելու է բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական կրթական ծրագրեր: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն ապահովվելու է կրթահամալիրի կազմում վարչության կարգավիճակով գործող ակադեմիայի, միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը՝ քոլեջի և նախնական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը՝ ուսումնական կենտրոնի կողմից: Միաժամանակ, ՀՀ ոստիկանության պետի 22.07.2011 թ. թիվ 1871-Ա հրամանով հաստատվել է Ոստիկանության կրթահամալիրի նոր կառուցվածքը: ՀՀ կառավարության 28.04.11 թ թիվ 615-Ն որոշմամբ «Ոստիկանության Ակադեմիա» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և հաստատվել վերջինիս կանոնադրությունը:

10. Կրթական աստիճանական համակարգի ներդրում

Այս նպատակին հասնելու ուղղությամբ կատարվել են փոփոխություններ և լրացումներ «Ոստիկանությունում ծառայության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներում, սակայն նշված չէ, թե որ հոդվածներն են փոխվել: Փոփոխություններ և լրացումներ են կատարվել 28.08.2003 թ. ՀՀ կառավարության թիվ 1184-Ն որոշմամբ հաստատված «Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագրքում, “որի արդյունքում կարգավորվել են ոստիկանական նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական կենտրոնում, քոլեջում և ակադեմիայում դիմորդների ընտրության, սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման, ամփոփիչ պետական ատեստավորման հետ կապված և այլ հարաբերություններ”:

ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի թիվ 1463-Ն և 2011 թ. մարտի 10-ի թիվ 229-Ն որոշումներով լրացումներ են կատարվել նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերում. սահմանվել են ոստիկանական գործ մասնագիտության երեք աստիճանները՝ նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության գծով: Ոստիկանության կրթակամալիրում իրականացվող ուսումնական գործընթացի արդյունքում տրվելու են համապատասխանաբար ոստիկանի, ոստիկան-սպայի, ոստիկանության բակալավրի և մագիստրոսի որակավորումներ: Կրթության և գիտության նախարարի 08.12.2010 թ. թիվ 1676-Ն և 27.12.2010 թ. թիվ 1740-Ն հրամաններով հաստատվել են նշված որակավորումների կրթական չափորոշիչները: Միջին մասնագիտական ուսումնառության ժամկետ է սահմանվել 2 տարի, իսկ նախնականը՝ 6 ամիս:

Միևնույն ժամանակ հաշվետվությունը չի պարունակում այս նպատակին հասնելու

համար նախատեսված հետևյալ գործողությունների կատարման մասին տեղեկատվություն՝

- *«Ուսուցիչների ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003 թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում*
- *Ուսուցիչների ուսումնական հաստատությունում ուսուցման նոր, առաջադիմական մեթոդների (ինտերակտիվ, ներգրավված, խաղային և այլն) աստիճանական ներդրում:*

Հաշվետվության մեջ չկա տեղեկատվություն «Ուսուցիչների ծառայողի ատեստավորման անցկացման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.12.2002 թ. 2147-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մասին, սակայն 2010 թվականի հուլիսի 8-ի ՀՀ կառավարության N 881-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել սույն որոշման մեջ, որով նոր խմբագրությամբ շարադրվել է Ուսուցիչների ծառայողի ատեստավորման անցկացման կարգն ու պայմանները: Որոշումը ուժի մեջ է մտել 2011 թ. հունվարի 1-ին:

12. *Ուսուցիչների ուսումնական հաստատություն (համակարգ) ընդունվող թեկնածուների գիտելիքների և ունակությունների ստուգման նոր չափանիշների ներդրում*

Հաշվետվության մեջ նշվել է, որ փոփոխություններ են կատարվել Ուսուցիչների ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագրքում, ներ է դրվել ընդունելության համար նոր թեսթային համակարգ: Սակայն դրանց ներդրման համար ընդունված իրավական ակտերի մասին հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում:

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն «Ուսուցիչներում պաշտոնի նշանակման համար եռամսյա փորձաշրջան անցնելու կարգ և պայմաններ» սահմանելու մասին ՀՀ կառավարության 23.01.2003 թ. 112-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման վերաբերյալ:

13. *Ուսուցիչների ուսումնական հաստատությունում պրոֆեսիոնալ-մասնագիտական կազմի որակավորում, նրանց մասնագիտական գիտելիքների մշտական համալրման իրական մեխանիզմների ստեղծում*

Այս նպատակի իրականացման համար ընդունվել է «ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի թիվ 25-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 29.12.2011 թ. թիվ 1878 -Ն ՀՀ կառավարության որոշումը, որով հաստատվել են ՀՀ ԿԱ ՀՀ

ոստիկանության ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջները:

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003 թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման վերաբերյալ:

15. Միջազգային ոստիկանական ուսումնական համակարգին ինտեգրում

Հաշվետվության համաձայն ուղարկվել է գրություն, որին 07.09.2011 թ.ստացվել է դրական արձագանք և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները 23.09.2011 թ. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել են CEPOL-ի գլխավոր գրասենյակ՝ ստացված ձևանմուշի համաձայն: Տեղեկատվություն չի տրամադրվում, թե ինչ է նախատեսված եղել ինտեգրման հետ կապված: *Միևնույն ժամանակ հաշվետվության մեջ չի պարունակվում տեղեկատվություն՝*

- *օտարերկրյա պետությունների ոստիկանական ուսումնական առաջատար հաստատությունների հետ կադրերի պատրաստման և վերապատրաստման ոլորտում համաձայնագրերի կնքման վերաբերյալ*

- *Ինտերպոլի հակակոռուպցիոն ակադեմիայում (Վիեննա) կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ընդգրկված ծառայողների վերապատրաստման վերաբերյալ*

<u>Նպատակներ, որոնց իրականացման վերաբերյալ հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում</u>

Հաշվետվության մեջ բացակայում է տեղեկատվությունը հետևյալ նպատակների իրականացման վերաբերյալ.

11. ուսումնական գործընթացում պրակտիկ փորձի կիրառում
14. ոստիկանության համակարգի գործունեության կատարելագործմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների խթանում
16. ոստիկանության ուսումնական հաստատությունում նյութատեխնիկական բազայի բարելավում
17. *ծառայողական պարապմունքների համակարգի կատարելագործում*

Այսպիսով, հաշվետվությունից պարզ չէ, թե կրթական բարեփոխումների ուղղությամբ գործնական ինչ աշխատանքներ են տարվել կրթական համակարգի բարեփոխումների, կրթական նոր մեթոդների, ոստիկանության ծառայողների գիտելիքների և կարողությունների զարգացման, ոստիկանական հմտությունների առավել արդյունավետ ուսուցման նոր մեթոդների կիրառման ուղղությամբ:

3 Ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառի բարեփոխումներ

Ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառի բարեփոխումների ուղղությամբ նախատեսվել է իրագործել 7 նպատակ և բոլորի վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է տեղեկատվություն:

Հաշվետվության մեջ այս բնագավառի վերաբերյալ ներկայացված են տեղեկություններ գործողությունների մասին, որոնցով լուծված խնդիրներն ամրագրված չեն եղել բարեփոխումների ծրագրով: Այսպես, կատարվել են փոփոխություններ ՀՀ կառավարության 09.09.2011 թ. թիվ 1251 և 26.05.2011 թ. թիվ 716 որոշումների մեջ: Համաձայն փոփոխությունների՝ տրանսպորտային միջոցների հաշվառման գործողություններ կատարելու համար այլևս չի ներկայացվում տեխնիկական զննության կտրոն, ԱՊՊԱ կտրոն կամ պայմանագիր, տրանսպորտային միջոցի ապահովագրված լինելու հանգամանքը ստուգվում է ինտերնետային կայքի (www.paap.am) միջոցով: Փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև ՀՀ կառավարության 20.04.2006 թ. թիվ 581-Ն և 18.09.2008 թ. թիվ 1158-Ն որոշումների մեջ, որոնցով պարզեցվել է վարորդական վկայական ստանալու գործընթացը (վերացվել է հոգեբուժական և նարկոլոգիական բժշկական հաստատություններում անձի հաշվառման փաստի վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու պահանջը, փաստը ստուգվում է հիշյալ հաստատություններից ճանապարհային ոստիկանությունում ստացված տեղեկատվության հիման վրա, ֆիզիկական ձևախախտում կամ արատներ ունեցող քաղաքացիները բժշկական հավատարմագրում անցնելու են բացառապես ունեցած տեսանելի արատների հետ կապված հիվանդությունների պարզման նպատակով, A, A1, B, B1, C, C1 կարգերի և ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու համար քաղաքացիներն այլևս ստիպված չեն լինի անցնել պարտադիր ուսուցում, ինքնուսները նույնպես կարող են քննություն հանձնել և վարորդական վկայական ստանալ):

Ըստ հաշվետվության, ճանապարհային ոստիկանության շրջիկ ծառայություն իրականացնող ծառայողներն այսօր արդեն օգտագործում են համապատասխան նոթբուկ-համակարգիչներ (50-ը՝ Երևան քաղաքում, 50-ը՝ մարզերում), ինչը թույլ է տալիս տեղում պարզել տրանսպորտային միջոցի տվյալների համապատասխանությունը հաշվառման տվյալներին:

<u>Նպատակներ, որոնց իրագործման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ</u>

18. Խմածության աստիճանը տեղում որոշելու մեխանիզմի ներդրում

Ըստ հաշվետվության, մշակվել են սթափության վիճակի զննության տեխնիկական միջոցներ ձեռք բերելու նպատակով մրցույթ հայտարարելու համար տեխնիկական առաջադրանքները, սակայն մեխանիզմը դեռևս ներդրված չէ:

19. Ճանապարհատրանսպորտային պատահարների, վարչական իրավախախտումների, տրանսպորտային միջոցների և վարորդական վկայականների հաշվառման շտեմարանների ստեղծում

Ըստ հաշվետվության, արդեն շահագործվում են ճանապարհատրանսպորտային պատահարների, վարչական իրավախախտումների, տրանսպորտային միջոցների և վարորդական վկայականների հաշվառման շտեմարանները: Սակայն թե՛ ծրագրի, թե՛ հաշվետվության ձևակերպումներից պարզ չէ, թե այդ շտեմարանները երբ են դրվել գործառության մեջ և ում որոշումներով, ներկայացված չէ շտեմարաններում հավաքվող տեղեկատվության օգտագործման կարգը, օգտագործողների պատասխանատվությունը, տեղեկատվության նշանակությունը, դերը և նշանակությունը ընդհանուր համակարգի բարեփոխումների շրջանակներում, շտեմարաններում ամփոփված տեղեկատվության մատչելիությունը քաղաքացիների համար:

20. Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաև մայրուղիներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդրում

Ըստ հաշվետվության, համակարգի ներդրման նպատակով կազմվել է տեխնիկական առաջադրանք, կայացել է մրցույթ, որի արդյունքները ամփոփվել են: Միջոցառման իրականացման նպատակով նաև ստեղծվել և շահագործման է հանձնվել Խախտումների արձանագրման կենտրոնը, Երևան քաղաքի մայրուղիներում տեղադրվել են 15 արագաչափ տեսախցիկներ, 10 խաչմերուկներում՝ 40 դիտարկման տեսախցիկներ: Ծրագրով սահմանված չէ, թե քանի արագաչափ և դիտարկման տեսախցիկ պետք է դրվեր, այդ պատճառով հնարավոր չէ գնահատել ծրագրի իրականացումը քանակական տեսակետից, միևնույն ժամանակ, հանրապետության մյուս քաղաքներում տեսախցիկների տեղադրման մասին տեղեկատվություն չկա: Հաշվետվությունը չի անդրադառնում նաև Խախտումների արձանագրման կենտրոնի գործունեությունը կարգավորող իրավական ակտերին, գործառույթներին, հավաքագրված տեղեկատվության տնօրինման և օգտագործման, ինչպես նաև քաղաքացիների համար հավաքագրված տեղեկատվության մատչելիության հարցերին:

21. Ճանապարհային ոստիկանության ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժը վերահսկող GPS տեղորոշիչների ներդրում

Ըստ հաշվետվության, ներդրված է ճանապարհային ոստիկանության ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժը վերահսկող GPS տեղորոշիչների համակարգը: Միևնույն ժամանակ, թե՛ ծրագրից, թե՛ հաշվետվությունից պարզ չէ, թե որն է այդ տեղորոշիչների դերը, նշանակությունը, դրանց միջոցով ձեռք բերված տեղեկատվության տնօրինման, օգտագործման կարգը, ձեռք բերված տեղեկատվության մատչելիությունը քաղաքացիների համար և դրանց կիրառման աշխարհագրությունը:

22. Վարորդական վկայական ստանալու գործնական և տեսական քննության պայմանների բարելավում

Ըստ հաշվետվության, ավարտված են Երևան քաղաքի ճանապարհային ոստիկանության քննական ավտոդրոմի և նոր վարչական շենքի կառուցման աշխատանքները: Միաժամանակ, ըստ հաշվետվության, դեռևս շահագործման չի հանձնվել քննական ավտոդրոմը:

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն տեսական քննության պայմանների բարելավման մասին, ինչպես նաև Երևան քաղաքում մեկ ստորաբաժանման միջոցով վարորդական վկայականների տրման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:

23. Ճանապարհային երթևեկության կանոնների ու դրանց խախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմերի կատարելագործում, տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող նորմերի հստակեցում

Այս նպատակով նախատեսված է եղել փոփոխություններ և լրացումներ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, «ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 955-Ն որոշման մեջ: Ըստ հաշվետվության, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է ԱԺ-ում, ընդունվել է 1-ին ընթերցմամբ /ի դեպ այն ամբողջությամբ ընդունվել է 07.02.2012 թ./: Դրանով վերացվում են ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում կոռուպցիոն ռիսկեր պարունակող դրույթները, հստակեցվում են երկիմաստություն պարունակող նորմերը, բացի այդ, վերացվում է իրավախախտ վարորդից կամ հետիոտնից տեղում որպես տուգանք կանխիկ գումար գանձելու իրավունքը, իսկ եթե վարորդը կունենա վճարային քարտ, ապա ոստիկանի մոտ առկա էլեկտրոնային վճարման համակարգի (սաստ տերմինալի) միջոցով կկարողանա կատարել տուգանքի վճարումը:

2011 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը համապատասխանեցվել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2010 թվականի նոյեմբերի 15-ին կատարված փոփոխություններին:

24. Այլ պետություններում հաշվառված և ՀՀ տարածք մուտք գործող տրանսպորտային միջոցների ՀՀ-ում հաշվառման և հսկողության մեխանիզմների կատարելագործում

Ըստ հաշվետվության, ընդունվել է «ՀՀ ժամանակավորապես ներմուծված

տրանսպորտային միջոցներին հաշվառման փաստաթղթեր և հաշվառման համարանիշեր չտրամադրելու դեպքերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 30.08.2007 թ. թիվ 1041-Ն որոշումը՝ ՀՀ կառավարության 2010 թ. սեպտեմբերի 9-ի թիվ 1251 -Ն որոշմամբ ուժը կորցրած ճանաչելու մասին: Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն «Տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման և հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1854-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4 Քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ

Քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված բարեփոխումների շրջանակներում նախատեսվել է իրագործել 6 նպատակ, որոնց և բոլորի իրականացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ ներկայացված է տեղեկատվություն:

<u>Նպատակներ, որոնց իրագործման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ</u>

25. Ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանության ապահովում

Ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով, ըստ հաշվետվության, իրականացվել են ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության հաշվետվության արդյունքների հանրային քննարկումներ: Ոստիկանության 40 ՁՊՎ-ներից 32-ում ոստիկանության տարածքային մարմինների ուժերով կատարվել են հարդարման աշխատանքներ, տեղադրվել են տաքսոֆոններ: Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն, թե որոնք են հանդիսացել ֆինանսավորման աղբյուրները, և քանի տաքսոֆոն է տեղադրվել: Բերման ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու նպատակով ՀՀ ոստիկանությունում հետաքննություն իրականացնող ստորաբաժանումների պետերին, ՀՀ ոստիկանության պետի կողմից 2010 թ. ապրիլի 3-ին ստորագրվել է թիվ 12 ցուցումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի (ձերբակալում) համաձայն՝ բերման ենթարկված անձանց խնդրանքով ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ փաստաբան հրավիրելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու և բացատրությունները փաստաբանի մասնակցությամբ վերցնելու իրավունքի ապահովման ուղղությամբ: Նշված ցուցումը ներկայացվում է որպես ՀՀ կառավարության 14.06.2007 թ. թիվ 818-Ն որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը պահպանելու մեխանիզմ:

Առանձին ուշադրության է արժանի ծրագրով տվյալ բաժնում ներառված

միջոցառումների ցանկը, քանզի ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանությունը ենթադրում է գործողությունների լայն ցանկ, որն էլ ենթադրում է ձերբակալված անձանց ֆիզիկական պայմանների ապահովում և ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդական խմբի գործունեության հաշվետվության արդյունքների ամփոփում ու հանրային քննարկումների կազմակերպում: Պարզ չէ, թե ինչ ուսումնասիրություններ են իրականացվել ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում օրենսդրական և օրենքի կիրառման և ինստիտուցիոնալ բացերի հայտնաբերման ուղղությամբ:

26. Մարդու և քաղաքացու խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի լրացուցիչ երաշխիքների[3] ամրագրում

Հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն նշված «իրավունքի լրացուցիչ երաշխիքների» ամրագրման նպատակով ուսումնասիրվել է միջազգային փորձը, որի հիման վրա փոփոխություններ են կատարվել «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում, լրացումներ են կատարվել Ոստիկանության ծառայողների և ոստիկանության զորքերի զինծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների հրազենի գործադրելու պայմանների վերաբերյալ:

Հասարակական կարգի պահպանմանը ներգրավված Ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, նրանց կողմից զանգվածային անկարգությունների ժամանակ ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների գործադրման, ինչպես նաև բանակցություններ վարող և ԶԼՄ-ների հետ շփվող ծառայողների համար ծրագրով նախատեսված է եղել կազմակերպել դասընթացներ: Ըստ հաշվետվության, պարեկապահակետային ծառայության բոլոր աշխատակիցները ամենշաբաթյա պարբերականությամբ մասնակցել են ծառայողական պարապմունքներին, 2011 թ. անց են կացվել վարժանքներ ՀՀ ոստիկանության զորքերի հետ համատեղ: Իսկ 2010 թ. ընթացքում դասընթացներ են անցկացվել նաև առանձին միջազգային կառույցների աջակցությամբ: ՀՀ ոստիկանության պետի 31.08.2011 թ. թիվ 2320-Ա հրամանով հաստատվել է «Զանգվածային անկարգությունների և այլ միջոցառումների ժամանակ բանակցությունների վարումը» և «Զանգվածային անկարգությունների և այլ միջոցառումների ժամանակ ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրումը» թեմաներով ուսումնական պարապմունքներ անց կացնելու ժամանակացույցը, համաձայն որի ՀՀ ոստիկանության կրթահամալիրում և Ոստիկանության Երևան քաղաքի ՊՊԾ գնդում անց են կացվել ուսումնական պարապմունքներ ոստիկանության 160-ից ավելի ծառայողների համար: ԵԱՀԿ-ի և ՀՀ ոստիկանության համագործակցության արդյունքում 3 ամսվա ընթացքում 2011 թ. հուլիսի 2-ից միջազգային փորձագետի կողմից ուսումնասիրվել է հասարակական կարգի պահպանության օրենսդրական և պրակտիկ փորձը:

[3] Առավել ճիշտ ձևակերպումը կլիներ իրավունքի իրականացման երաշխիքներ

27. Հարցաքննվող անձի իրավական պաշտպանվածության լրացուցիչ երաշխիքների ապահովում

Ըստ հաշվետվության, տեսաձայնագրման և հայելային սենյակներ են ստեղծվել միայն ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում (ԱՄՆ դեսպանության աջակցությամբ): Ոստիկանության տարածքային այլ մարմիններում նման սենյակների ստեղծման մասին տեղեկատվություն չկա, չնայած, ըստ հաշվետվության, նախատեսվում է նման սենյակներ ստեղծել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի և Շիրակի մարզային վարչության Գյումրիի բաժիններում: Քանի որ հստակեցված չէ, թե արդյոք բոլոր տարածքային մարմիններում և քննչական ապարատներում է նախատեսված հայելապատ սենյակների կահավորումը, դժվար է գնահատել նպատակի կատարումը:

28. Քաղաքացիների անձի և գույքի պահպանման ոլորտում առավել առաջադիմական մեթոդների և ձևերի ներդրում

Քաղաքացիների անձի և գույքի պահպանման ոլորտում առավել առաջադիմական մեթոդների և ձևերի ներդրման նպատակով նախատեսված է եղել ձեռք բերել և ներդնել քաղաքացիների բնակարանների և կազմակերպությունների գույքի, տրանսպորտային միջոցների պահպանման և ահազանգման տեխնիկական ժամանակակից սարքավորումներ և համակարգ: Ըստ հաշվետվության, այս նպատակի իրականացման ուղղությամբ ուսումնասիրվել են ՌԴ և ԵՄ ՆԳ մարմինների պահպանության ավտոմատացված տարբեր համակարգերի տեխնիկական հնարավորությունները, մշակվել է ՀՀ ոստիկանության պահպանության համակարգի զարգացման հայեցակարգ, որը հաստատվել է ՀՀ կառավարության 17.06.2011 թ. թիվ 23 արձանագրային որոշմամբ, որով հաստատվել է նաև հայեցեակարգից բխող միջոցառումների ծրագիրը: Ըստ հաշվետվության, հայեցակարգի շրջանակներում մշակվել է «Ոստիկանության պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրանից բխող «Ոստիկանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: *Այսպիսով, կարելի է ասել՝ հող է նախապատրաստվել միջոցառման իրականացման համար, սակայն բուն միջոցառումը, այսինքն՝ ժամանակակից սարքավորումների և համակարգերի ներդրումը չի իրականացվել:*

29. Ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող ծառայությունների որակի բարելավում

Այս նպատակին հասնելու համար նախատեսված է եղել կատարել մի շարք օրենսդրական բարեփոխումներ՝ մշակել «Զենքի մասին» նոր օրենքի նախագիծ, փոփոխություն և լրացում կատարել «ՀՀ տարածքում քաղաքացիական և ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին», ՀՀ կառավարության 26.10.1999 թ. թիվ 673 որոշման մեջ, փոփոխություն կատարել «ՆԳ մարմինների կողմից ՀՀ տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառության նկատմամբ իրականացվող վերահսկողության կարգի

մասին» ՀՀ ՆԳ նախարարի 15.03.2002 թ. թիվ 101 հրամանում, մշակել «ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարովի հիմունքներով դատվածության և արխիվային տվյալների մասին տեղեկանքների տրամադրման ծառայություն մատուցելու կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

30. Հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների (այդ թվում՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման առումով) իրականացման իրավական բազայի կատարելագործում

Ըստ հաշվետվության, ուսումնասիրվել է միջազգային առաջավոր փորձը, փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում, մշակվել են՝

«Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցը»,
«Հասարակական կարգը պահպանելիս և հասարակական անվտանգությունն ապահովելիս բանակցություններ վարելու վերաբերյալ ուղեցույցը»:

ՀՀ կառավարության 23.05.2011 թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների ցանկերը, ինչպես նաև հրազենը, ռազմամթերքը, հատուկ միջոցները և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակները սպառազինության մեջ ընդգրկելու, դրանք սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները և անհատական պաշտպանության միջոցները ոչնչացնելու կարգը»: Համաձայն կարգի՝ ցանկում կարող են ընդգրկվել միայն այն հատուկ միջոցները, որոնց վերաբերյալ նախապես առկա կլինի ՀՀ առողջապահության նախարարության որոշումը՝ տվյալ հատուկ միջոցի՝ մարդու նկատմամբ օգտագործելու թույլատրելիության մասին: Ըստ հաշվետվության, ՀՀ առողջապահության նախարարի հրամանը, որով կսահմանվի մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները, նախատեսվում է հաստատել մինչ 2012 թ. մարտի առաջին տասնօրյակը:

<u>Նշվածներից փոփոխություն է կատարվել միայն «ՀՀ տարածքում քաղաքացիական և ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության 26.10.1999 թ. թիվ 673 որոշման մեջ և ՀՀ կառավարության 25.11.2010 թ. թիվ 1561 որոշմամբ հաստատվել է օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար ՀՀ -ում դատվածության և հետախուզման առկայության մասին տեղեկանքների տրամադրման կարգը:</u> 2012 թ. մարտի 19-ին ընդունվել է «Զենքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը:

5 Քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացների հստակեցմանը, ոստիկանության կողմից իրականացվող միգրացիոն վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ

Քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացների հստակեցմանը, ոստիկանության կողմից իրականացվող միգրացիոն վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումների շրջանակներում նախատեսվել է իրագործել 4 նպատակ, որոնց իրագործմանն ուղղված գործողություններից բացի հաշվետվության մեջ պարունակվում են նաև այլ գործողությունների վերաբերյալ տեղեկություններ:

<u>Նպատակներ, որոնց իրագործման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ</u>

31. Ոստիկանության կողմից առանձին ծառայությունների մատուցման ժամանակակից չափանիշների ներդրում, տեխնիկական հագեցվածության ապահովում, աշխատանքների թափանցիկության ապահովում

Ըստ հաշվետվության, նշված նպատակով ԱՎ վարչությունում ներդրվել և կիրառվում է քաղաքացիների ընդունելության մեկ դահլիճի սկզբունքը:

Աշխատանքային սպասարկման պայմանների բարելավման նպատակով վերակառուցվել են ՀՀ ոստիկանության ԱՎՎ, Նոր-Նորքի անձնագրային բաժանմունքների շենքերը, Երևան քաղաքի և մարզային մի շարք անձնագրային ստորաբաժանումներում տեղադրվել են վճարային բանկային տերմինալներ: Երևան քաղաքի բոլոր անձնագրային ծառայություններում և ԱՎՎ-ում տեղադրվել են տեսադիտարկման համակարգեր (տեսախցիկներ), որոնց նպատակն է՝ վերահսկել անձնագրային ծառայությունների աշխատանքները իրական ժամանակի մեջ (on-line ռեժիմով): Քանի որ ծրագրով սահմանված չի, թե որ անձնագրային ստորաբաժանումներում պետք է տեղադրվեին վճարային բանկային տերմինալներ և որ անձնագրային բաժանմունքներն է նախատեսված եղել վերանորոգել, որքան ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ եղել վերանորոգման համար, դժվար է գնահատել, թե որքանով է իրականացվել գործողությունը: Հաշվետվության մեջ բացակայում է տեղեկավություն իրացված ֆինանսական միջոցների ծավալների և դրանց աղբյուրների մասին: Միևնույն ժամանակ նշված չէ ՀՀ օրենսդրությունը լուսաբանող ցուցատախտակներով և այլ անհրաժեշտ գույքով սպասասրահների կահավորման մասին: Բացի այն, որ ծրագրով նշված չէ, թե մասնավորապես որ անձնագրային ստորաբաժանումներն են կարիք ունեցել վերանորոգման, հաշվետվությունը չի ներառում նաև տեղեկատվություն, թե ինչպես են ընտրվել վերանորոգման ենթակա անձնագրային բաժանմունքների շենքերը: Ծրագրով

նախատեսված է եղել նաև աշխատանքի կազմակերպման նպատակով տեխնիկական հագեցվածության ապահովման իրականացում, ինչի վերաբերյալ հաշվետվությունը տեղեկատվություն ևս չի պարունակում:

Ըստ ծրագրի, «Ինտեգրված սահմանի կառավարման ծրագրի» շրջանակներում նախատեսված է եղել իրականացնել սահմանային անցակետերի տեխնիկական վերազինում, շենքային պայմանների բարելավում: Ըստ հաշվետվության, Բագրատաշեն սահմանային անցակետում ավելացվել է նոր տեխնիկապես հագեցված սենյակ, կառուցվել է ծածկ: Այրում սահմանային անցակետի ՀՀ ոստիկանության ԱՎՎ ծառայությանը տրամադրվել են տեխնիկական միջոցներ վիզաների տրամադրման գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով: ՀՀ բոլոր սահմանային անցակետերում տեղադրվել են վահանակներ, որոնց վրա զետեղված է ՀՀ պետական սահմանը հատող օտարերկրացիներին անհրաժեշտ տեղեկատվություն: Նշված գործողությունները իրականացվել են Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագրի աջակցությամբ: Հաշվետվության մեջ ներառված չէ տեղեկատվություն մյուս սահմանային անցակետերի վերազինման վերաբերյալ: ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքում տեղադրվել են «Օտարերկրացիների մասին», «Քաղաքացիության մասին» և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերը ռուսերեն և անգլերեն տարբերակներով: ԱԳՆ և ՀՀ սփյուռքի նախարարության կայքերում օրենսդրական ակտերը տեղադրելու նպատակով Ոստիկանության կողմից ուղարկվել է գրություն նշված նախարարություններին: <u>Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն նաև ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ում և դիվանագիտական (հյուպատոսական) հիմնարկներում տեսանելի վայրերում և կայքէջերում ՀՀ քաղաքացիության և օտարերկրյա քաղաքացիների մասին օրենսդրության առանձին դրույթները մեկնաբանող գործողությունների պարզեցված սխեմատիկ պատկերների (ալգորիթմի) զետեղման վերաբերյալ (չնայած դրանք արդեն իսկ տեղադրված են կայքէջում):</u>

2011 թվականի հոկտեմբեր ամսին Ոստիկանության համապատասխան իրավական ակտերով սահմանվել են անձնագրային գործողությունների կատարման համար ներկայացվող դիմումի, անձնական հաշվառման քարտի, անձին ժամանակավորապես տրվող ինքնությունը հաստատող փաստաթղթի օրինակելի ձևերը:

Ոստիկանության պետի հրամանով (03.02.2011թ. 159-Ա) 5-օրյա ժամկետ է սահմանվել անձին՝ բնակչության պետական ռեգիստրում փաստացի բնակության վայրի հասցեով հաշվառելու դեպքում անձի փաստացի բնակության հանգամանքը ոստիկանության տեղամասային տեսուչի կողմից պարզելու և անձնագրային ծառայությանը տեղեկացնելու համար: Նախկինում տվյալ գործողության համար որևէ ժամկետ սահմանված չի եղել:

Անձնագրային և վիզաների վարչության կողմից քաղաքացիներին ծառայություններ մատուցելու ընթացքում իրականացվող վարչարարությունն առավել արդյունավետ և գրագետ իրականացնելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ

ոստիկանության կրթահամալիրի աջակցությամբ՝ Անձնագրային և վիզաների վարչության ծառայողների համար սեմինար պարապմունքներ են անցկացվել ՀՀ Սահմանադրության, «Վարչական վարույթի և վարչարարության հիմունքների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև քաղաքացիների հետ շփվելու ընթացքում հոգեբանության վերաբերյալ թեմաներով:

32. Վիզաների և կացության կարգավիճակների ձեռքբերման ընթացակարգերի կատարելագործում և հստակեցում

Այս նպատակով կատարվել են փոփոխություններ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում, ստեղծվել է տեղեկատվական պորտալ հեռախոսահամարով, որին զանգահարելով՝ քաղաքացիները կարող են ստանալ ԱՎՎ ոլորտի օրենսդրության և հարակից այլ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով: Ստեղծվել է քաղաքացիություն և կացության կարգավիճակ ստանալու դիմումների ընթացքի վերաբերյալ էլեկտրոնային համակարգի միջոցով տեղեկատվություն ստանալու հնարավորություն: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվել է առանց մուտքի վիզայի ՀՀ ժամանելու իրավունք ունեցող օտարերկրացիների համար ՀՀ տարածքում մնալու առավելագույն՝ 180-օրյա ժամկետ, արտոնություն է սահմանվել «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում նշված պետությունների ազգությամբ հայ քաղաքացիների համար՝ նախատեսելով առանց հրավերի ՀՀ պետական սահմանային անցման կետերում մուտքի վիզայի տրամադրման հնարավորություն, կարգավորվել են վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անվավեր փաստաթղթերով օտարերկրացիների՝ ՀՀ-ից ելքին վերաբերող հարաբերությունները, հստակեցվել ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրման հիմքերը, ինչպես նաև վերացվել գործող օրենքում տեղ գտած բացերն ու հակասությունները, օրենքի որոշ հոդվածների ոչ հստակ ձևակերպումները՝ նպատակ ունենալով նվազեցնել կոռուպցիոն հնարավոր ռիսկերն օտարերկրացիների մասնակցությամբ ծագող հարաբերություններում: Միաժամանակ ՀՀ ոստիկանության պետի հրամանով օտարերկրացիների մասին ՀՀ օրենսդրության խախտումների համար վարչական տույժի ենթարկելու ոստիկանության տարածքային ստորաբաժանումների պետերին վերապահված լիազորությունը վերապահվել է ԱՎՎ սահմանային անցման կետերի պետերին, ինչի արդյունքում էականորեն կրճատվել են վարչարարության ժամկետները և օտարերկրացիների արդարացի դժգոհությունը. նախկինում խախտումն արձանագրում էին ԱՎՎ սահմանային անցման կետերի աշխատակիցները, իսկ վարչական տույժ նշանակելու մասին որոշումները կայացնում էին ոստիկանության տարածքային բաժնի պետերը:

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն ՀՀ կառավարության 04.04.2008 թ. «Այն պետությունների ցանկը հաստատելու մասին, որոնց քաղաքացիները ՀՀ մուտքի վիզա ստանալու համար կարող են դիմել միայն օտարերկրյա

պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ և հյուպատոսական հիմնարկներ և միայն հրավերի հիման վրա» թիվ 329-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու, «Կացության հատուկ կարգավիճակ ստանալու համար ներկայացվող փոստաթղթերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի կարգադրության նախագծի մշակման վերաբերյալ:

33. ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու գործընթացի պարզեցում և հստակեցում

Ըստ հաշվետվության, այս նպատակով փոփոխություններ և լրացումներ են կատարվել «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում, ՀՀ կառավարության 01.11.2007 թ. թիվ 1290-Ն որոշման մեջ, ՀՀ կառավարության 23.11.2007 թ. «ՀՀ քաղաքացիություն ստացող անձի երդման արարողակարգը սահմանելու մասին» թիվ 1390-Ն որոշման մեջ: ՀՀ կառավարությունը 23.06.2011 թ. ընդունել է թիվ 974-Ն որոշումը՝ «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ՀՀ քաղաքացու անձնագրի տրման, անձնագրի փոխանակման, անձնագրի վավերականության ժամկետի և օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետի երկարաձգման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 1998 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»:

34. ՀՀ քաղաքացիների ՀՀ-ից մեկնելու և ՀՀ մուտք գործելու հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում

Ըստ ծրագրի, այս նպատակով նախատեսված է եղել մշակել «ՀՀ քաղաքացիների ՀՀ-ից ելքի և մուտքի մասին» օրենքի նախագիծ: Ըստ հաշվետվության, նշված օրենքի նախագիծը մշակվել է, սակայն օրենքի նախագծի մշակման հետագա ընթացքի մասին որևէ տեղեկատվություն ներկայացված չէ:

Համապատասխան ցուցում է տրվել անձնագրային ծառայություններին՝ անչափահաս քաղաքացիների անձնագրերի՝ օտարերկրյա պետություններում վավերականության մասին նշումը նաև երեք տարուց պակաս, ըստ ծնողի նշած ժամկետի, կատարելու վերաբերյալ (բայց ոչ պակաս, քան մեկ տարի):

Ըստ հաշվետվության, կրճատվել է Անձնագրային և վիզաների վարչության կողմից անձնագրային գործողությունների կատարման ընթացքում պահանջվող փաստաթղթերի և գործողությունների ցանկը (օրինակ՝ վերացել են բնակչության պետական ռեգիստրում հաշվառվելու դեպքում քաղաքացիների կողմից տնային գիրք ներկայացնելու պահանջը, քաղաքացիների անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշում կատարելիս համապատասխան մատյաններում քաղաքացիների կողմից ստորագրելու անհրաժեշտությունը, օտարերկրյա պետություններում վավերականության վերաբերյալ նշում կատարելու,

ինչպես նաև անձնագրի ժամկետի երկարաձգման համար քաղաքացու կողմից դիմումներ ներկայացնելու պահանջը):

6 Նոր անձնագրային համակարգի ներդրման հետ կապված բարեփոխումներ

Նոր անձնագրային համակարգի ներդրման հետ կապված բարեփոխումների իրականացումը դեռևս ավարտված չէ: Ըստ հաշվետվության, նոր անձնագրային համակարգի շահագործումը նախատեսվում է 2012 թ. հունիսի 1-ից: Նախատեսվել է իրականացնել 2 նպատակ, որոնց կատարումը ընթացքի մեջ է:

<u>Նպատակներ, որոնց ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ</u>

35. Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրում

Այս նպատակով կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ և լրացումներ՝ 2011 թվականի նոյեմբերի 30-ին ընդունվել են «Նույնականացման քարտերի մասին»,

«ՀՀ քաղաքացու անձնագրի մասին», «Հանրային ծառայությունների համարանիշի մասին», «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին»,

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքները:

Օրենքներն ուժի մեջ են մտնելու 2012 թվականի հունիսի 1-ից: ՀՀ կառավարության 08.12.2011 թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 28-26 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 48 արձնագրային որոշմամբ հաստատվել են ՀՀ քաղաքացու էլեկտրոնային անձնագրի և նույնականացման քարտի արտաքին ձևերը: Կազմակերպվել է անձնագրեր և քարտեր արտադրող, ծրագրային ապահովում իրականացնող, անձնագրերի և քարտերի ձևակերպման համար սարքավորումների ձեռքբերման և տեղադրման նպատակով մրցույթը:

Հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման վերաբերյալ միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացվող առաջարկությունների ամփոփման, խորհրդատվություն ստանալու նպատակով միջազգային կառույցների հետ հանդիպումների կազմակերպման, սահմանային անցման կետերում անձնագիր կարդացող և ստուգող սարքավորումների ձեռքբերման և տեղադրման, կադրերի կրթության և

վերապատրաստման վերաբերյալ: Հաշվետվությունը չի պարունակում տեղեկություններ «Անհատական տվյալների մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

36. Բնակչության պետական ռեգիստրի, ընտրողների ռեգիստրի համակարգերի բարեփոխում

Այս նպատակով փոփոխություններ և լրացումներ են կատարվել՝

- «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքում,
- «ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 14.07.2005 թ. թիվ 1231-Ն որոշման մեջ, որի արդյունքում սահմանվել են հստակ ժամկետներ բնակչության պետական ռեգիստրում անհատական տվյալները մուտքագրելու, բնակչության պետական ռեգիստրից հաշվառման մասին տեղեկանքներ տրամադրելու համար, վերացել է հաշվառումից հանելու հասկացությունը (քաղաքացին, դիմելով նոր հաշվառման վայրի պետական ռեգիստրի ստորաբաժանում (անձնագրային բաժանմունք), ավտոմատ հանվելու է հին հաշվառումից), սահմանվել է բնակչության պետական ռեգիստրում հաշվառման հասցեների մասին ֆիզիկական անձանց տեղեկանքի ձևը՝ հերթական հաշվառման համարների առկայությամբ:

Ծրագրով նախատեսված չի, սակայն հաշվետվության մեջ ներկայացված է տեղեկատվություն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխութուն կատարելու մասին: Հաշվետվությամբ ներկայացված է տեղեկատվություն ընտրողներին քվեարկության օրվա, քվեարկության տեղի և ժամանակի մասին ծանուցելու նպատակով, ինչպես նաև ընտրողների ցուցակներն ինտերնետային տեղեկատվական համակարգում տեղադրելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման գործընթացի և համապետական ընտրությունների դեպքում ընտրողի հաշվառման վայրի ցուցակից ընտրողին ժամանակավորապես հանելու և փաստացի գտնվելու վայրի ընտրական տեղամասի լրացուցիչ ընտրացուցակներում ընդգրկելու գործընթացի ավտոմատացման մասին: Հաշվետվությունը չի պարունակում տեղեկություն «Ընտրողների ցուցակները էլեկտրոնային կրիչով կամ թղթային տարբերակով տրամադրելու դեպքում վճարի չափի սահմանման վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման վերաբերյալ: Հաշվետվությունը նաև չի պարունակում տեղեկատվություն ՀՀ կառավարության 29.12.2005 թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներին համայնքների հասցեների համապատասխանեցնելու նպատակով քաղաքացիների անհատական հաշվառման տվյալների կուտակման աղբյուր հանդիսացող պետական կառավարման մարմինների տվյալների փոխանակման ստանդարտների, ծրագրային միջոցների մշակման (անկախ տվյալների ձևաչափերից և կազմավորման միջավայրից), էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման հնարավորության ապահովման վերաբերյալ:

7 Թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ

Թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումների շրջանակում նախատեսվել է իրականացնել 7 նպատակ: Նախատեսված 7 նպատակներից տեղեկատվություն է ներկայացված միայն 5-ի վերաբերյալ:

<u>Նպատակներ, որոնց իրագործման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ</u>

37. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործում և դրանց համապատասխանեցում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին

<u>Հաշվետվության մեջ ներառված չէ տեղեկատվություն</u> համապատասխան ոլորտի միջազգային պայմանագրերի, այդ թվում ՄԱԿ-ի կոնվենցիաների դրույթների վերլուծության, ՀՀ իրավական համակարգում դրանց առավել ամբողջական ընդգրկման և կենսագործման ապահովման և Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող ՀՀ ներպետական իրավական ակտերի համակարգային վերլուծությունների իրականացման վերաբերյալ: Ըստ հաշվետվության, կատարվել են մի շարք փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում, պրեկուրսորների ապօրինի շրջանառության առանձին դեպքերի քրեականացման նպատակով, ինչով օրենսդրության դրույթները համապատասխանեցվել են ՄԱԿ-ի չափորոշիչներին, պրեկուրսորների ապօրինի շրջանառության առանձին դեպքերի քրեականացման նպատակով: Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն ՀՀ ներպետական իրավական ակտերում, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական հայերեն տեքստերում թմրամիջոցներին և հոգեմետ նյութերին առնչվող հասկացությունների միասնականացման վերաբերյալ:

38. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների Հայաստանի Հանրապետության ներթափանցումը կանխելու ուղղությամբ միջազգային համագործակցության ակտիվացում

Այս նպատակով ծրագրով նախատեսված է եղել կնքել միջպետական համաձայնագրեր (նախ և առաջ հարևան երկրների հետ) ուղղված օտարերկրյա պետություններից ՀՀ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի ներմուծման կանխմանը: Ըստ հաշվետվության, 2010 թ. հունիսի 10-ին Թբիլիսիում ՀՀ-ի, Վրաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության և UNDP-ի միջև ստորագրվել է «Թմրամիջոցների հսկողության և փողերի լվացման դեմ գործունեությունում համագործակցության» փոխըմբռնման հուշագիր:

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների վերահսկելի մատակարարումների և ստուգողական գնումների իրականացման կարգը սահմանելու մասին» մի շարք գերատեսչությունների համատեղ հրամանի նախագծի մշակման, «ՀՀ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների արտահանումն ու ներմուծումը թույլատրող ՀՀ կառավարության լիազոր պետական կառավարման մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ: Հաշվետվությունը ներկայացնում է տեղեկատվություն «Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի» ծրագրի շրջանակներում «Զվարթնոց» օդանավակայանում «Օդանավակայաններում թմրամիջոցների դեմ պայքարի պրոֆիլավորման» բաժնի հնարավորությունների օգտագործում 2011 թվականի փետրվարի 2-ին ընդունվել է նաև ՀՀ ոստիկանության պետի և ՊԵԿ նախագահի թիվ 287-Ա/37-Ա համատեղ հրամանը՝ օդանավակայանում համատեղ խմբերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ միասնական պայքար իրականացնելու համար:

39. Ազատազրկման վայրերում գտնվող դատապարտյալների շրջանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության նախականխում

Այս նպատակով լրացում է կատարվել «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնահարցերից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման մեջ՝ ազատազրկման վայրերում թմրակախվածության համար հարկադիր բուժում անցնող, ինչպես նաև դիսպանսերային հսկողության տակ գտնվող թմրամոլների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ոստիկանությանը տրամադրելու գործընթացը կանոնակարգելու նպատակով:

Միջոցառումների շարքում նախատեսված է եղել ազատազրկման վայրերում գտնվող թմրամոլների բժշկական վերականգնողական աշխատանքների կատարելագործում: Ըստ հաշվետվության, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի 2011 թ. փետրվարի 14-ի թիվ 23-Լ հրամանով ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում ներդրվել է մեթադոնային փոխարինող բուժում:

40. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտում ընդգրկված մարմինների նյութատեխնիկական բազայի բարելավում

Այս նպատակով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի օժանդակությամբ ձեռք են բերվել կասկածվող անձանց օրգանիզմում թմրամիջոցների առկայության նախնական

ստուգման, ինչպես նաեւ թմրամիջոցի տեսակը տեղում որոշող էքսպրես թեստերի նոր խմբաքանակ, որը պետք է օգտագործվի ՀՀ ոստիկանության իրավասու ստորաբաժանումների կողմից թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարում: Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն սահմանային անցակետերում թմրամիջոցներ հայտաբերող սարքերի ձեռքբերման և ներդրման, թմրամիջոցների, այդ թվում՝ սինթետիկ ծագում ունեցող, հոգեներգործուն նյութերի, դեղամիջոցների որակական և քանակական քիմիական համալիր հետազոտություններ անցկացնելու նպատակով ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական ծառայության վերազինման, Հանրապետության մարզերում ոստիկանության շնաբուծական ստորաբաժանումների ստեղծման վերաբերյալ: Չի պարունակում տեղեկատվություն նյութատեխնիկական բազայի բարելավման վերաբերյալ քանակական ցուցանիշների մասին, նախատեսված ֆինանսական միջոցների և նրանց իրացման ծավալների վերաբերյալ:

42. *Թրաֆիքինգի և հարակից հանցագործությունների դեմ պայքարի օրենսդրական բարեփոխում*

Այս նպատակով 01.03.11 թ ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Հաշվետվության մեջ ներկայացված չէ փոփոխությունների և լրացումների բովանդակությունը: Պարզ չէ, թե ինչ վերլուծությունների հիման վրա և կոնկրետ ինչ փոփոխություններ է նախատեսվել կատարել ՀՀ քրեական օրենսգրքում և մասնավորապես որ խմբերի իրավունքների պաշտպանության նպատակով:

<u>Նպատակներ, որոնց վերաբերյալ հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում</u>

41. *Մարդկանց առևտրի զոհերի պաշտպանության և ռեաբիլիտացիայի մեխանիզմի կատարելագործում*

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն «ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների և ԿՀԴՊԳՎ միջև թրաֆիքինգի զոհերի ուղղորդման և թրաֆիքինգի մասին տեղեկատվության փոխանակման կարգը սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակման վերաբերյալ:

43. *Ռիսկային բիզնես ոլորտների կանոնակարգում (աշխատանքի տեղավորման, տուրիստական գործակալությունների, հյուրանոցների, սաունաների, գիշերային ակումբների գործունեության)*

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն «ՀՀ լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների նախագծերի մշակման մասին:

8 Կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման, կիբեռհանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ

Կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման, կիբեռհանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումների շրջանակներում նախատեսված 7 միջոցառումներից 3-ի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում:

Նպատակներ, որոնց իրագործման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ

44. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված մեթոդների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում

Այս նպատակի իրագործման ուղղությամբ նախատեսվել է մշակել «Վերահսկելի մատակարարում և գնում» օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդի իրականացման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Որպես այս նպատակի իրագործմանն ուղղված գործունեություն ներկայացված է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ գաղտնի հիմունքներով համագործակցության և գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 3-ՆՀԳ և 2010 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման և արդյունքների փաստաթղթավորման կարգը սահմանելու մասին» թիվ 2-ՆՀԳ հրամանների մշակումը և ընդունումը: Դրանց ընդունման և գործողության մեջ դնելու մասին տեղեկատվություն չի ներկայացվում: Ըստ հաշվետվության, մշակվել և արտաքին շրջանառության մեջ են դրվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների 2 նախագիծ (կաշառք ստանալու և տալու նմանակման և հեռախոսային խոսակցությունների վերահսկման ՕՀՄ-ներին վերաբերյալ) և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի թիվ 845-ՆՀԳ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից օպերատիվ հաշվառման գործեր կազմելու, վարելու, կարճելու, հաշվառման գործերի և դրանցով մշակվող, ստուգվող անձանց գրանցման և օպերատիվ հաշվառման կարգը»:

«Վերահսկելի մատակարարում և գնում» օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդի իրականացման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման մասին հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում:

45. Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործում

Ըստ հաշվետությամբ ներկայացված տեղեկատվության, ուսումնասիրվել է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի առաջատար երկրների փորձը, և ոստիկանության համապատասխան աշխատակիցները անցել են վերապատրաստման դասընթացներ: Ներկայացված չէ տեղեկատվություն ուսումնասիրության արդյունքների մասին և թե ոստիկանության քանի աշխատակից է մասնակցել վերապատրաստման դասընթացների: Նկատենք, որ ծրագրով ներկայացված չի եղել, թե ոստիկանության քանի աշխատակից պետք է մասնակցեն վերապատրաստման դասընթացների և քանիսն են մասնակցել:

Ըստ հաշվետվության, մշակվել է «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման» ազգային ծրագիրը, որը հաստատվել է ՀՀ Նախագահի 2011 թ. դեկտեմբերի 29-ի թիվ ՆԿ-232-Ն կարգադրությամբ:

Հաշվետվությունը չի ներկայացնում տեղեկատվություն Եվրոպական Միության անդամ երկրների՝ ոստիկանության կառույցների հետ համաձայնագրերի կնքման վերաբերյալ:

Ծրագրով չնախատեսված, սակայն իրականացված միջոցառումների շարքում կարելի է նշել ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծված Պլաստիկ քարտերի և այլ վճարման միջոցների կեղծարարության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման միջգերատեսչական հանձնաժողովում «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, որը ներկայացվել է ՀՀ կառավարությանը:

46. *Կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացում*

Ըստ հաշվետվության, ուսումնասիրվել է կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի (լատենտայնության նվազեցման) միջազգային փորձը: Անց են կացվել կոռուպցիոն բնույթի հանցատեսակների դեմ պայքարի վերաբերյալ դասընթացներ:

Ի դեպ ծրագրով նույնպես ներկայացված չէ տեղեկատվություն դասընթացների մասնակիցների, թեմաների և դասընթացավարների մասին: Տվյալ դեպքում հաշվետվությունը չի մատնանշում, թե մասնավորապես, ինչ եզրակացություններ են կատարվել ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում և ինչ իրավական ակտերի անհրաժեշտություն է առաջացել: Դասընթացների անցկացումը նույնպես նախատեսված է եղել իրականացնել նաև նոր աշխատանքների ձևերի ներդրմամբ: Հաշվետվությունը չի ներառում տեղեկատվություն, թե մասնավորապես ինչ չափանիշներով և ինչպես են կատարելագործվել ուսումնաթեմատիկ պլանները, ներդրվել են, թե ոչ աշխատանքների նոր ձևեր և մեթոդներ և ինչ ձևեր և մեթոդներ են ներդրվել:

Հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում «Ֆիզիկական և

իրավաբանական անձանց տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելու և շահագործելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման մասին, տեղեկատվական համակարգի ստեղծման մասին, որում կինտեգրվեն ֆիզիկական և իրավաբանական անձանց տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվական շտեմարանները (անշարժ գույքի կադաստր, ձեռնարկությունների պետական ռեգիստր, հարկային և մաքսային ծառայություններ, պետական գնումներ, լիցենզիա տրամադրող մարմիններ, մրցութային և դրամաշնորհային կազմակերպություններ):

50. Կիբեռհանցագործությունների դեմ պայքարի բարելավում

Ըստ հաշվետվության, ՀՀ ոստիկանության բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի կողմից կազմակերպվել է համաժողով՝ Հայաստանի Հանրապետությունում կիբեռանվտանգության, կիբեռհանցագործության ընթացիկ իրավիճակի ուսումնասիրություն թեմայով, որին մասնակցել են նաև պետական և ոչ պետական այլ մարմինների աշխատակիցներ), բարձր տեխնոլոգիաների ոլորտում առաջատար կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցիչներ: Հաշվետվությամբ տեղեկատվություն չի ներկայացվում կիբեռհանցագործությունների դեմ պայքարում ինտերնետ և կապի ծառայություն մատուցող օպերատորների և իրավապահ մարմինների միջև փոխհամագործակցության կանոնակարգմանն ուղղված օրենսդրական ակտերի փաթեթի մշակման, համատեղ հուշագրերի ստորագրման մասին: Չի ներկայացվում նաև տեղեկատվություն ինտերնետային կապի օգտագործմամբ հանցագործությունների հայտնաբերման, բացահայտման, քննության միջազգային փորձի ուսումնասիրման աշխատանքների, համապատասխան առաջարկությունների մշակման վերաբերյալ: Ըստ հաշվետվության, ինտերնետում անօրինական բովանդակության հաղորդումների գնահատման կենտրոնական կետի ստեղծման ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացման նպատակով ԱՄՆ դեսպանության կողմից ԿՀԴՊԳՎ Բարձր տեխնոլոգիաների դեմ կատարվող հանցագործությունների բաժնին ցուցաբերվել է տեխնիկական աջակցություն, մասնավորապես՝ հատկացվել է համապատասխան համակարգչային տեխնիկա, տեղեկատվական համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ սերվեր և կոմունիկացիոն այլ սարքեր (82.000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով): Ընդ որում, սա եզակի դեպքերից է, երբ հաշվետվության մեջ ներկայացված է գործողության կատարման համար իրացված ֆինանսական միջոցների մասին տեղեկատվություն:

Ծրագրով նշված չի եղել, թե մասնավորապես որ օրենքներում է հարկավոր մշակել լրացումներ և փոփոխություններ, սակայն հաշվետվության մեջ նշվում է, որ մշակվել են «Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծեր: Ծրագրով

նախատեսված է եղել Ինտերնետում անօրինական բովանդակության հաղորդումների գնահատման կենտրոնական կետի ստեղծում, սակայն հաշվետվության մեջ նշվում է, որ ԱՄՆ-ի դեսպանատան կողմից հատկացվել են համակարգչային տեխնիկա և կոմունիկացիոն այլ սարքեր տեղեկատվական համակարգ ստեղծելու համար, ԵԱՀԿ գրասենյակը լուծել է իրավական խնդիրները:

<u>Նպատակներ, որոնց վերաբերյալ հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում</u>

Հաշվետվությունը որևէ տեղեկատվություն չի պարունակում՝

47. *կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեպքերով հետաքննության մարմնին դատարանի որոշման հիման վրա բանկային և վարկային կազմակերպություններից անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման գործընթացի կանոնակարգման նպատակով* ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Բանկային գաղտնիքի մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքների համապատասխանեցման վերաբերյալ,

48. *մտավոր սեփականության ոլորտում իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված* ՀՀ քրեական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Նշված օրենքների նախագծերը արդեն իսկ դրվել են հանրային քննարկման ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջում:

Մտավոր սեփականության ոլորտում իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվել է փոփոխություններ և լրացումներ կատարել: Հաշվետվության մեջ չի պարունակվում տեղեկատվություն նշված օրենքների նախագծերի մշակման վերաբերյալ:

49. *Անօրինական միգրացիայի հակազդման և կանխարգելման աշխատանքների բարելավման նպատակով* անօրինական միգրացիայի դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրման, առաջարկությունների և «Հայաստանում միգրացիայի ոլորտի բարեփոխումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման մասին:

Հաշվետվությունը որևէ տեղեկատվություն չի պարունակում կազմակերպված հանցավորության այն հիմնական դրսևորումների դեմ պայքարի շրջանակներում իրականացվող միջոցառումների մասին, ինչպիսին են՝ կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեպքերով հետաքննության մարմնին դատարանի որոշման հիման վրա բանկային վարկային կազմակերպություններից անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման գործընթացի կանոնակարգման, մտավոր սեփականության ոլորտում իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, անօրինական միգրացիայի հակազդման և կանխարգելման

աշխատանքների բարելավման նպատակների շրջանակներում նախատեսված միջոցառումները: Հատկանշական է՝ հաշվետվությունը չի պարունակում նաև բացատրություն, թե որոնք են հանդիսանում այս կամ այն միջոցառման իրականացման խոչընդոտները:

9 Այլ մարմինների եւ կազմակերպությունների հետ համագործակցության բարելավմանն ուղղված բարեփոխումներ

Այլ մարմինների եւ կազմակերպությունների հետ համագործակցության բարելավմանն ուղղված բարեփոխումների շրջանակներում նախատեսված 5 նպատակներից 3-ի վերաբերյալ հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում:

Նպատակներ, որոնց իրագործման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ

52. Հանցավորության դեմ պայքարի ոլորտում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության կատարելագործում

Հաշվետվության մեջ ներկայացված է տեղեկատվություն, համաձայն որի՝

- կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ անչափահասների ու կանանց հիմնահարցերով զբաղվող մասնագետների հետ,
- իրականացվել են փորձագիտական աշխատանքներ ընտանեկան բռնության ենթարկված կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության ճգնաժամային կենտրոնների հետ համագործակցության հիմնահարցերով:

Հաշվետվությամբ չի ներկայացվում տեղեկատվություն, թե քանի հանդիպում և քննարկում է կազմակերպվել, ինչ փորձագիտական աշխատանքներ են իրականացվել, ինչ փորձագետների ներգրավմամբ, ինչ թեմաներով, ինչ արդյունքներով:

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն հանցավորության դեմ պայքարի ոլորտում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության կատարելագործման նպատակով միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծման, Երևանում, Վանաձորում, Կապանում, Գավառում ոստիկանության անչափահասների գործերով մասնագետների վերապատրաստման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհամագործակցության ոլորտում հուշագրերի կնքման վերաբերյալ:

Հետաքրքիր է, որ 2010-2011 թթ. ծրագրով նախատեսված է եղել ընդլայնել շեղվող վարքագիծ դրսևորող անչափահասների սոցիալական վերականգնողական

համայնքային կենտրոնների ցանցը, մինչդեռ հաշվետվության մեջ նշվում է, որ 2006-2010 թթ. Երևան, Վանաձոր, Գյումրի, Ալավերդի, Իջևան, Ճամբարակ և Թալին քաղաքներում բացվել են վերականգնողական կենտրոններ:

53. Հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային կառույցների, օտարերկրյա պետությունների ոստիկանական մարմինների հետ փոխհամագործակցության ակտիվացում, աշխատանքային նոր մեթոդների և ձևերի ներդրում

Ըստ հաշվետվության, այս նպատակով կնքվել են պայմանագրեր և հուշագրեր ՌԴ-ի, Իտալիայի, Լեհաստանի, Գերմանիայի և Իրանի ՆԳՆ-ների հետ: Հաշվետվության մեջ նշված է, որ 2010 թվականի ընթացքում շարունակվել է համագործակցությունը առանձին միջազգային կազմակերպությունների և այլ երկրների համապատասխան գերատեսչությունների հետ, մինչդեռ չի ներկայացում տեղեկատվություն ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների հետ անօրինական միգրացիայի բնագավառում կազմակերպվող դասընթացներին և խորհրդակցություններին ոստիկանության ծառայողներին ներգրավման, փորձի փոխանակման և համագործակցության նոր ուղիների մշակման նպատակով եվրոպական պետությունների իրավապահ մարմինների հետ գործնական հանդիպումների կազմակերպման վերաբերյալ:

Հաշվետվությունը նաև չի պարունակում տեղեկատվություն

- «Զանգ» իրավական քարոզչության ծրագրի շրջանակներում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով աշխատակիցների վերապատրաստման, 1998 թ. հոկտեմբերի 2-ին Կերկիրայում ստորագրված «ՍԾՏՀ մասնակից պետությունների կառավարությունների միջև հանցավորության, մասնավորապես՝ դրա կազմակերպված ձևերի դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագրին կից լրացուցիչ արձանագրության հիման վրա ստեղծված կապի սպաների գործունեության արդյունավետության բարձրացման,
- Ինտերպոլի Գլխավոր Ասամբլեայի նստաշրջանների, եվրոպական տարածաշրջանային կոնֆերանսներին ԱԿԲ-ների պետերի վեհաժողովներին, Եվրոպական կապի սպաների աշխատանքային հանդիպումներին մասնակցության,
- Ինտերպոլի հեռահաղորդակցման I-24/7 համակարգին ՀՀ սահմանային անցակետերում ծառայություն կատարող վերակարգերի,
- ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների ինտեգրման վերաբերյալ:

Ծրագրով նախատեսված չի եղել, սակայն ըստ հաշվետվության նախապատրաստվել է «Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (Ինտերպոլի) ճամփորդական փաստաթուղթը ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով կկարգավորվի ճամփորդական փաստաթղթերը կրող անձանց ՀՀ պետական սահմանը առանց մուտքի վիզայի հատելու հնարավորությունը: Սակայն հաշվետվությամբ չի տեղեկացվում, թե երբ է այդ նախագիծը ընդունվելու:

Նպատակներ, որոնց վերաբերյալ հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն՝

51. *Հանրապետության իրավապահ մարմինների հետ համագործակցության բարելավմանն ուղղված նպատակով*

- իրավապահ մարմինների և շահագրգիռ այլ գերատեսչությունների տվյալների բազաները մեկ միջավայրում ինտեգրման նպատակով էլեկտրոնային թվային ստորագրության կիրառմամբ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման
- միջոցառումներ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված մարմինների համար բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից համակարգչային կապի միջոցով տեղեկատվության ստացման հնարավորության ընձեռման նպատակով միջոցառումների ձեռնարկման մասին:

54. Հանցավորության դեմ պայքարի ոլորտում առաջավոր փորձ ունեցող երկրների ոստիկանական ուսումնական հաստատությունների հետ կադրերի վերապատրաստման և փորձի փոխանակման ապահովման ուղղությամբ

- Համապատասխան փորձագետների կողմից ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունում ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության հիմնահարցերով դասընթացների կազմակերպման
- Զանգվածային անկարգությունների կանխման ուղղությամբ միջազգային փորձի ուսումնասիրում, մասնագիտական գիտական գիտելիքների կատարելագործման (ԱՄՆ, Ֆրանսիայի կառավարությունների, ԵԱՀԿ աջակցությամբ)
- Ինտերպոլի Գլխավոր Քարտուղարությունում ՀՀ Ինտերպոլի ԱԿԲ ծառայողների վերապատրաստման ապահովման
- Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը սահմանային անցակետերում առավել արդյունավետ իրականացնելու համար ՌԴ թմրամիջոցների վերահսկման դաշնային ծառայությունում օպերլիազորների վերապատրաստման մասին:

55. Ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում տեղեկատվության և միջազգային փորձի փոխանակման նպատակով

- ԱՄՆ և եվրոպական երկրների ոստիկանական մասնագիտացված ծառայությունների փորձի ուսումնասիրման, կադրերի վերապատրաստման,

- ՀԱՊԿ անդամ պետությունների մասնագիտացված ստորաբաժանումների հետ հակաահաբեկչական համատեղ վարժանքների պարբերաբար կազմակերպման և իրականացման մասին:

10 Ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ

Ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված բարեփոխումների շրջանակներում նախատեսվել է իրականացնել 8 նպատակ, որոնցից 2-ի վերաբերյալ հաշվետվության մեջ տեղեկատվություն չի պարունակվում:

<u>Նպատակներ, որոնց իրագործման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ</u>

57. Ոստիկանություն-քաղաքացի կապի ամրապնդում, գործունեության թափանցիկության ապահովում

Ըստ հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության ՀՀ ոստիկանության ինտերնետային պաշտոնական կայքեջում ստեղծվել է քաղաքացիների հետ ամենօրյա հարց-պատասխանի ծառայություն:

Ըստ հաշվետվության, ՀՀ ոստիկանության պետի 21.11.2011 թ. «Ոստիկանություն-հասարակություն կապն ամրապնդելու և հասարակական կարգի պահպանման որակը բարելավելու մասին» թիվ 3302-Ա հրամանով հանձնարարվել է բնակչության հետ անմիջականորեն շփվող ոստիկանության ծառայողներին առավել շատ ժամանակ անցկացնել սպասարկվող տարածքներում և իրենց աշխատանքում օգտագործել համայնքի բնակչության ներուժը:

58. Ոստիկանության ստորաբաժանումների աշխատանքի և քաղաքացիների սպասարկման պատշաճ որակի ապահովում

Հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2010 թվականին ԱԺ-ն ընդունել է օրենքների փաթեթ, որով սահմանվում է քաղաքացիական հատուկ ծառայություն անցնող ոստիկանության ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքը և աշխատավարձի չափը Ոստիկանության ստորաբաժանումների աշխատանքի և քաղաքացիների սպասարկման պատշաճ որակի ապահովման նպատակով: Հաշվետվությունը չի ներկայացնում տեղեկատավություն, թե մասնավորապես ինչ օրենքներ են ընդունվել և ինչ լրացումներն փոփոխություններ են կատարվել գործող օրենսդրության մեջ:

59. ՀՀ ոստիկանության մարմիններում և ստորաբաժանումներում քաղաքացիների դիմումների և բողոքների հաշվառման և վերահսկողության միասնական համակարգի ստեղծում

Հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ոստիկանության պետի կողմից ընդունվել է ՀՀ ոստիկանության պետի 2010 թվականի օգոստոսի 17-ի «ՀՀ ոստիկանության համակարգում ստացված դիմումների, բողոքների հաշվառման և դրանց արդյունքների վերաբերյալ միասնական հաշվետվություն ներկայացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 1747-Ա հրամանը: Ծրագրով նախատեսվել է նաև մշակել և ներդնել համակարգչային ծրագիր, որի մասին հաշվետվությունը տեղեկատվություն չի ներկայացնում:

60. Ոստիկանության գործունեության արդյունավետության գնահատման նոր, առավել առաջադիմական չափանիշների ներդրում

Ըստ հաշվետվության, այս նպատակի իրականացման համար ընդունվել է ՀՀ ոստիկանության պետի 2011 թվականի հուլիսի 6-ի թիվ 1660-Ա հրամանը, որով հաստատվել են ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների գործունեության գնահատման չափանիշները:

61. Ոստիկանության ծառայողի կողմից օրինականության պահպանման ապահովում

Ըստ հաշվետվության, այս նպատակի իրականացման համար լրացումներ են կատարվել «Ոստիկանությունում ռոտացիայի ենթակա ծառայողների ցանկը և ռոտացիայի իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 06.11.2009 թ. թիվ 1254-Ն որոշման մեջ, որով ռոտացիայի ենթակա ծառայողների ցանկում ընդգրկվել են նաև ոստիկանության տարածքային բաժինների ու բաժանմունքների պետերի, ոստիկանության տարածքային քննչական բաժինների և բաժանմունքների պետերի, ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական բաժանմունքների պետերի և ավագ տեսուչների պաշտոնները: *<u>Հաշվետվության մեջ ներառված չէ տեղեկատվություն ոստիկանության ծառայողների ռոտացիայի սկզբունքի արդյունավետության գնահատման և ծրագրով նախատեսված ոստիկանության տարբեր պաշտոնների խմբերի համար կոռուպցիայի դեմ պայքարի ուղեցույցերի մշակման վերաբերյալ:</u>*

62. Հանցագործությունների մասին հաղորդումների պատշաճ գրանցման, արագ արձագանքման և ընթացքի լուծման արդյունավետ մեխանիզմի ներդրում

Հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն ներդրվել է «AVAYA» տեսակի ժամանակակից համակարգ, աշխատանքներ են տարվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կազմում օպերատիվ արձագանքման կենտրոնի ստեղծման ուղղությամբ:

Ծրագրով նախատեսված է եղել մշակել «Հանցագործությունների գրանցման և հաշվառման միասնական կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, սակայն հաշվետվությունը տեղեկատվություն չի ներկայացնում դրա կատարման մասին:

63. ՀՀ ոստիկանության գործունեության յուրաքանչյուր ոլորտի համար հասարակայնության և զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության բարելավում

Հաշվետվությունը ներկայացնում է տեղեկատվություն ՀՀ ոստիկանապետի 2010 թվականի հոկտեմբերի 1-ի «ՀՀ ոստիկանության մարզային վարչություններում հասարակայնության հետ կապի պատասխանատուներ նշանակելու մասին» թիվ 2050-Ա հրամանի մասին, որով նշված պարտականությունը դրվել է մարզային վարչությունների պետերի ծառայության գծով տեղակալների վրա:

Ըստ հաշվետվության, ՀՀ ոստիկանության պետի 18.03.2011 թ. թիվ 535-Ա հրամանով հաստատվել է ոստիկանության ծառայողների կողմից զանգվածային լրատվության միջոցների հետ շփվելու ուղեցույցը: Ըստ հաշվետվության, Ոստիկանության և հասարակության միջև կայուն կապ հաստատելու, հասարակական կարգի պահպանման գործում հասարակությանը ներգրավելու նպատակով ՀՀ տարածքում անց են կացվել շուրջ 400 հանդիպումներ ազգաբնակչության հետ: Հաշվետվությամբ չի ներկայացվում, թե որտեղ են այդ հանդիպումները կազմակերպվել և որոնք են այդ հանդիպումների արդյունքները, նաև արդյոք դրանք կրելու են շարունակական բնույթ:

Միևնույն ժամանակ հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն

- ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջում իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման, հասարակական կարգի պահպանման գործում հասարակայնության ներգրավմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրման և ներդրման,
- ՀՀ ոստիկանությանը կից հասարակական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրային միջոցների իրականացման,
- Ոստիկանության ծառայողների կողմից կատարված օրինախախտումների դեպքերով ծառայողական քննությունների արդյունավետության բարձրացման և արդյունքների հրապարակայնության ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին:

<u>Նպատակներ, որոնց վերաբերյալ հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում</u>

Հաշվետվությունը չի պարունակում տեղեկատվություն հետևյալ միջոցառումների կատարման մասին

- «Թեժ գծի» գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով «Կազմ-հաստիքային փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակման վերաբերյալ, ուղղված «Թեժ գծով» ստացվող

տեղեկատվության մշակման, ամփոփման և ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ վերահսկողություն իրականացնող ստորաբաժանման ստեղծման

- Ոստիկանության ստորաբաժանումների աշխատանքի և քաղաքացիների սպասարկման պատշաճ որակի ապահովման նպատակով ոստիկանության պաշտոնական կայքէջում քաղաքացիներին մատուցվող ծառայությունների համար դիմումների ձևերի տեղադրման, դիմումները ինտերնետ համացանցով ներկայացնելու և այլ եղանակներով ներկայացման ու ընթացք տալու մատչելի համակարգի ներդրման վերաբերյալ:

11 Ոստիկանությունում ծառայող (աշխատող) անձանց սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ

Հաշվետվությունը ներկայացնում է տեղեկատվություն Ոստիկանությունում ծառայող (աշխատող) անձանց սոցիալական եւ իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումների շրջանակում բոլոր 4 նպատակների իրականացման մասին:

<u>Նպատակներ, որոնց իրագործման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ</u>

64. Ոստիկանության անձնակազմի սոցիալական լրացուցիչ երաշխիքների ապահովում:

Այս նպատակով ըստ հաշվետվության, մշակվել է «Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձանց հաշվառման, հերթագրման գործընթացը կազմակերպելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագիծ, սակայն հաշվետվությունը չի ներկայացնում տեղեկատվություն, թե նախագիծը երբ է ընդունվելու և դրվելու գործողության մեջ: Ըստ հաշվետվության, 2011 թ. հուլիսի 7-ի ՀՀ ոստիկանության պետի թիվ 23-Ց ցուցումով աշխատանքներ են տարվել ոստիկանության զինծառայողների բնակարանային ապահովվածությունը գնահատելու ուղղությամբ: Աշխատանքներն ավարտվել են 2011 թ. հոկտեմբերի 1-ին: Գնահատման արդյունքների մասին հաշվետվությունը որևէ տեղեկատվություն չի ներկայացնում:

65. Ոստիկանությունում ծառայող (աշխատող) անձանց, նրանց ընտանիքի անդամների և կենսաթոշակառուների բուժման և հանգստի կազմակերպման բարելավման նպատակով ըստ հաշվետվության, Ոստիկանությունում ծառայող անձանց, նրանց ընտանիքի անդամների և կենսաթոշակառուների բուժման և հանգստի կազմակերպման բարելավման հետ կապված աշխատանքները ընթացքի մեջ են: Այդ կապակցությամբ 2010 թ. բյուջեից հատկացվել է 11 մլն դրամ, իսկ ՄԺԾԾ նախատեսվել է 2011 թ.՝ 15 մլն, 2012 թ.՝ 18 մլն, 2013 թ.՝ 21.6 մլն դրամ:

Հաշվետվությունը տեղեկատվություն չի պարունակում հետևյալ միջոցառումների մասին՝

- Բուժծառայության կարողությունների, մատուցվող ծառայությունների ոլորտի ընդլայնում
- Թանկարժեք վիրահատություններ և բուժում նախատեսող դեպքերում ծառայողների կատարած ծախսերի փոխհատուցման հնարավորությունների ուսումնասիրում և իրականացում:

66. Ոստիկանության անձնակազմի իրավական պաշտպանության բարելավում

Ոստիկանության անձնակազմի իրավական պաշտպանության բարելավման նպատակով ընդունվել են օրենքներ՝ ուղղված «ոստիկանությունից ազատում» կարգապահական տույժի կիրառման հիմքերի, աշխատանքից ազատման վերաբերյալ վարչական բողոքարկման ժամկետների հստակեցմանը, տույժի տեսակների ցանկից հանվել է կարգապահական կալանքը: 2012 թ. մարտի 19-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ստեղծել ոստիկանության ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնող մշտական գործող հանձնաժողով: ՀՀ ոստիկանության պետի կողմից 08.07.2011 թ. ընդունվել է «Ոստիկանությունում գենդերային խնդիրներին ուղղված, մասնավորապես կանանց պատշաճ ընդգրկվածություն ապահովելու նկատառումներով համապատասխան ծրագրերի մշակման միջոցառումների պլանը հաստատելու մասին» թիվ 1696-Ա հրամանը:

67. Ոստիկանության անձնակազմի համար աշխատանքային պատշաճ պայմանների ապահովում

Ոստիկանության անձնակազմի համար աշխատանքային պատշաճ պայմանների ապահովման նպատակով, ըստ հաշվետվության, ՀՀ ոստիկանության կողմից կատարվել են նախնական հաշվարկներ և ուղարկվել ՀՀ կառավարության աշխատակազմ: Տավուշի մարզային վարչությունը ապահովվել է նոր մասնաշենքով, կառուցվել է ՀՀ ոստիկանության հրաձգարանը: Վերակառուցվել են ՀՀ ոստիկանության ԱՎՎ 4 ստորաբաժանումների շենքերը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, Ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագրի իրականացման վերլուծությունից կարելի է գալ մի շարք եզրահանգումների:

1. Այսպիսով, կազմվել է ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագրով նախատեսած միջոցառումների իրականացման թվային պատկերը՝ ըստ ծրագրով նախատեսված նպատակների և միջոցառումների:

Նպատակների իրականացման քանակական պատկերը	Միջոցառումների կատարման քանակական պատկերը
	

Ինչպես երևում է գծապատկերից, ծրագրով ձևակերպված է եղել 67 նպատակ և նրանց հասնելուն ուղղված 192 միջոցառումներ: Ըստ մեր կողմից մշակված մեթոդոլոգիայի՝ ամբողջությամբ իրականացվել է նպատակների 17 տոկոսը և չեն իրականացվել 24 տոկոսը: Ծրագրի նպատակներին հասնելու քանակային ընդհանուր գնահատականի տեսակետից կարող ենք նշել, որ ծրագրային նպատակները իրականացվել են մեծամասամբ ու ամբողջությամբ 39 տոկոսի չափով և չեն իրականացվել ու մեծամասամբ չեն իրականացվել 39 տոկոսի չափով:

Ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման քանակային բնութագիրը ցույց է տալիս, որ ամբողջությամբ ու մեծամասամբ կատարվել են միջոցառումների 53 տոկոսը և մեծամասամբ ու ընդհանրապես չեն կատարվել նախատեսված միջոցառումների 52 տոկոսը: Այսինքն՝ նպատակների և ըստ դրանց իրականցմանն ուղղված միջոցառումների քանակային տվյալներից կարելի է եզրակացնել, որ ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագիրը իրականացվել է կիսով չափ:

2. Ծրագրի իրականացման շրջանակներում, ըստ հաշվետվության, ընդունվել են 106 իրավական ակտեր՝ ծրագրով նախատեսված նպատակների և նրանց հասնելու միջոցառումների կատարմանն ուղղված: Հաշվետվության մեջ նշվում է տեղեկատվություն 160–ից ավելի իրավական ակտերի մասին, սակայն հաշվետվությանը կից ներկայացված չէ հիշատակված իրավական ակտերի ցանկը:

Ծրագրով նախատեսված է եղել ՀՀ կառավարության 37 որոշման և ՀՀ ոստիկանության պետի 24 հրամանների ընդունում: Այն դեպքում, երբ կառավարության ոչ գաղտնի որոշումները տեղադրված են ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջում և ՀՀ իրավական տեղեկատվական էլեկտրոնային համակարգում (www.arils.am), ոստիկանության պետի 24 հրամաններից և ցուցումից միայն մեկն է տեղադրված եղել ՀՀ իրավական տեղեկատվության էլեկտրոնային համակարգում: Հարկ է նշել, որ ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջի «Օրենսդրություն» բաժնի «Գործող» ենթաբաժնում առկա են հետևյալ կետերը՝ 1. ՀՀ օրենսգրքեր, 2. ՀՀ օրենքներ, 3. ՀՀ կառավարության որոշումներ, 4. Բարեփոխումներ: Այսինքն՝ առկա չէ ՀՀ ոստիկանության պետի հրամանների տեղադրման համար բաժին:

Հարկ է նշել, որ «Հասարակական կարգը պահպանելիս և հասարակական անվտանգությունն ապահովելիս բանակցություններ վարելու վերաբերյալ ուղեցույցը» և 11.11.2011 թ. թիվ 2760-Ա հրամանով՝ «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցը» հնարավոր չի եղել գտնել ՀՀ ոստիկանության կայքէջից, սակայն նրանք տեղադրված են եղել ԵԱՀԿ-ի պաշտոնական կայքէջում[4]:

3. Ըստ Ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագրի հայեցակարգի՝ Մարդու և քաղաքացու իրավունքների պահպանության ու պաշտպանության սահմանադրական սկզբունքի կենսագործումը ոստիկանության գործունեությունում ենթադրում է բարեփոխումների այնպիսի բովանդակություն, որն ուղղակիորեն և դրականորեն կանդրադառնա հասարակության անդամների մեծամասնության վրա: Սակայն հաշվետվության մեջ անդրադարձ չկա, թե ընդունված իրավական ակտերը որքանով են նպաստել նշված սահմանադրական սկզբունքի իրականացմանը:

4. Բարեփոխումների ծրագրի իրականացման շրջանակներում ընդունվել են իրավական ակտեր, որոնք առաջացնում են մարդու իրավունքի խախտման ռիսկեր: Ներկայացվում են այն իրավական ակտերը, որոնցում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնք հանգեցրել են մարդու իրավունքների խախտման ռիսկերի առաջացմանը:

ա) ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի «Այն հիվանդությունների ցանկը, որոնց դեպքում արգելվում է վարել տրանսպորտային միջոց, ինչպես նաև

[4] Տես՝ http://www.osce.org/hy/yerevan/85171

ճանապարհատրանսպորտային պատահարներից տուժածներին բժշկական օգնություն ցույց տալու կարգը հաստատելու մասին» թիվ 581 որոշում:

Համաձայն այս որոշման 1-ին կետի 1.1 ենթակետի 1)-ին պարբերության՝ յուրաքանչյուր ամսվա մեկին և տասնվեցին հոգեբուժական և նարկոլոգիական բժշկական հաստատությունները ճանապարհային ոստիկանությանն էլեկտրոնային և թղթային կրիչների միջոցով տեղեկատվություն են տրամադրում նշված բժշկական հաստատություններում հաշվառված անձանց մասին:

բ) ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի «Վարորդական վկայական ստանալու համար քննություններ ընդունելու և վարորդական վկայական տալու կարգը, վարորդական վկայական ստանալու համար պարտադիր ներկայացնելու ենթակա փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև ազգային ու միջազգային վարորդական վկայականների ձևերն ու նկարագրերը սահմանելու մասին» թիվ 1158 որոշում:

Ըստ նշված որոշման 6.1 կետի՝ քննական մարմինները կարող են թույլ չտալ անձին մասնակցել վարորդական իրավունքի որակավորման քննություններին, եթե անձը հաշվառված է ճանապարհային ոստիկանությանը՝ հոգեբուժական և նարկոլոգիական բժշկական հաստատությունների կողմից՝ նշված բժշկական հաստատություններում, հաշվառված անձանց մասին տրամադրված ցանկում:

գ) ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26 -ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշում:

Նշված որոշման 110-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն՝ հաշվառված և (կամ) հաշվառումից հանված՝ հոգեներգործուն նյութերից կախվածություն և հակում ունեցող անձանց մասին տեղեկությունները Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից յուրաքանչյուր ամիս տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: Նշված տեղեկությունները փոխանցելիս՝ ապահովվում է դրանց գաղտնիությունը:

Վերը նշված դրույթներով նախատեսվում է, որ անձի առողջական վիճակի մասին տեղեկություններ են տրամադրվում առողջապահական հիմնարկի և արդարադատության նախարարության կողմից ՀՀ ոստիկանությանը: Ըստ ոլորտը կարգավորող համապատասխան օրենսդրության՝ անձի առողջության մասին տեղեկություն կարելի է ստանալ միայն օրենքով նախատեսված դեպքերում:

5. Ըստ «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի՝ ծառայողական քննության նշանակելու առիթ է նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց գրավոր հաղորդումները, դիմումները: Ոստիկանություն-քաղաքացի հարաբերություններում ոստիկանության

գործողությունների վերաբերյալ քաղաքացիների դիմումների, բողոքների արդյունավետ քննության տեսակետից կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ քաղաքացիների դիմումների, բողոքների հիման վրա հարուցված ծառայողական քննության արդյունքում կայացված որոշումները չեն ուղարկվում հաղորդում, դիմում ներկայացրած քաղաքացիներին:

6. Ոստիկանությունում ծառայող /աշխատող/ անձանց սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումների շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված քաղաքացիական հատուկ ծառայության անցած ծառայողների սոցիալական իրավունքների պաշտպանությանը, ծառայողների բնակարանային պայմանների բարելավմանը: Վերջինի վերաբերյալ թերևս որևէ գործնական քայլ չի իրականացվել, այլ տրվել է Ոստիկանության պետի ցուցումները: Հաշվետվության մեջ նշված է Ոստիկանության ծառայողների և նրանց ընտանիքի անդամների և կենսաթոշակառուների բուժման և հանգստի կազմակերպման ուղղությամբ տրամադրված ֆինանսական միջոցների վերաբերյալ, սակայն նշված չէ, թե մասնավորապես որ ուղղություններով որքան ֆինանսական միջոցներ են իրացվել, ոստիկանության քանի ծառայողի, ընտանիքի անդամի կամ կեսաթոշակառուի է տրամադրվել փոխհատուցում՝ կապված թանկարժեք վիրահատությունների և բուժման հետ և քանի ծառայողի է տրամադրվել հանգստյան տների սուղեգրեր, մասնավորապես որ հանգստյան տներում են կազմակերպվել ոստիկանության ծառայողների հանգիստը ըստ ուղեգրերի: Այսպիսով, այս նպատակով կատարվել են քիչ ծավալով բարեփոխումներ, այնինչ այս ուղղությունը պետք է հանդիսանար ծրագրով նախատեսված բարեփոխումների կարևոր ուղղություններից մեկը:

Հավելված 1

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2010-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Հ/Հ	Ակնկալվող արդյունքը (նպատակը)	Միջոցառման անվանումը	Միջոցառումների կատարման նկարագրությունը ըստ հաշվետվության
	1	2	3
ա) Կառուցվածքային և կազմակերպական բարեփոխումներ			
1.	Ոստիկանությունում գործառույթների հստակեցում, անհարկի կրկնությունների բացառում	1.1. Ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայությունների, ուսումնական հաստատությունների և տարածքային մարմինների գործառույթների վերանայման, դրանց իրականացման, մարդկային ռեսուրսներով ապահովվածության ուսումնասիրում	ՀՀ ոստիկանության պետի 2011 թվականի օգոստոսի 29-ի թիվ թիվ 2303-Ա հրամանով կազմակերպվել են ՀՀ ոստիկանության կառուցվածքային բարեփոխումների շրջանակներում նոր ստեղծված՝ ՀՀ ոստիկանության շտաբի բարեփոխումների և զարգացման ծրագրերի համակարգման բաժնի աշխատանքները:
		1.2. «ՀՀ ոստիկանության կառուցվածքը և աշխատողների առավելագույն թիվը և ղեկավարի տեղակալների թիվը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.12.2002թ. 2069-Նգ որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	ՀՀ ոստիկանության կողմից մշակված ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 367-ՆԳ որոշմամբ լուծարվել է ՀՀ ոստիկանության տրանսպորտային վարչությունը: Նշված վարչության գործառույթները փոխանցվել են ՀՀ ոստիկանության տարածքային մարմիններին և Պետական Պահպանության վարչությանը: Նախապատրաստվել է կառավարության որոշման նախագիծ («Հայաստանի Հանրապետության ոստիկանության կառուցվածքն ու թվաքանակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 2069-ՆԳ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»), որով նախատեսվում է հստակեցնել ոստիկանության կառուցվածքը, թվաքանակը՝ նպատակ ունենալով բացառել ոստիկանության տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվող նմանատիպ գործառույթները:
2.	Քաղաքացիական հատուկ ծառայության ներդրում ոստիկանությունում	2.1. Ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայությունների, ուսումնական հաստատությունների և տարածքային մարմինների կանոնադրություններում փոփոխություններ կատարելու մասին, ինչպես նաև կազմ-հաստիքային փոփոխություններ կատարելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանների	ՀՀ Ազգային Ժողովի, Կառավարության, Քաղաքացիական ծառայության խորհրդի և Ոստիկանության պետի կողմից ընդունվել են բոլոր անհրաժեշտ իրավական ակտերը ՀՀ ոստիկանության առանձին ստորաբաժանումներում քաղաքացիական հատուկ ծառայության անցում կատարելու համար: Արդեն իսկ ոստիկանության 441 ծառայող անցում է կատարել քաղաքացիական հատուկ ծառայության, որոնցից 406-ը՝ ԱՎՎ-ում, 30-ը՝ ՖԲՎ–ում, 5-ը Կադրերի վարչությունում: Մանսավորապես, Կադրերի վարչությունում ստեղծվել է նոր՝ Քաղաքացիական հատուկ ծառայության անձնակազմի կառավարման բաժին, որն էլ

		նախագծերի մշակում	կազմակերպում է ՀՀ ոստիկանության քաղաքացիական ծառայության պաշտոններում ծառայողների համալրման գործընթացը: Քննարկվում է Տնտեսական վարչության ծառայողների՝ քաղաքացիական հատուկ ծառայության անցում կատարելու վերաբերյալ հարցը: Մշակվել և ներդրվել է նաև ՀՀ ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության մրցույթի ծրագիրը: Հաստատված են քաղաքացիական հատուկ ծառայության մրցույթի անցկացման տեստային և հարցազրույցի փուլերի հարցաշարերը: ՀՀ ոստիկանության պետի կողմից հաստատվել են ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերը (մասնավորապես՝ 2011թ. հուլիսի 19-ի թիվ 1850-Ա հրամանով՝ Կադրերի վարչության, 2011թ. փետրվարի 2-ի թիվ 189-Ա հրամանով՝ Անձնագրային և վիզաների վարչության, իսկ 2011թ. փետրվարի 2-ի թիվ 188-Ա հրամանով՝ Ֆինանսաբյուջետային վարչության քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերը), որոնցով հստակ սահմանված են նշված պաշտոնները զբաղեցնող ծառայողների գործառույթները: 2010 թվականի հոկտեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության պետի թիվ 2218-Ա հրամանով հաստատվել են ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության քաղաքացիական ծառայողների աշխատանքային կարգապահական ներքին կանոնները:
		2.2. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկի հաստատում	
		2.3. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների հաստիքացուցակի հաստատում	
		2.4. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատում	
		2.5. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» և «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	
		2.6. Մրցույթի թեստային փուլի հարցաշարերի և հարցազրույցի փուլի հարցերի պատրաստում	
		2.7. Մրցույթի թեստավորման և հարցազրույցի փուլերի հարցաշարերի ձևավորման համար համապատասխան համակարգչային ծրագրերի ստեղծում և ներդրում	
		2.8. Քաղաքացիական ծառայողների աշխատանքային կարգապահության ներքին կանոնների սահմանում	
3.	Ոստիկանության ծառայությունների և տարածքային մարմինների տեղեկատվական շտեմարանների ինտեգրում և շահագործում միասնական	3.1. Ոստիկանության կողմից իրականացվող հաշվառումների ավտոմատացում, էլեկտրոնային շտեմարանների ստեղծում	ՀՀ ոստիկանության բարեփոխումների շրջանակներում առաջիկայում նախատեսվում է ոստիկանության կենտրոնական ապարատի համակարգչային ցանցի վերափոխում, կատարելագործում, անվտանգության բարձրացում, ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ներդրում, որոնք հասանելի կլինեն ոստիկանության տարբեր ստորաբաժանումների համար:
		3.2. Առկա էլեկտրոնային շտեմարանների համատեղելիության ապահովում	
		3.3. Համակարգչային գերատեսչական ցանցում ծրագրային ապահովման ներդրում և տեղեկատվական համակարգի ստեղծում, տեղեկատվության հասանելիության ապահովում	
		3.4. «Համակարգչային գերատեսչական ցանցից օգտվելու կարգի մասին» ՀՀ ոստիկանության պետի	

	համակարգչա-յին գերատես-չական ցանցում	հրամանի նախագծի մշակում	
4.	Պետական մատնադրոշմա յին գրանցման համակարգի ստեղծում	4.1. «Պետական մատնադրոշմային գրանցման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	
		4.2. Բնակչության պետական մատնադրոշմային ռեգիստրի կազմակերպում	
5.	Թաղային (համայնքային) ոստիկանու-թյան մոդելի ներդրում	5.1. Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների կառուցվածքում ոստիկանության հենակետերի ստեղծում	Երևան քաղաքի Արաբկիր վարչական տարածքում ԵԱՀԿ աջակցությամբ պիլոտային կարգով շուրջ մեկուկես տարի գործում են համայնքային ոստիկանության 2 հենակետեր: Համակարգի ամբողջական ներդրման նպատակով անհրաժեշտ է կառուցել նաև նոր հենակետեր և հաստատել դրանց գործառույթները: Հենակետերի կառուցման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից առանձնացվել են 16 համապատասխան տարածքներ: Երևանի Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածում՝ Խանջյան 16/1 հասցեում, կառուցվել է ոստիկանության նոր հենակետ: Համայնքային ոստիկանության մոդելի ներդրման և ընդլայնման աշխատանքների կազմակերպման նպատակով ոստիկանության պետի 01.10.2010թ. թիվ 2049-Ա հրամանով նշանակվել են պատասխանատու ծառայողներ (ՀԿԱՎ պետի տեղակալ, Արաբկիրի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ): Համայնքային ոստիկանության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրման նպատակով ԱՄՆ կառավարության և ԵԱՀԿ աջակցությամբ ՀՀ Ոստիկանության 5 աշխատակիցներ գործուղվել են ԱՄՆ Կանզաս նահանգ: Գործուղման արդյունքում ձեռք բերված փորձն այժմ հաջողությամբ օգտագործվում է համայնքային ոստիկանության գործառույթների մշակման աշխատանքներում: ակտիվ աշխատանքներ են ընթանում միջազգային կազմակերպությունների, մասնավորապես, ԵԱՀԿ-ի հետ: 2011 թվականի ապրիլի 4-ին ՀՀ ոստիկանության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի միջև ստորագրված համագործակցության մասին հուշագրի Լրացուցիչ Արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ նշված աշխատանքներին ներգրավվել է նաև ԵԱՀԿ կողմից հրավիրված համապատասխան փորձագետ: Վերջինիս կողմից տրվել է համայնքային ոստիկանության աշխատակիցների գործառույթների, նրանց կողմից կատարվող աշխատանքների գնահատման նկարագրությունը, մշակվել և ներկայացվել է համայնքային ոստիկանության ղեկավարման 4 մոդել: Կատարված աշխատանքների ամփոփման արդյունքում ՀՀ ոստիկանության պետի 02.12.2011թ. թիվ 3535-Ա հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության համայնքային ոստիկանության ծառայության կանոնադրությունը, որով նախատեսվել է
		5.2. «Կազմ-հաստիքային փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	
		5.3. «Ոստիկանական հենակետերի տիպային գործառույթները սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	

			համայնքային ոստիկանությանն օժանդակողի ինստիտուտը: Օժանդակողներ կարող են լինել ՀՀ ոստիկանության երկարամյա կենսաթոշակի անցած անձինք: Օժանդակող անձինք կարող են վերապատրաստվել ոստիկանության ուսումնական հաստատությունում: Նշված հրամանն ուժի մեջ է մտնելու 2012 թվականի հունիսի 1-ից. մինչ այդ իրականացվելու են համայնքային ոստիկանության ծառայողների վերապատրաստում, պարեկապահակետային ծառայության, տեղամասային տեսուչների, անչափահասների գործերով տեսուչների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերլուծություն, շարունակվելու է նշված բնագավառում առկա խնդիրների և ռիսկերի վերհանումը: Բացի այդ, 22.11.2011թ. ՀՀ ոստիկանության պետի կողմից ստորագրվել է «Ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններում ներդրվող համայնքային ոստիկանության ստորաբաժանումներում նշանակման ենթակա ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացների կազմակերպման մասին» թիվ 3327-Ա հրամանը:
6.	Երևան քաղաքի հասարակա-կան կարգի պահպանու-թյան ծառայության կատարելագոր-ծում	6.1. Երևան քաղաքի հասարակական վայրերում տեսադիտման սարքավորումների ձեռքբերում և համակարգի ներդրում 6.2. Ոստիկանության Երևան քաղաքի վարչության կազմում ոստիկանական ուժերի և միջոցների օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում 6.3. Պարեկապահակետային ծառայության վերակարգերի աշխատանքում նոր մեթոդների ներդրում (առանց տրանսպորտային միջոցի իրականացվող ծառայության կրճատում) 6.4. Պարեկապահակետային ծառայությունը անհրաժեշտ հանդերձավորումով, հատուկ միջոցներով և զենքով ապահովում	Մշակվել են Երևան քաղաքի վարչության կազմում օպերատիվ արձագանքման կենտրոնի և Երևան քաղաքի մարդաշատ վայրերում տեսադիտարկման համակարգերի ներդրման հայեցակարգերը, ինպես նաև դրանց տեխնիկական առաջադրանքները և ֆինանսական հաշվարկները: Օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծման նախապատրաստական աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են. ամփոփված են օպերատիվ արձագանքման կենտրոնը տեխնիկապես համալրելու համար կայացած մրցույթի արդյունքները, ներկայումս ընթանում են կենտրոնի ծրագրային ապահովման աշխատանքները: Կենտրոնը շահագործման կհանձնվի մինչև 2012 թվականի ապրիլ ամիսը: Պարեկապահակետային ծառայության հանդերձավորումը վերափոխելու, ինչպես նաև վերջինիս հատուկ միջոցներով և զենքով ապահովելու նպատակով իրականացվել է ոստիկանության ծառայողների համազգեստի փոխարինումը նորով՝ 14.04.2011թ. ՀՀ կառավարության թիվ 425 որոշմամբ սահմանվել են ոստիկանության ծառայողի համազգեստի նոր նկարագիրը և այն կրելու ժամկետները: Ներկայումս ընթանում է Ոստիկանության արտաքին ծառայություն իրականացնող բոլոր ծառայողներին նոր համազգեստով և անհրաժեշտ միջոցներով հանդերձավորելու գործընթացը: Բացի այդ, 01.06.2011 թվականին ՀՀ Ոստիկանության պետի թիվ 2-Ն հրամանով փոփոխություններ են կատարվել է «Ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 2-Ն հրամանում:
7.	Ոստիկանու-	7.1. «Կազմ-հաստիքային փոփոխություններ	Երևան քաղաքի բոլոր բաժիններում և բաժանմունքներում քրեական հետախուզության

	թյան Երևան քաղաքի վարչության և ենթակա տարածքային մարմինների օպերատիվ ստորաբաժա-նումներում քրեական հետախուզու-թյան ծառայու-թյան ճյուղային սպասարկման (նեղ մասնագի-տացման) սկզբունքի ներդրում	կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում 7.2. Գործառութային վերաբաշխման մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	բաժանմունքների հենքի վրա ավարտվել է ճյուղային սպասարկման մոդելի ներդրումը:
բ) Կրթական բարեփոխումներ			
8.	Նախնական, միջին, բարձրագույն մասնագիտակ ան կրթության մասնագի-տությունների ցանկում «ոստիկան» մասնագի-տության սահմանում	8.1. «Ոստիկան» մասնագիտության պետական կրթական չափորոշիչի մշակում 8.2. «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.08.2007թ. 1038-Ն, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը» հաստատելու, ՀՀ կառավարության 18.05.2000 թվականի 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 12.01.2006թ. 73-Ն որոշումների	Մեծածավալ աշխատանքներ են կատարվել այս ուղղությամբ նաև ԵԱՀԿ-ի համապատասխան փորձագետների աջակցությամբ: ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի թիվ 1463-Ն և 2011թ. մարտի 10-ի թիվ 229-Ն որոշումներով լրացումներ են կատարվել Նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերում. սահմանվել են Ոստիկանական գործ մասնագիտության երեք աստիճանները՝ նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության գծով:

		մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մշակում	
9.	Ոստիկանության միասնական կրթահամալիրի (ուսումնական հաստատություն) կազմակերպում	9.1. «ՀՀ ոստիկանության կառուցվածքը և աշխատողների առավելագույն թիվը և ղեկավարի տեղակալների թիվը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.12.2002թ. 2069-Նգ որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում 9.2. Ուսումնական հաստատության նոր կառուցվածքի մշակում 9.3. «ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2002 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 2069-ՆԳ որոշմամբ հաստատված ՀՀ ոստիկանության կառուցվածքում կատարված փոփոխությունների (ՀՀ կառավարության 28.04.2011թ. թիվ 621-Ն որոշում) արդյունքում ուսումնական կենտրոնը դուրս է եկել ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների կազմից: Ոստիկանության կրթակամալիրն իր կանոնադրության համաձայն իրականացնելու է բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական կրթական ծրագեր: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն ապահովվելու է Կրթահամալիրի կազմում վարչության կարգավիճակով գործող ակադեմիայի, միջին մասասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը՝ քոլեջի և նախնական մասասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը՝ ուսումնական կենտրոնի կողմից: Միաժամանակ, ՀՀ ոստիկանության պետի 22.07.2011թ. թիվ 1871-Ա հրամանով հաստատվել է Ոստիկանության Կրթահամալիրի նոր կառուցվածքը: Կառուցվածքային բարեփոխումների շրջանակներում «Ոստիկանության Ակադեմիա» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Ոստիկանության Կրթահամալիր» ՊՈԱԿ-ի՝ իր մեջ ներառելով Ուսումնական կենտրոնն ու Ոստիկանության Ակադեմիան: Ոստիկանության միասնական կրթահամալիրի կազմում գործում են՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն ապահովող Ակադեմիան, միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն ապահովող Քոլեջը և նախնական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն ապահովող Ուսումնական կենտրոնը: ՀՀ կառավարության 28.04.11թ թիվ 615-Ն որոշմամբ «Ոստիկանության Ակադեմիա» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Ոստիկանության Կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և հաստատվել վերջինիս կանոնադրությունը:
10.	Կրթական աստիճանական համակարգի ներդրում	10.1. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում 10.2. «Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.08.2003թ. 1184-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության	Փոփոխություններ են կատարվել Ոստիկանությունում ծառայության մասին, Կրթության մասին ՀՀ օրենքներում: Նախապատրաստվել է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվեց ամբողջությամբ 2011 թվականի դեկտեմբերի 8-ին: Օրենքում կատարված փոփոխությունների նպատակն էր «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը համահունչ դարձնել Ոստիկանության կրթական համակարգում իրականացվող բարեփոխումներին՝ ոստիկանական կրթության մասնագիտացումը և աստիճանավորման

		որոշման նախագծի մշակում	երաշխավորումը, ոստիկանական պաշտոններում ծառայության անցնելու համար մասնագիտական զենզի հստակեցումը: Կրթական բարեփոխումների կարևոր տարր է համարվում նաև այն, որ վեց ամիս և ավելի ժամկետով ուսման գործուղված ոստիկանության ծառայողներին ոստիկանության կադրերի գործող ռեզերվում գտնվելու ողջ ժամանակահատվածում այսուհետ վճարվելու է զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված դրամական բավարարումը: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2011 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1401-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել 2003 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1184-Ն որոշմամբ հաստատված Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագրքում, որի արդյունքում կարգավորվել են ոստիկանական նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական կենտրոնում, քոլեջում և ակադեմիայում դիմորդների ընտրության, սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման, ամփոփիչ պետական ատեստավորման հետ կապված և այլ հարաբերություններ: ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի թիվ 1463-Ն և 2011թ. մարտի 10-ի թիվ 229-Ն որոշումներով լրացումներ են կատարվել Նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերում. սահմանվել են Ոստիկանական գործ մասնագիտության երեք աստիճանները՝ նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության գծով: Ոստիկանության կրթակամալիրում իրականացվող ուսումնական գործընթացի արդյունքում տրվելու են համապատասխանաբար ոստիկանի, ոստիկան-սպայի, ոստիկանության բակալավրի և մագիստրոսի որակավորումներ: Կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով (08.12.2010թ. թիվ 1676-Ն և 27.12.2010թ. թիվ 1740-Ն) հաստատվել են նաև նշված որակավորումների կրթական չափորոշիչները: Միջին մասնագիտական ուսումնառության ժամկետ է սահմանվել 2 տարի, իսկ նախնականը՝ 6 ամիս:
		10.3. «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում՝ նախատեսելով բոլոր խմբերի պաշտոնների համար վերապատրաստման (որակավորման) դասընթացների պարբերաբար իրականացում	
		10.4. «Ոստիկանության ծառայողի ատեստավորման անցկացման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.12.2002թ. 2147-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	
		10.5. Նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության համար ուսումնական նոր ծրագրերի մշակում	
		10.6. Ոստիկանության ուսումնական հաստատու-թյունում ուսուցման նոր, առաջադիմական մեթոդների աստիճանական ներդրում (ինտերակտիվ, ներգրավված, խաղային և այլն)	
		10.7. Ուսումնական ծրագրում օտար լեզուներով շփման նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված դասընթացների ընդգրկում	
11.	Ուսումնական գործընթացում պրակտիկ փորձի կիրառում	11.1. Բարձր որակավորում ունեցող ոստիկանության բարձրագույն և գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների կողմից ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունում դասավանդման գործընթացին ներգրավում	

12.	Ուստիկանության ուսումնական հաստատություն (համակարգ) ընդունվող թեկնածուների գիտելիքների և ունակությունների ստուգման նոր չափանիշների ներդրում	12.1. «Ուստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում 12.2. «Ուստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.08.2003թ. 1184-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում 12.3. «Ուստիկանությունում պաշտոնի նշանակման համար եռամսյա փորձաշրջան անցնելու կարգ և պայմաններ» սահմանելու մասին ՀՀ կառավարության 23.01.2003թ. 112-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում 12.4. Ընդունելության թեստերի մշակում և դրանց համակարգչային գնահատման մեխանիզմի ներդրում	Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2011 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1401-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել 2003 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1184-Ն որոշմամբ հաստատված Ուստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագրքում, որի արդյունքում կարգավորվել են ոստիկանական նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական կենտրոնում, քոլեջում և ակադեմիայում դիմորդների ընտրության, սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման, ամփոփիչ պետական ատեստավորման հետ կապված և այլ հարաբերություններ: ՀՀ ոստիկանության պետի համապատասխան հրամաններով կանոնակարգվել են Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի և քոլեջի 2011 թվականի ընդունելության, ընդունող հանձնաժողովների գործունեության և ուսանողներով համալրելու հետ կապված աշխատանքները: Նոր թեստային համակարգի միջոցով Քոլեջում և Ուսումնական կենտրոնում արդեն իսկ կազմակերպվել է ընդունելություն ,ոստիկանական գործե մասնագիտությամբ: Հարկ է նշել նաև, որ ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունում ընդունելության հանձնաժողովի կազմն առաջին անգամ հաստատվել է նոր սկզբունքով. 3 անդամ ոստիկանությունից, 6-ը՝ այլ կազմակերպություններից: Քոլեջում ընդունելության քննություններն արդեն ավարտվել են (03.10.11-13.10.11), 95 դիմորդների շրջանում կատարված ընտրության արդյունքում Քոլեջ են ընդունվել 65-ը: Առաջին անգամ քննությունն անցկացվել է համակարգչային եղանակով՝ նոր թեսթային համակարգի միջոցով: Նոր թեսթային համակարգը նախապատրաստվել է ԵՊՀ հոգեբանության ամբիոնի կողմից՝ միջազգային տարբեր կրթական հաստատությունների, մասնավորապես, Կալիֆորնիայի ոստիկանական համալսարանի փորձի ուսումնասիրությունների արդյունքում, միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ տարածքում հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների շրջանում անցկացված հետազոտությունների արդյունքները: Նշված աշխատանքներն իրականացվել են ԵԱՀԿ ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ-ի փորձագետի օժանդակությամբ: Անց են կացվել նաև Ուսումնական կենտրոնի ընդունելության քննություններ (01.11.11-10.11.11)՝ 203 դիմորդներից ընդունվել են 120-ը:
13.	Ուստիկանության ուսումնական հաստատությունում պրոֆեսորադա	13.1. «Ուստիկանության ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 16.01.2003թ. 25-Ն որոշման մեջ փոփոխություն և	ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի նիստում ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 25-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումը, որով հստակեցվեցին Ուստիկանության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմին, մասնավորապես՝ ամբիոնի և ֆակուլտետի պետերին ներկայացվող պահանջները:

	սախոսական կազմի որակա-վորում, նրանց մասնագիտակ ան գիտելիք-ների մշտական համալրման իրական մեխանիզմների ստեղծում	լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	
		13.2. «Ոստիկանության ծառայողի վերա-պատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	
14.	Ոստիկանու-թյան համա-կարգի գործու-նեության կատարելագոր ծմանն ուղղված գիտահետազո տական աշխատանք-ների խթանում	14.1. Ոստիկանության ուսումնական հաստատությունում գիտական խորհրդի ձևավորում	
		14.2. Ոստիկանության առջև ծառացած կիրառական խնդիրների համակարգում, դրանց գիտական մշակման առաջնայնության որոշում ու հետազոտությունների իրականացում	
15.	Միջազգային ոստիկանական ուսումնական համակարգին ինտեգրում	15.1. Միացում միջազգային կրթական տեղեկատվական ցանցին (CIPOL, POLIS և այլն)	Աշխատանքներ են իրականացվել նաև Եվրոպական ոստիկանական քոլեջի՝ CEPOL-ի հետ ՀՀ ոստիկանության համագործակցությունն ապահովելու ուղղությամբ: Այդ նպատակով՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա.Օսիկյանի կողմից համապատասխան գրություն է ներկայացվել CEPOL-ի գլխավոր գրասենյակ, որտեղից 07.09.2011թ. ստացվել է դրական արձագանք: Նշված կազմակերպության հետ միջազգային սերտ համագործակցությունն ապահովելու համար ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները 23.09.2011թ. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել են CEPOL-ի գլխավոր գրասենյակ՝ստացված ձևանմուշի համաձայն:
		15.2. Համաձայնագրերի կնքում օտարերկրյա պետությունների ոստիկանական ուսումնական առաջատար հաստատությունների հետ կադրերի պատրաստման և վերապատրաստման ոլորտում	
		15.3. Ինտերպոլի հակակոռուպցիոն ակադեմիայում (Վիեննա) կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ընդգրկված ծառայողների վերապատրաստում	
16.	Ոստիկանու-թյան ուսումնական	16.1. Մասնագիտական լսարանների վերազինում	
		16.2. Գրադարանային ֆոնդի նորացում	
		16.3. Ուսուցանվողների կոմունալ-կենցաղային	

	հաստատու-թյունում նյութատեխնիկական բազայի բարելավում	պայմանների բարելավում 16.4. Ոստիկանության ուսումնական հաստատու-թյունում քաղաքացիների և կազմակերպություն-ների վճարովի հիմունքներով կրթական ծառայությունների մատուցման մեխանիզմների ներդրման նպատակով ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	
17.	Ծառայողական պարապմունք-ների համա-կարգի կատա-րելագործում	17.1. «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	
գ) Ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառի բարեփոխումներ			
18.	Խմածության աստիճանը տեղում որոշելու մեխանիզմի ներդրում	18.1. Սթափության վիճակի զննության տեխնիկական միջոցների ձեռքբերում	Սթափության վիճակի զննության տեխնիկական միջոցներ ձեռք բերելու նպատակով մրցույթ հայտարարելու համար ներկայումս մշակվել են համապատասխան տեխնիկական առաջադրանքները:
19.	Ճանապարհատրանսպորտային պատահարների, վարչական իրավախախտումների, տրանսպորտային միջոցների և վարորդական վկայականների հաշվառման շտեմարանների ստեղծում	19.1. Համակարգչային ցանցի ստեղծում և ծրագրային ապահովում	ՃՈ-ում ավարտվել և արդեն շահագործվում է ճանապարհատրանսպորտային պատահարների, վարչական իրավախախտումների, տրանսպորտային միջոցների և վարորդական վկայականների հաշվառման շտեմարանները: Ճանապարհային ոստիկանության շրջիկ ծառայություն իրականացնող ծառայողներն այսօր արդեն օգտագործում են համապատասխան նոթբուկ-համակարգիչներ (50-ը Երևան քաղաքում, 50-ը՝ մարզերում), ինչը թույլ է տալիս տեղում պարզել տրանսպորտային միջոցի տվյալների համապատասխանությունը հաշվառման տվյալներին, ինչպես նաև տրանսպորտային միջոցի հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը: Նախատեսվում է շուտով տեղում պարզել նաև ապահովագրական պայմանագիր կամ կտրոն ունենալու հանգամանքները:

20.	Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաև մայրուղիներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդրում	20.1. Տեխնիկական առաջադրանքի կազմում և մրցույթի կազմակերպում 20.2. Տվյալների կուտակման կենտրոնի ստեղծում 20.3. Տեխնիկական միջոցների և ծրագրերի ձեռքբերում և ներդրում	Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում և մայրուղիներում արագության վերահսկման ավտոմատ համակարգերի (արագաչափեր, տեսախցիկներ, խախտումների արձանագրման կենտրոն) ներդրման համար մշակվել է համապատասխան տեխնիկական առաջադրանք: Կայացել է մրցույթ, որում հաղթող ճանաչված կազմակերպության հետ կնքվել է համապատասխան պայմանագիր: ՀՀ կառավարության 21.07.2011թ. թիվ 1009-Ա որոշմամբ հաստատվել են «Պետության կարիքների համար երթևեկության կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգերի ձեռքբերման և դրանց շահագործման, սպասարկման ու վերանորոգման ծառայությունների գնման ՀՀ ԿԱ Ո ՃՈ-ԱՊԾՁԲ-11/02 ծածկագրով ընթացակարգի արդյունքները»: Պայմանագրի համաձայն՝ ավարտվել են արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդրման աշխատանքները: Կահավորվել և շահագործման է հանձնվել Խախտումների արձանագրման կենտրոնը, որը պաշտոնական բացումը տեղի ունեցավ 27.12.2011 թվականին Հանրապետության Նախագահի մասնակցությամբ: Երևան քաղաքի մայրուղիներում տեղադրվել են 15 արագաչափ տեսախցիկներ, իսկ 10 խաչմերուկներում՝ 40 դիտարկման տեսախցիկներ: ՀՀ ոստիկանությանն են հանձնվել նաև մարդաշատ վայրերի տեսահսկման տեսախցիկները:
21.	Ճանապարհային ոստիկանության ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժը վերահսկող GPS տեղորոշիչների ներդրում	21.1. Տեխնիկական միջոցների և ծրագրերի ձեռքբերում և ներդրում	Ներդրված է ճանապարհային ոստիկանության ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժը վերահսկող GPS տեղորոշիչների համակարգը (տեխնիկական միջոցները և ծրագրերը):
22.	Վարորդական վկայական ստանալու գործնական և տեսական քննության պայմանների բարելավում	22.1. Երևան քաղաքում քննական ավտոդրոմի կառուցում 22.2. Երևան քաղաքում մեկ ստորաբաժանման միջոցով վարորդական վկայականների տրման աշխատանքների կազմակերպում	Ավարտված են Երևան քաղաքի Ճանապարհային ոստիկանության քննական ավտոդրոմի և նոր վարչական շենքի կառուցման աշխատանքները, որի նպատակն է մեկ վայրում կազմակերպել թե տեսական և գործնական վարման քննությունների անցկացումը, և թե վարորդական վկայականներ ստանալու գործընթացները: Նախատեսվում է քննական ավտոդրոմը շահագործել 2012 թվականի ապրիլ ամսից: Ծրագրի ներդրման նպատակով Համաշխարհային Բանկի «Պետական հատվածի արդիականացման եկրորդ ծրագրի» վարկային միջոցների հաշվին (65.000 ԱՄՆ դոլար) անց է կացվել նաև ՃՈ «Տեղեկատվական-փնտրողական ավտոմատացված համակարգի» ձեռքբերում, տեղադրում և տեղայնացում մրցույթը, որի արդյունքները հաստատվել են ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների

			հանձնաժողովի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 30-ին: 2011 թվականի ապրիլի 14-ին՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի N 581-Ն և 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1158-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության թիվ 424-Ն որոշումը, որն էապես բարելավեց վարորդական վկայական ստանալու գործընթացը: Մասնավորապես՝ ա. հոգեբուժական և նարկոլոգիական բժշկական հաստատություններում անձի հաշվառման փաստը ստուգվում է հիշյալ հաստատություններից ճանապարհային ոստիկանությունում ստացված տեղեկատվության հիման վրա՝ տեղեկանքներ ներկայացնելու պահանջը վերացվել է. բ. ֆիզիկական ձևախախտում կամ արատներ ունեցող քաղաքացիները բժշկական հավատարմագրում անցնելու են բացառապես ունեցած տեսանելի արատների հետ կապված հիվանդությունների պարզման նպատակով. գ. A, A1, B, B1, C, C1 կարգերի և ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու համար քաղաքացիներն այլևս ստիպված չեն լինի անցնել պարտադիր ուսուցում՝ ինքնուսները նույնպես կարող են քննություն հանձնել և վարորդական վկայական ստանալ: 2011 թվականի մարտի 18-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1158-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1148-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության թիվ 269-Ն որոշումը, որով հաստատվեցին ազգային և միջազգային վարորդական վկայականների ձևերն ու նկարագրերը: 2011 թվականի մայիսի 26-ին ընդունվել է ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասինե թիվ 716-Ն ՀՀ կառավարության որոշումը, որով էականորեն պարզեցվել է ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման գործընթացը՝ «հոսքագծի» սկզբունքի կիրառմամբ: Որոշման ուժի մեջ մտնելու ժամկետը հետաձգվել է մինչև 2012 թվականի ապրիլի 1-ը՝ պայմանավորված Երևան քաղաքում կառուցվող Ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական ստորաբաժանման նոր վարչական շենքի և քննական ավտոդրոմի շահագործման վերջնական աշխատանքներն ավարտին հասցնելու անհրաժեշտությամբ: ՀՀ կառավարության կողմից 27.10.2011թ. թիվ 1512-Ն որոշմամբ մեկ անգամ ևս պարզեցվել է Ճանապարհային ոստիկանության կողմից իրականացվող տրանսպորտային միջոցների հաշվառման գործողությունները: Որոշումն ուժի մեջ է մտել նոյեմբերի 12-ից: Նշված

			ժամանակահատվածից սկսած քաղաքացիները տրանսպորտային միջոցների հաշվառման գործողություններ կատարելու համար այլևս չեն ներկայացնում տեխնիկական զննության կտրոն, ԱՊՊԱ կտրոն կամ պայմանագիր: Փոխարենը՝ տվյալ տրանսպորտային միջոցն ապահովագրված լինելու հանգամանքը ստուգվում է ինտերնետային կայքի (www.paap.am) միջոցով:
23.	Ճանապարհային երթևեկության կանոնների ու դրանց խախտման համար պատասխանատ-վություն նախատեսող նորմերի կատարելագոր-ծում, տարաբնույթ մեկնաբանություն ների տեղիք տվող նորմերի հստակեցում	23.1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Նախորդ տարվա վերջին նախապատրատվել և ներկայումս ՀՀ Ազգային Ժողովում է գտնվում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է վերացնել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում կոռուպցիոն ռիսկեր պարունակող դրույթները. հստակեցվում են երկիմաստություն պարունակող նորմերը, բացի այդ, վերացվում է իրավախախտ վարորդից կամ հետիոտնից տեղում որպես տուգանք կանխիկ գումար գանձելու իրավունքը, իսկ եթե վարորդը կունենա վճարային քարտ, ապա ոստիկանի մոտ առկա էլեկտրոնային վճարման համակարգի (սաստ տերմինալի) միջոցով կկարողանա կատարել տուգանքի վճարումը (Օրինագիծն ընդունվել է 1-ին ընթերցմամբ նոյեմբերի 30-ին): ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտմբերի 15-ի նիստում ընդունվեց նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը համապատասխանեցվեց «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2010 թվականի նոյեմբերի 15-ին կատարված փոփոխություններին:
24.	Այլ պետություննե-րում հաշվառված և ՀՀ տարածք մուտք գործող տրանսպորտային միջոցների ՀՀ-ում հաշվառման և հսկողության մեխանիզմների	24.1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում 24.2. «Տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման և հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1854-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու	11) Սույն թվականի դեկտեմբերի 8-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով գործողության ժամկետի նշում չպարունակող վարորդական վկայականների գործողության ժամկետը երկարաձգվել է ևս 6 ամսով (մինչև 2012 թվականի հունիսի 30-ը): Բացի այդ, հստակեցվել են տրանսպորտային միջոցի գրավի իրավունքի պետական գրանցման հետ կապված հարաբերությունները այն դեպքերում, երբ գրավի առարկա տրանսպորտային միջոցը պայմանագրի համաձայն պետք է գտնվի գրավառուի մոտ: Այս դեպքում գրավի իրավունքի ծագման պահ է համարվելու տրանսպորտային միջոցը նրան հանձնելու պահը, իսկ եթե այն հանձնվել է մինչև պայմանագիրը կնքելը, ապա՝ այն կնքելու պահը:

	կատարելագոր-ծում	մասին» և «ՀՀ ժամանակավորապես ներմուծված տրանսպորտային միջոցներին հաշվառման փաստաթղթեր և հաշվառման համարանիշեր չտրամադրելու դեպքերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 30.08.2007թ. թիվ 1041-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մշակում	
դ) Քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ			
25.	Ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանության ապահովում	25.1. Ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության հաշվետվության արդյունքների հանրային քննարկումների պարբերաբար կազմակերպում 25.2. Ձերբակալված անձանց պահելու պայմանների բարելավում	Ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու նպատակով իրականացվել են ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության հաշվետվության արդյունքների հանրային քննարկումներ, Աշխատանքներ են տարվել ձերբակալված անձանց պահելու պայմանների բարելավման ուղղությամբ, մասնավորապես, ոստիկանության 40 ՁՊՎ-ներից 32-ում ոստիկանության տարածքային մարմինների ուժերով կատարվել են հարդարման աշխատանքներ, տեղադրվել են քարտոֆոններ:
26.	Մարդու և քաղաքացու խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի լրացուցիչ երաշխիքների ամրագրում	26.1. Զանգվածային հրապարակային միջոցառումների իրավաչափ սահմանափակման, զանգվածային անկարգությունների ժամանակ ուժի կիրառման միջազգային փորձի ուսումնասիրում, ըստ անհրաժեշտության՝ իրավաստեղծ աշխատանքների իրականացում 26.2. Հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, նրանց կողմից զանգվածային անկարգությունների ժամանակ ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների գործադրման, ինչպես նաև բանակցություններ վարող և ԶԼՄ-ների հետ շփվող ծառայողների համար պարտադիր դասընթացների կազմակերպում	2010 թվականի ընթացքում հասարակական կարգի և անվտանգության ապահովման ոլորտը կանոնակարգող իրավական բազայի (այդ թվում՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման առումով) կատարելագործման ուղղությամբ իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, որի շրջանակներում վերլուծության են ենթարկվել ոլորտին առնչվող բոլոր հիմնական միջազգային իրավական փաստաթղթերը, մասնավորապես՝ ՄԱԿ-ի, ԵԽ–ի և ԵԱՀԿ-ի կողմից ընդունված: Արդյունքում մշակվել են «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրինագծեր, որոնք ընդունվել են ԱԺ-ի կողմից 2010 թվականի աշնանային նստաշրջանի ընթացքում: Մշակվել են նաև նշված օրենքներից բխող բոլոր անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը: Մասնավորապես՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության՝ ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա նախապատրաստվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների ցանկերը, ինչպես նաև հրազենը, ռազմամթերքը, հատուկ միջոցները և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների

			տեսակները սպառազինության մեջ ընդգրկելու, դրանք սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները և անհատական պաշտպանության միջոցները ոչնչացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է ՀՀ Կառավարության 2011թ. հունիսի 23-ի թիվ 867-Ն որոշմամբ: Որոշմամբ առաջին անգամ ոստիկանության պատմության մեջ հատուկ միջոցների և ծառայողների անհատական պաշտպանության միջոցների տեսակները հաստատվում են ոչ գաղտնի նորմատիվ իրավական ակտով, ինչը հասարակությանը հնարավորություն կտա վերահսկել ոստիկանական սպառազինության կոմպլեկտավորումը (լրակազմումը): Կարգի համաձայն ցանկում կարող են ընդգրկվել միայն այն հատուկ միջոցները, որոնց վերաբերյալ նախապես առկա կլինի ՀՀ առողջապահության նախարարության որոշումը՝ տվյալ հատուկ միջոցը մարդու նկատմամբ օգտագործելու թույլատրելիության մասին: Որոշմամբ կարգավորում են ստացել նաև հրազենը, հատուկ միջոցները սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները ոչնչացնելու ընթացակարգերը: Ի կատարումն նշված որոշման 2-րդ կետի՝ ՀՀ ոստիկանության պետի կողմից 17.08.2011թ. թիվ 2163-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակներ ընդգրկելու կամ դրանք սպառազինությունից հանելու վերաբերյալ եզրակացություն ներկայացնող հանձնաժողովի կազմը: Իսկ մինչև 2012 թվականի մարտի 1-ին տասնօրյակը ՀՀ առողջապահության նախարարի հրամանով նախատեսվում է հաստատել մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները: Հասարակական կարգի ապահովման ոլորտում միջազգային կառույցների հետ համագործակցությունը շարունակվել է նաև 2011 թվականին: Մասնավորապես, ԵԱՀԿ-ի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ս.թ. հուլիսի 2-ից Հայաստանի Հանրապետություն էր գործուղվել փորձագետ՝ 3 ամիս ժամկետով, որը զբաղվել է Հայաստանում հասարակական կարգի պահպանության օրենսդրական և պրակտիկ փորձի ուսումնասիրման աշխատանքներով: Իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, որի շրջանակներում վերլուծության են ենթարկվել միջազգային իրավական ակտեր՝ հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված ոստիկանության գործողությունները կանոնակարգող ՀՀ իրավական դաշտի կատարելագործման նպատակով: 2011 թվականի ընթացքում ավելացվել է հասարակական կարգի պահպանության մեջ

			ընդգրկված աշխատակիցների ծառայողական պարապմունքների և մասնագիտական վարժանքների ինտենսիվությունն ու դրանց որակը: Պարեկապահակետային ծառայության բոլոր աշխատակիցներն ամենշաբաթյա պարբերականությամբ մասնակցում են ծառայողական պարապմունքներին: 2011 թ. ընթացքում վարժանքներ են անցկացվել նաև ՀՀ Ոստիկանության զորքերի հետ համատեղ: 2010 թվականի ընթացքում ոլորտին առնչվող դասընթացներ են անցկացվել նաև առանձին միջազգային կառույցների աջակցությամբ: 15.06.2011թ. ՀՀ ոստիկանության պետի կողմից ընդունվել է «Զանգվածային անկարգությունների կասեցման թեմայով ուսումնական վարժանքներ անցկացնելու վերաբերյալ» 1470-Ա հրամանը 31.08.2011թ. թիվ 2320-Ա հրամանով հաստատվել է ոստիկանության ծառայողների համար «Զանգվածային անկարգությունների և այլ միջոցառումների ժամանակ բանակցությունների վարումը» և «Զանգվածային անկարգությունների և այլ միջոցառումների ժամանակ ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրումը» թեմաներով ուսումնական պարապմունքներ անցկացնելու ժամանակցույցը: Ժամանակացույցի համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրում և Ոստիկանության Երևան քաղաքի ՊՊԾ գնդում արդեն իսկ անց են կացվել համապատասխան ուսումնական պարապմունքները ոստիկանության 160-ից ավելի ծառայողների համար:
27.	Հարցաքննվող անձի իրավական պաշտպանված ության լրացուցիչ երաշխիքների ապահովում	27.1. Քննչական գործողությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նկատառումներով ոստիկանության տարածքային մարմիններում և քննչական ապարատներում հատուկ կահարված (հայելապատ) սենյակների ստեղծում	ԱՄՆ դեսպանության աջակցությամբ դեկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում ստեղծվել է տեսաձայնագրման և հայելային սենյակ: Նախատեսվում է համանման սենյակներ ստեղծել նաև ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում և Շիրակի մարզային վաչության Գյումրիի բաժնում:
28.	Քաղաքացի-ների անձի և գույքի պահպանման ոլորտում առավել առա-ջադիմական մեթոդների և ձևերի	28.1. Քաղաքացիների բնակարանների և կազմակերպությունների գույքի, տրանսպորտային միջոցների պահպանման և ահազանգման տեխնիկական ժամանակակից սարքավորումների ձեռքբերում և համակարգի ներդրում	Ուսումնասիրվել են ՌԴ և ԵՄ ՆԳ մարմինների պահպանության ավտոմատացված տարբեր համակարգերի տեխնիկական հնարավորությունները՝ ՀՀ-ում քաղաքացիների բնակարանների և կազմակերպությունների գույքի, տրանսպորտային միջոցների պահպանման և ահազանգման տեխնիկական ժամանակակից սարքավորումների ձեռքբերման և համակարգի ներդրման համար: Մշակվել և հանրային քննարկումների է ներկայացվել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պահպանության համակարգի զարգացման հայեցակարգը և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պահպանության համակարգի զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը, որը 17.06.2011թ.-ին թիվ 23 արձանագրային որոշմամբ

	ներդրում		հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Հայեցակարգի համաձայն կարևորագույն նորամուծությունն այն է, որ լիցենզավորման ենթակա գործունեություն է համարվելու պահնորդական (թիկնազորային) գործունեությունը, ըստ էության այսօր այդ կարևոր ուղղությանը դուրս է իրավական կարգավորման ոլորտից: Նախատեսվում է նաև ՊՊՎ-ի եղած տեխնիկական բազայի թարմացում: Ներկայումս մշակվում է տեխնիկական առաջադրանքը, կատարվել են ֆինանսական հաշվարկներ: Միաժամանակ, հայեցակարգի շրջանակներում նախապատրաստվել է «Ոստիկանական պահպանության մասին», «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրինագծերի փաթեթը, որն այժմ գտնվում է արտաքին շրջանառության փուլում: ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրան կից ներկայացված այլ օրինագծեր ՀՀ ոստիկանության առաջարկությունների համաձայն լրամշակվել են և սույն թվականի դեկտեմբերի 6-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել 1-ին ընթերցմամբ:
29.	Ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող ծառայությունների որակի բարելավում	29.1. «Զենքի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակում 29.2. «ՀՀ տարածքում քաղաքացիական և ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության 26.10.1999 թ. թիվ 673 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում՝ 29.3. «ՆԳ մարմինների կողմից ՀՀ տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառության նկատմամբ իրականացվող վերահսկողության կարգի մասին» հրահանգը հաստատելու վերաբերյալ ՀՀ ՆԳ նախարարի 15.03.2002թ. թիվ 101 հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում 29.4. «ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի	2010 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար ՀՀ –ում դատվածության և հետախուզման առկայության մասին տեղեկանքներ տրամադրելու կարգը, համաձայն որի՝ նշված տեղեկանքները տրամադրում են ՀՀ արտաքին գործերի նախարարությունը կամ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններն ու հյուպատոսական հիմնարկները՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված տեղեկության հիման վրա: Ընդ որում, Ինֆորմացիոն կենտրոնը ՀՀ արտաքին գործերի նախարարությունից և ներկայացուցչություններից հարցումները ստանում է էլեկտրոնային եղանակով և 2 աշխատանքային օրվա ընթացքում, կրկին էլեկտրոնային եղանակով պատասխանում:

		կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարովի հիմունքներով դատվածության և արխիվային տվյալների մասին տեղեկանքների տրամադրման ծառայություն մատուցելու կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	
30.	Հասարակա-կան կարգի և անվտանգու-թյան ապահովմանն ուղղված գործողություն-ների (այդ թվում՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման առումով) իրականացման իրավական բազայի կատարելագոր-ծում	30.1. Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրում 30.2. «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակում 30.3. Հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցների մշակում ու ներդրում 30.4. Զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցություններ վարող ծառայողների համար ուղեցույցների մշակում և ներդրում	Մշակվել են «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրինագծեր, որոնք ընդունվել են ԱԺ-ի կողմից 2010 թվականի աշնանային նստաշրջանի ընթացքում: Մշակվել են նաև նշված օրենքներից բխող բոլոր անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը: Մասնավորապես՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության՝ ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա նախապատրաստվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների ցանկերը, ինչպես նաև հրազենը, ռազմամթերքը, հատուկ միջոցները և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակները սպառազինության մեջ ընդգրկելու, դրանք սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները և անհատական պաշտպանության միջոցները ոչնչացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է ՀՀ Կառավարության 2011թ. հունիսի 23-ի թիվ 867-Ն որոշմամբ: Որոշմամբ առաջին անգամ ոստիկանության պատմության մեջ հատուկ միջոցների և ծառայողների անհատական պաշտպանության միջոցների տեսակները հաստատվում են ոչ գաղտնի նորմատիվ իրավական ակտով, ինչը հասարակությանը հնարավորություն կտա վերահսկել ոստիկանական սպառազինության կոմպլեկտավորումը (լրակազմումը): Կարգի համաձայն ցանկում կարող են ընդգրկվել միայն այն հատուկ միջոցները, որոնց վերաբերյալ նախապես առկա կլինի ՀՀ առողջապահության նախարարության որոշումը՝ տվյալ հատուկ միջոցը մարդու նկատմամբ օգտագործելու թույլատրելիության մասին: Որոշմամբ կարգավորում են ստացել նաև հրազենը, հատուկ միջոցները սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները ոչնչացնելու ընթացակարգերը: Ի կատարումն նշված որոշման 2-րդ կետի՝ ՀՀ ոստիկանության պետի կողմից 17.08.2011թ. թիվ 2163-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակներ ընդգրկելու կամ դրանք սպառազինությունից հանելու վերաբերյալ եզրակացություն

			ներկայացնող հանձնաժողովի կազմը: Իսկ մինչև 2012 թվականի մարտի 1-ին տասնօրյակը ՀՀ առողջապահության նախարարի հրամանով նախատեսվում է հաստատել մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները: Մշակվել են ՀՀ ոստիկանությունում հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման, բանակցություններ վարելու, անձանց բերման ենթարկելիս /բերելիս/ ոստիկանության ծառայողների իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ և այլ ուղեցույցեր: Ուղեցույցերի նախագծերի մշակման աշխատանքներին աջակցել է նաև ԵԱՀԿ-ի փորձագետը: Մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության պետի 19.09.2011թ. 2505-Ա հրամանով հաստատվել է «Անձանց բերման ենթարկելիս /բերելիս/ ոստիկանության ծառայողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ուղեցույցը». 03.10.2011թ. թիվ 2676-Ա հրամանով հաստատվել է «Զանգվածային անկարգությունները կանխելու և խափանելու կարգը». 11.11.2011թ. թիվ 2760-Ա հրամանով՝ «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցը»: 27.09.2011թ. թիվ 2600-Ա հրամանով հաստատվել է «Հասարակական կարգը պահպանելիս և հասարակական անվտանգությունն ապահովելիս բանակցություններ վարելու վերաբերյալ ուղեցույցը». Մինչ այդ, բերման ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության լրացուցիչ երշխիքնե ր ստեղծելու նպատակով 2010թվականի ապրիլի 3- ին ՀՀ ոստիկանությունում հետաքննություն իրականացնող ստորաբաժանումների պետերին ՀՀ ոստիկանությանպետի կողմից տրվել էր թիվ 12 ցուցումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենս գրքի 128-րդ հոդվածի (ձերբակալում) համաձայն բերման ենթարկված անձանց խնդրանքով ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ փաստաբան հրավիրելու և բացատրությունները փաստաբանի մասնակցությամբ վերցնելու համար, ինչպես նաև ՀՀ կառավարության 14.06.2007թ. թիվ 818-Ն որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթական իրավունքների ցանկը և ծանուցման կարգը

			պահպանելու ուղղությամբ: ՀՀ ոստիկանության պետի կողմից 2011 թվականի մայիսի 30-ին ընդունվել է «ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցները գործադրելու եվ դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու, պահպանելու եվ պիտանելիության նկատմամբ պարբերաբար հսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 1-Ն հրամանը, որը սահմանված կարգով պետական գրանցում է ստացել ՀՀ արդարադատության նախարարությունում: Մշակվել է նաև «Ոստիկանության զորքերի սպառազինության մեջ ընդգրկված մարտական տեխնիկայի ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2011 թվականի օգոստոսի 25-ին թիվ 1237-ՆԳ որոշմամբ:
	ե) Քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացների հստակեցմանը, ոստիկանության կողմից իրականացվող միգրացիոն վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ		
31.	Ոստիկանության կողմից առանձին ծառայությունների մատուցման ժամանակակից չափանիշների ներդրում, տեխնիկական հագեցվածության ապահովում, աշխատանքների թափանցիկության	31.1. Քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացներում աշխատանքային նոր մեթոդների ներդրում, քաղաքացիների ընդունելության «մեկ դահլիճի» սկզբունքի կիրառում	2010 թվականի ընթացքում այս ոլորտում իրականացվել են թե օրենսդրական, և թե վարչարարական բնույթի բազմաթիվ միջոցառումներ: Այսպես՝ 1) Ներդրվել է քաղաքացիություն ստանալու /դադարեցնելու/, օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացներում աշխատանքային նոր մեթոդներ, մասնավորապես՝ գործում է արդեն քաղաքացիների ընդունելության «մեկ դահլիճի» սկզբունքը:
		31.2. Աշխատանքային սպասարկման պայմանների բարելավում (աշխատանքի կազմակերպման տեխնիկական հագեցվածության ապահովում, ՀՀ օրենսդրությունը լուսաբանող ցուցատախտակներով և այլ անհրաժեշտ գույքով կահավորված սպասասրահների ստեղծում և այլն)	Քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացներում աշխատանքային նոր մեթոդների ներդրման, քաղաքացիների ընդունելության «մեկ դահլիճի» սկզբունքի կիրառման գործընթացն արդեն իսկ առկա է ԱՎ վարչությունում. այն կիրառվում է օտարերկրացիների, ինչպես նաև քաղաքացիություն ստացող անձանց սպասարկման ընթացքում ,մեկ պատուհանի սկզբունքով՝ առանց անհարկի քաշքշուկներ ստեղծելու:
		31.3. «Ինտեգրված սահմանի կառավարման ծրագրի» շրջանակներում սահմանային անցակետերի տեխնիկական վերազինում, շենքային պայմանների բարելավում	ԱՎՎ արտաբյուջետային միջոցների հաշվին վերակառուցվել է ՀՀ ոստիկանության ԱՎՎ ,Նոր-Նորքիե անձնագրային բաժանմունքի շենքը, որի արդյունքում ներդրվել են քաղաքացիներին սպասարկելու նոր՝ ժամանակակից մեթոդներ: Երևան քաղաքի և ՀՀ որոշ մարզերի (Շիրակ,

	ապահովում	31.4. «Օտարերկրացիների մասին» և «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքների և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի մատչելիության ապահովում՝ դրանք տեղադրելով ՀՀ ոստիկանության, Արտաքին գործերի և Սփյուռքի նախարարությունների պաշտոնական կայքէջերում օտար լեզուներով (անգլերեն, ռուսերեն և այլն)	Արարատ, Արմավիր, Լոռի, Կոտայք, Գեղարքունիք) անձնագրային ստորաբաժանումներում տեղադրվել են վճարային բանկային շուրջ 30 տերմինալներ, ինչն էապես պարզեցրել է անձնագրային գործողությունների կատարման համար քաղաքացիների կողմից կատարվող վճարումների գործընթացը և միաժամանակ՝ վերացրել կոռուպցիոն ռիսկերը: Ներկայումս աշխատանքներ են ընթանում վճարային բանկային տերմինալների տեղադրման ցանցի ընդլայնման ուղղությամբ. ինտերնետային որակյալ կապի ապահովման պարագայում նշված տերմինալները հնարավոր կլինի տեղադրել նաև ՀՀ մյուս մարզերի անձնագրային ստորաբաժանումներում:
		31.5. ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ում և դիվանագիտական (հյուպատոսական) հիմնարկներում տեսանելի վայրերում և նրանց պաշտոնական կայքէջերում ՀՀ քաղաքացիության և օտարերկրյա քաղաքացիների մասին օրենսդրության առանձին դրույթները մեկնաբանող գործողությունների պարզեցված սխեմատիկ պատկերների (ալգորիթմի) զետեղում	Սույն թվականի հուլիս ամսին շահագործման է հանձնվել Ոստիկանության Աշտարակի, իսկ նոյեմբերի 22-ին՝ Մաշտոցի անձնագրային ծառայությունների նոր շենքերը: Դեկտեմբերի 21-ին ավարտել են նաև Ավանի անձնագրային ծառայության սպասարկման տարածքի բարեկարգման աշխատանքները: ԱՎՎ արտաբյուջետային միջոցների հաշվին Երևան քաղաքի բոլոր անձնագրային ծառայություններում և ԱՎՎ-ում տեղադրվել են տեսադիտարկման համակարգեր (տեսախցիկներ), որոնք հնարավորություն են տալիս վերահսկել անձնագրային ծառայությունների աշխատանքները իրական ժամանակի մեջ (on-line ռեժիմով): **Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագրի աջակցությամբ** Բագրատաշեն սահմանային անցակետում ավելացել է մեկ պատուհան ևս՝ տրամադրվել է նոր հարմարավետ սենյակ, կառուցվել է ծածկ և օտարեկրացիների սպասարկումն իրականացվում է անհամեմատ բարելավված պայմաններում: Նոր սենյակը հագեցած է տեխնիկապես, ունի աշխատանքային բավարար պայմաններ, ավելացել է նաև մեկ աշխատատեղ: Հարավկովկասյան երկաթուղի ՓԲԸ-ի օժանդակությամբ տրամադրվել է նոր վերանորոգված աշխատասենյակ, իսկՀարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագրի շրջանակներում Այրում սահմանայինանցակետի ՀՀ ոստիկանության ԱՎՎ ծառայությանը տրամադրվել են անհրաժեշտ տեխնիկական միջոցներ՝ վիզաներիտրամադրման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով: ՀԿՍՀԿ ծրագրի օժանդակությամբձեռք են բերվել նաև եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) վահանակներ, որոնք փակցվել են ՀՀ բոլոր սահմանայինանցակետերում: Վահանակների վրա զետեղված է ՀՀ պետական սահմանը հատող օտարերկրացիներին անհրաժեշտողջ տեղեկատվությունը, որը թույլ է տալիս նրանց առավել հեշտ կողմնորոշվել՝ չխախտելով ՀՀ օրենսդրությունը: Բարեկարգման աշխատանքներ են իրականացվել նաև Մեղրի սահմանային անցակետում. ձեռք է բերվել նոր գույք ևտեխնիկա, ստեղծվել են օտարերկրացիների սպասարկման համար առավել

			հարմարավետ պայմաններ: «Օտարերկրացիների մասին» և «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքների եւ դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի մատչելիության ապահովման նպատակով ՀՀ ոստիկանության «www.police.am» կայքում տեղադրվել է ոլորտին վերաբերող ՀՀ օրենսդրությունը՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Բացի այդ գրություններ են ուղարկվել ԱԳՆ և ՀՀ Սփյուռքի նախարարություն՝ համապատասխան կայքերում իրավական ակտերը օտար լեզուներով (ռուսերեն, անգլերեն) տեղադրելու վերաբերյալ: Ոլորտին վերաբերող նոր ընդունված իրավական ակտերը ևս պարբերաբար զետեղվում են ՀՀ ոստիկանության «www.police.am» և Անձնագրային և վիզաների վարչության նոր ստեղծված «passportvisa.am» պաշտոնական էլեկտրոնային կայքերում և ուղարկվում ՀՀ ԱԳՆ և Սփյուռքի նախարարություններ:
32.	Վիզաների և կացության կարգավիճակների ձեռքբերման ընթացակարգերի կատարելագործում և հստակեցում	32.1. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում 32.2. «ՀՀ կառավարության 04.04.2008թ. թիվ 329-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում 32.3. «Կացության հատուկ կարգավիճակ ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի կարգադրության նախագծի մշակում 32.4. Քաղաքացիություն և կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ դիմումների ընթացքի վերաբերյալ էլեկտրոնային համակարգի միջոցով տեղեկատվություն ստանալու հնարավորության ստեղծում	Մշակվել են «Օտարերկրացիների մասին», «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը, «ՀՀ մուտքի և ելքի մասին» նոր օրենքի նախագիծը: «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրինագծերն արդեն իսկ 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից դեկտեմբերի 8-ին: «Օտարերկրացիների մասին»ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվել է առանց մուտքի վիզայի ՀՀ ժամանելու իրավունք ունեցող օտարերկրացիների համար ՀՀ տարածքում մնալու առավելագույն՝ 180-օրյա ժամկետ, արտոնություն է սահմանվել «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում նշված պետությունների ազգությամբ հայ քաղաքացիների համար՝ նախատեսելով առանց հրավերի ՀՀ պետական սահմանային անցման կետերում մուտքի վիզայի տրամադրման հնարավորություն, կարգավորվել են վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անվավեր փաստաթղթերով օտարերկրացիների՝ ՀՀ-ից ելքին վերաբերվող հարաբերությունները, հստակեցվել ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրման հիմքերը, ինչպես նաև վերացվել գործող օրենքում տեղ գտած բացերն ու հակասությունները, օրենքի որոշ հոդվածների ոչ հստակ ձևակերպումները՝ նպատակ ունենալով նվազեցնել կոռուպցիոն հնարավոր ռիսկերն օտարերկրացիների մասնակցությամբ ծագող հարաբերություններում: Միաժամանակ ՀՀ Ոստիկանության պետի հրամանով օտարերկրացիների մասին ՀՀ օրենսդրության խախտումների համար վարչական տույժի ենթարկելու ոստիկանության տարածքային ստորաբաժանումների պետերին

			վերապահված լիազորությունը վերապահվել է ԱՎՎ սահմանային անցման կետերի պետերին, ինչի արդյունքուն էականորեն կրճատվել են վարչարարության ժամկետները և օտարերկրացիների արդարացի դժգոհությունը. փաստորեն նախկինում խախտումն արձանագրում էին ԱՎՎ սահմանային անցման կետերի աշխատակիցները, իսկ վարչական տույժ նշանակելու մասին որոշումները կայացնում էին ոստիկանության տարածքային բաժնի պետերը: ՀՀ ոստիկանության ԱՎ վարչությունում ստեղծվել է նաև տեղեկատվական պորտալ համապատասխան հեռախոսահամարով (090007007): Նշված հեռախոսահամարին զանգահարելով՝ քաղաքացիները կարող են ստանալ ԱՎՎ ոլորտի օրենսդրության և հարակից այլ հարցերի վերաբերյալ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով պարզաբանումներ: ԱՎՎ կազմում 2010 թվականին ստեղծվել է Հսկողության և վերլուծության բաժին, որը իրականացնում է նաև ԱՎՎ-ում գործող թեժ գծի միջոցով ստացվող տեղեկատվության մշակման և վերլուծության աշխատանքները: Թեժ գծի գործողության արդյունքներով միայն 2010 թվականի ընթացքում անց են կացվել 3 տասնյակից ավելի ծառայողական քննություններ: Քաղաքացիության և կացության կարգավիճակի վերաբերյալ ներկայացվող դիմումների ընթացքի մասին էլեկտրոնային համակարգի միջոցով տեղեկատվություն ստանալու հնարավորության ստեղծման համար ՀՀ ոստիկանության ԱՎ վարչության համակարգչային սերվերում տեղադրվել է էլեկտրոնային գրագրության ծրագիրը և ԱՎՎ կառուցվածքը: Դիմումներ հանձնելիս այսուհետ քաղաքացուն տրվում է իր դիմումի համարը, որի օգնությամբ վերջինս կարողանում է ստանալ սպառիչ տեղեկատվություն իր դիմում ընթացքի վերաբերյալ 2011 թվականից գործարկված ԱՎՎ պաշտոնական «passportvisa.am» էլեկտրոնային կայքում: Կրճատվել է Անձնագրային և վիզաների վարչության կողմից անձնագրային գործողությունների կատարման ընթացքում պահանջվող փաստաթղթերի և գործողությունների ցանկը (օրինակ՝ վերացել են բնակչության պետական ռեգիստրում հաշվառվելու դեպքում քաղաքացիների կողմից տնային գիրք ներկայացնելու պահանջը, քաղաքացիների անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշում կատարալիս համապատասխան մատյաններում քաղաքացիների կողմից ստորագրելու անհրաժեշտությունը, օտարերկրյա պետություններում վավերականության վերաբերյալ նշում կատարալու, ինչպես նաև անձնագրի ժամկետի երկարաձգման համար քաղաքացու կողմից դիմումներ ներկայացնելու պահանջը): Բացի այդ, հնարավորինս կրճատվել են նաև ԱՎ վարչության կողմից շրջանառվող ներքին փաստաթղթերը, ինչը վարչարարության ընթացքում լրացուցիչ ժամանակ խնայելու երաշխիք

			կարող է հանդիսանալ: 2011 թվականի հոկտեմբեր ամսին Ոստիկանության համապատասխան իրավական ակտերով սահմանվել են անձնագրային գործողությունների կատարման համար ներկայացվող դիմումի, անձնական հաշվառման քարտի, անձին ժամանակավորապես տրվող ինքնությունը հաստատող փաստաթղթի օրինակելի ձևերը: ԱՎՎ կողմից մինչ այդ կիրառվում էին խորհրդային ժամանակահատվածում սահմանված նմուշները: Ոստիկանության պետի հրամանով (03.02.2011թ. 159-Ա) 5-օրյա ժամկետ է սահմանվել անձին՝ բնակչության պետական ռեգիստրում փաստացի բնակության վայրի հասցեով հաշվառելու դեպքում անձի փաստացի բնակության հանգամանքը ոստիկանության տեղամասային տեսուչի կողմից պարզելու և անձնագրային ծառայությանը տեղեկացնելու համար: Նախկինում տվյալ գործողության համար որևէ ժամկետ սահմանված չէր: Համապատասխան ցուցում է տրվել անձնագրային ծառայություններին՝ անչափահաս քաղաքացիների անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերականության մասին նշումը նաև երեք տարուց պակաս՝ ըստ ծնողի նշած ժամկետի կատարելու վերաբերյալ (բայց ոչ պակաս, քան մեկ տարի): Անձնագրային և վիզաների վարչության կողմից քաղաքացիներին ծառայություններ մատուցելու ընթացքում իրականացվող վարչարարությունն առավել արդյունավետ և գրագետ իրականացնելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի աջակցությամբ՝ Անձնագրային և վիզաների վարչության ծառայողների համար սեմինար պարապմունքներ են անցկացվել ՀՀ Սահմանադրության, ,Վարչական վարույթի և վարչարարության հիմունքների մասինե ՀՀ օրենքի, ինչպես նաև քաղաքացիների հետ շփվելու ընթացքում հոգեբանության վերաբերյալ թեմաներով:
33.	ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու գործընթացի պարզեցում և հստակեցում	33.1. «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում 33.2. «ՀՀ կառավարության 01.11.2007թ. թիվ 1290-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում 33.3. «ՀՀ կառավարության 23.11.2007թ. թիվ 1390-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի	Մշակվել են «Օտարերկրացիների մասին», «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը, «ՀՀ մուտքի և ելքի մասին» նոր օրենքի նախագիծը: «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրինագծերն արդեն իսկ 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից դեկտեմբերի 8-ին: «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում, մասնավորապես, հստակեցվել են ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու օրենքով սահմանված գործընթացները, վերացվել օրենքում առկա բացերն ու հակասությունները, կարգավորվել են ՀՀ երկաքաղաքացի հանդիսացող անձանց երեխաների

		մշակում 33.4. «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ՀՀ քաղաքացու անձնագրի ձևակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու գործընթացները, ինչպես նաև վերջիններիս՝ ՀՀ զինված ուժերում զորակոչելու հետ կապված հարաբերությունները: ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 411-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 1290-Ն որոշման մեջ: Արդյունքում՝ հանվել են ՀՀ քաղաքացիություն ստացող անձի երդման արարողությունը ՀՀ Նախագահի ՀՀ քաղաքացիություն շնորհելու մասին հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում իրականացնելու վերաբերյալ դրույթները՝ նշած գործողությունն իրականացնելու համար չնախատեսելով որևէ ժամանակային սահմանափակում: ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 59-Ն և 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 595-Ն որոշումներով փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1390-Ն որոշման մեջ: Կատարված փոփոխությունների նպատակն էր Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացնելու կարգի կիրառման դյուրացումը, փաստաթղթաշրջանառության արդյունավետության բարձրացումը: Արդյունքում կրճատվել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ դրանով իսկ պարզեցնելով քաղաքացիություն ստանալու գործընթացը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկից հանվել են դատվածության, առողջական վիճակի, վերջին 3 տարվա ընթացքում ՀՀ-ում բնակվելու մասին տեղեկանքները, ինքնակենսագրությունը և աշխատանքային գործունեության մասին փաստաթուղթը: Բացի այդ, կրճատվել են նաև ՀՀ քաղաքացիություն ստանալու համար ներկայացվող փաստաթղթերը՝ ՀՀ ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության և Արտաքին գործերի նախարարության կողմից ուսումնասիրելու համար սահմանված ժամկետները: 23.06.2011թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է թիվ 974-Ն որոշումը, որով կանոնակարգվել են օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացու անձնագիր տրամադրելու հետ կապված հարաբերությունները:
34.	ՀՀ քաղաքացի-ների ՀՀ-ից մեկ-նելու և ՀՀ մուտք գործելու	34.1. «ՀՀ քաղաքացիների ՀՀ-ից ելքի և ՀՀ մուտքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացներում աշխատանքային նոր մեթոդների ներդրման, քաղաքացիների ընդունելության ,մեկ դահլիճիե սկզբունքի կիրառման գործընթացն արդեն իսկ առկա է ԱՎ վարչությունում. այն կիրառվում է օտարերկրացիների, ինչպես նաև քաղաքացիություն ստացող անձանց սպասարկման ընթացքում ,մեկ պատուհանի սկզբունքովե՝ առանց անհարկի

	հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում		քաշքշուկներ ստեղծելու: Փոփոխություն է կատարվել ՀՀ ոստիկանության պետի 15.08.2008թ. «Անձնագրային գործողությունների կարգի պարզաբանումները հաստատելու մասին» թիվ 12-Ն հրամանում, որի արդյունքում հստակեցվել են անձնագրային գործողություններ կատարելու ժամկետները: Նախատեսվել են անձնագրային գործողությունների համար աննախադեպ կարճ ժամկետներ: Բացի այդ, նախատեսվել է, որ անձնագիրն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշում կատարելու, անձնագրի վավերականության ժամկետը երկարաձգելու համար կամ անձնագիրը ստանալու համար այլևս պարտադիր չէ քաղաքացու անձամբ ներկայանալը. վերջինս դրա համար կարող է լիազորել նաև երրորդ անձի:
զ) Նոր անձնագրային համակարգի ներդրման հետ կապված բարեփոխումներ			
35.	Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրում	35.1. «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին», «Նույնականացման քարտի մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում լրացումներ կատարելու մասին», «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակում	2011 թվականի նոյեմբերի 30-ին ընդունվել են «Նույնականացման քարտերի մասին», «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին», «Հանրային ծառայությունների համարանիշի մասին», ,ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքները, որոնք դեկտեմբերի 21-ին ստորագրվել են ՀՀ Նախագահի կողմից: Օրենքներն ուժի մեջ են մտնելու 2012 թվականի հունիսի 1-ից:
		35.2. Համակարգի ներդրման վերաբերյալ միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացվող առաջարկությունների ամփոփում	Անձնագրեր և քարտեր արտադրող, ծրագրային ապահովում իրականացնող, անձնագրերի և քարտերի ձևակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման և տեղադրման նպատակով կազմակերպված մրցույթը սահմանված ժամկետում կայացել է: Ներկայումս ընթանում են համակարգի ներդրման աշխատանքները հաղթող ճանաչված լեհական կազմակերպության հետ:
		35.3. Համակարգի ներդրման նպատակով տեխնիկական պահանջների մշակում	Կենսաչափական տվյալներով փաստաթղթերի ներդրման ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և սահմանային անցման կետերում տեղադրել անձնագիր կարդացող և ստուգող սարքավորումներ:
		35.4. Անձնագրեր և քարտեր արտադրող, ծրագրային ապահովում իրականացնող, անձնագրերի և քարտերի ձևակերպման համար սարքավորումների ձեռքբերման և տեղադրման նպատակով մրցույթի կազմակերպում	Կենսաչափական տվյալներով փաստաթղթերի ներդրման ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և սահմանային անցման կետերում տեղադրել անձնագիր

		35.5. Համակարգի ներդրման նպատակով խորհրդատվություն ստանալու համար կազմակերպել հանդիպումներ միջազգային կազմակերպությունների հետ	կարդացող և ստուգող սարքավորումներ 2011 թվականի դեկտեմբերի 21-ին բարեկարգման աշխատանքներն ավարտելու հետ միաժամանակ Ավանի անձնագրային ստորաբաժանման շենքում տեղադրվել է պիլոտային համակարգ՝ թվային լուսանկարման, մատնահետքեր վերցնելու և քաղաքացու ստորագրությունը անձնագրում ներառելու համար անհրաժեշտ ծրագրի փորձարկման աշխատանքները սկսելու նպատակով: Համակարգի շահագործումը նախատեսվում է 2012 թվականի հունիսի 1-ից: ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 8-ի ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 28-26 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասինե թիվ 48 արձանագրային որոշմամբ հավանության են արժանացել ՀՀ քաղաքացու էլեկտրոնային անձնագրի և նույնականացման քարտի արտաքին ձևերը:
		35.6. Սահմանային անցման կետերում անձնագիր կարդացող և ստուգող սարքավորումների ձեռքբերում և տեղադրում	
		35.7. Կադրերի կրթություն և վերապատրաստում	
		35.8. Համակարգի ներդրում և շահագործում	
36.	Բնակչության պետական ռեգիստրի, ընտրողների ռեգիստրի համակարգերի բարեփոխում	36.1. «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և ՀՀ կառավարության 14.07.2005թ. «ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» թիվ 1231-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի թիվ 1407 որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 14-ի «ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» թիվ 1231-Ն որոշման մեջ, որի արդյունքում սահմանվել են հստակ ժամկետներ բնակչության պետական ռեգիստրում անհատական տվյալները մուտքագրելու, ինչպես նաև բնակչության պետական ռեգիստրից հաշվառման մասին տեղեկանքներ տրամադրելու համար: Արդյունքում՝ կրճատվել են հաշվառման գործողությունների համար նախատեսված ժամկետները՝ 7 օրվա փոխարեն սահմանվել է 3 օր, իսկ հաշվառումից հանելու հասկացությունը վերացել է: Այսուհետ քաղաքացին վերահաշվառման նպատակով կարիք չի ունենալու հաշվառումից հանվելու և հետո նոր մեկ այլ հաշվառման վայրում հաշվառվելու, այլ դիմելով միայն նոր հաշվառման վայրի պետական ռեգիստրի ստորաբաժանում (անձնագրային բաժանմունք)՝ ավտոմատ հանվելու է հին հաշվառումից: Բացի այդ, ՀՀ Պաշտպանության նախարարության հետ համատեղ տարվել են աշխատանքներ, որոնց արդյունքում ՀՀ զինապարտ քաղաքացիներն իրենց զինվորական հաշվառման վայրը փոխելիս ևս այսուհետ դիմում են միայն նոր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: ՀՀ կառավարության հանձնարարությամբ Բնակչության պետական ռեգիստրում առկա տեղեկատվության ամբողջականությունն ապահովելու նպատակով 2011 թվականի ընթացքում ԱՎ վարչության և ԱՎՎ ստորաբաժանումների կողմից Բնակչության պետական ռեգիստրում հաշվառվել է մինչև 16 տարեկան՝ շուրջ 400.000 անչափահաս անձ: Նույն ժամանակահատվածում շտկվել են նաև Բնակչության պետական ռեգիստրում 158 հազարից ավելի հասցեների վերաբերյալ տեղեկություններում առկա անճշտությունները:
		36.2. Ընտրողներին քվեարկության օրվա, քվեարկության տեղի և ժամանակի մասին ծանուցելու նպատակով ձևավորվող տեղեկատվության տրամադրման գործընթացի ավտոմատացում	
		36.3. Ինտերնետ տեղեկատվական համակարգում ընտրողների ցուցակները տեղադրելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման գործընթացի ավտոմատացում	
		36.4. Համապետական ընտրությունների դեպքում ընտրողների հաշվառման վայրի ցուցակից ընտրողին ժամանակավորապես հանելու և նրա	

		գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկելու գործընթացի ավտոմատացում	Բացի այդ, ֆիզիկական անձանց հաշվառման հասցեների վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պահանջվող տեղեկանքների տրամադրումը անվճար դարձնելու նպատակով ՀՀ Ոստիկանության կողմից մշակվել է «Պետական տուրքի մասինե ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն ԱԺ կողմից ընդունվել է 15.11.2010 թվականին (ՀՕ-168-Ն, ուժի մեջ է մտել 20.12.2010 թվականից): Միաժամանակ, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման հասցեների մասին ֆիզիկական անձանց տեղեկանքների վճարովի տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողություն իրականացնելու և հնարավոր կոռուպցիոն ռիսկերը բացառելու նպատակով 24.08.2010 թ. ՀՀ Ոստիկանության պետի կողմից սահմանվել է տեղեկանքի ձևը՝ հերթական հաշվառման համարների առկայությամբ: Արդյունքում կրկնակի աճել է այս գծով պետական բյուջե գանձվող պետական տուրքի գումարների չափը: Ընտրողներին քվեարկության օրվա, քվեարկության տեղի և ժամանակի մասին ծանուցելու նպատակով ձևավորվող տեղեկատվության փոխանցման և ինտերնետային տեղեկատվական համակարգում ընտրողների ցուցակների տեղադրման աշխատանքներն ավտոմատացված եղանակով իրականացնելու նպատակով ԵրՄՄԳՀ ինստիտուտը նախապատրաստել է աշխատանքների բովանդակության գնահատականը և գնահաշվարկը: Կազմվել է տեխնիկական առաջադրանք և ներկայացվել ՀՀ կառավարության Համաշխարհային բանկ պետական հատվածի արդիականացման ծրագրերի իրականացման գրասենյակ՝ անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովելու նպատակով: Նշված աշխատանքների իրականացման նպատակով կնքված պայմանագրի համաձայն՝ 3 փուլով նախատեսված հաշվետվությունները ներկայացված են: Չնայած այն հանգամանքին, որ միջոցառումների կատարման վերջնաժամկետ պայմանագրով նախանշված էր 2012 թվականի հունվարի 12-ը՝ Ընտրողներին քվեարկության օրվա, քվեարկության տեղի և ժամանակի մասին ծանուցելու նպատակով համապատասխան տեղեկատվության ձևավորման, ինչպես նաև ընտրողների ցուցակներն Ինտերնետային տեղեկատվական համակարգում տեղադրելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման գործընթացի ավտոմատացման աշխատանքներն ավարտված են: Ավտոմատացված է նաև համապետական ընտրությունների դեպքում ընտրողի հաշվառման վայրի ցուցակից ընտրողին ժամանակավորապես հանելու և փաստացի գտնվելու վայրի ընտրական տեղամասի լրացուցիչ ընտրացուցակներում ընդգրկելու գործընթացը: 2011 թվականին նոր Ընտրական օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված, ՀՀ ոստիկանության կողմից 19.08.11թ. գրություն է ներկայացվել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ ՀՀ-
		36.5. «Ընտրողների ցուցակները էլեկտրոնային կրիչով կամ թղթային տարբերակով տրամադրելու դեպքում վճարի չափի սահմանման վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	
		36.6. Քաղաքացիների անհատական հաշվառման տվյալների կուտակման աղբյուր հանդիսացող պետական կառավարման մարմինների տվյալների փոխանակման ստանդարտների, ծրագրային միջոցների մշակում (անկախ տվյալների ձևաչափերից և կազմավորման միջավայրից), էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման հնարավորության ապահովում	
		36.7. Համայնքների հասցեների համապատասխանեցում ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներին	

			ում 2012-2013թթ. Կայանալիք ընտրությունների ընթացքում Անձնագրային և վիզաների վարչությանը և տարածքային անձնագրային ծառայություններին անհրաժեշտ հատուկ և համակարգչային տեխնիկայի, ընտրողների ռեգիստրում անհրաժեշտ ծրագրային փոփոխություններ իրականացնելու համար պահանջվող ֆինանսավորման չափի վերաբերյալ (նշված ծրագրային աշխատանքների իրականացման համար ԵրՄՄԳՀ ինստիտուտի կողմից կազմվել է աշխատանքի բովանդակությունը, որի կատարման համար պահանջվելու է 14,500,000 ՀՀ դրամ):
	է) Թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ		
37.	Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործում և դրանց համապատասխանեցում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի	37.1. ՀՀ համապատասխան ոլորտի միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ ՄԱԿ-ի կոնվենցիաների դրույթների վերլուծության կատարում և ՀՀ իրավական համակարգում դրանց առավել ամբողջական ընդգրկման և կենսագործման ապահովում	Մշակվել է նաև ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով կնախատեսվի պրեկուրսորների ապօրինի շրջանառության առանձին դեպքերի քրեականացում: Նախագիծը համաձայնեցվել է շահագրգիռ պետական մարմինների հետ, ենթարկվել է պետական-իրավական փորձաքննության և սահմանված կարգով հավանության արժանացել ՀՀ Կառավարության կողմից: Օրինագծով, մասնավորապես, սահմանվում են ապօրինի շրջանառվող պրեկուրսորների չափաքանակները, տարանջատվում նախատեսված պատասխանատվությունն ըստ այդ չափաքանակների, ազգային օրենսդրությունը համապատասխանեցվում է ՄԱԿ-ի կողմից ընդունված իրավական փաստաթղթերին: Օրինագիծը 07.12.2011թ. ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ: ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 1254-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել 2003 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1129-Ն որոշման մեջ, որի նպատակն էր ՀՀ-ում սահմանափակ շրջանառությամբ և հսկման ենթակա պրեկուրսորների ցանկը համապատասխանեցնել «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի 1988 թվականի դեկտեմբերի 19-ի կոնվենցիային:
		37.2. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ ՀՀ ներպետական իրավական ակտերի համակարգային վերլուծության իրականացում, անհրաժեշտության դեպքում՝ դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենսդրական առաջարկությունների ներկայացում	
		37.3. ՀՀ ներպետական իրավական ակտերում, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական հայերեն տեքստերում թմրամիջոցներին և հոգեմետ նյութերին առնչվող հասկացությունների միասնականացում	
		37.4. Պրեկուրսորների չափաբաժինները սահմանելու և պրեկուրսորների մաքսանենգության նախատեսման համար «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու	

	պահանջներին	մասին» օրենքի նախագծի մշակում	
38.	Թմրամիջոց-ների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորնե ր ի Հայաստանի Հանրապետութ յան ներթափանցու մը կանխելու ուղղությամբ միջազգային համագործակ-ցության ակտիվացում	38.1. Համապատասխան միջպետական համաձայնագրերի կնքում (նախնառաջ հարևան երկրների հետ)՝ ուղղված օտարերկրյա պետություններից ՀՀ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի ներմուծման կանխմանը և նշված ոլորտում սերտ փոխգործակցության ապահովմանը	2010թ. հունիսի 10-ին Թբիլիսիում ՀՀ, Վրաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության և UNDP-ի միջև ստորագրվել է «Թմրամիջոցների հսկողության և փողերի լվացման դեմ գործունեությունում համագործակցության» փոխըմբռնման հուշագիր: Համագործակցության շրջանակներում 2010 թվականի հոկտեմբերին ՀՀ ոստիկանության պետի և Իրանի ԻՀ ՆԳ նախարարի կողմից Թեհրանում քննարկվել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ոլորտում երկու երկրների ոստիկանական ծառայությունների համագործակցության խնդիրները: Արդյունքում ստորագրվել է նշված ոլորտում համագործակցությունն ամրապնդող արձանագրություն: Պայմանավորվածություն է ձեռք բերվել խնդրո առարկա հարցերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով փորձագիտական խմբերի ստեղծման, մաքսանենգ ճանապարհով թմրանյութերի տեղափոխմանը վերաբերող տեղեկատվության փոխանակման ու համագործակցության ընդլայնման և այլ հարցերի շուրջ: 2011 թվականի փետրվարի 2-ին ընդունվել է նաև ՀՀ ոստիկանության պետի և ՊԵԿ նախագահի թիվ 287-Ա/37-Ա համատեղ հրամանը՝ օդանավակայանում համատեղ խմբերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ միասնական պայքար իրականացնելու համար:
		38.2. «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների վերահսկելի մատակարարումների և ստուգողական գնումների իրականացման կարգը սահմանելու մասին» համատեղ հրամանի նախագծի մշակում	
		38.3. «ՀՀ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների արտահանումն ու ներմուծումը թույլատրող ՀՀ կառավարության լիազոր պետական կառավարման մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	
		38.4. «Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի» ծրագրի շրջանակներում «Զվարթնոց» օ/կ «Օդանավակայաններում թմրամիջոցների դեմ պայքարի պրոֆիլավորման» բաժնի հնարավորությունների օգտագործում	
39.	Ազատազրկ-ման վայրերում գտնվող դատա-պարտյալների շրջանում թմրամիջոց-ների, հոգեմետ	39.1. «ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի 825-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում՝ ուղղված ազատազրկման վայրերում թմրակախվածության համար հարկադիր բուժում անցնող, ինչպես նաև դիսպանսերային հսկողության տակ գտնվող թմրամոլների	Նախապատրաստվել է «ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը նպատակ ունի կանոնակարգել ազատազրկման վայրերում թմրակախվածության համար հարկադիր բուժում անցնող, ինչպես նաև դիսպանսերային հսկողության տակ գտնվող թմրամոլների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ոստիկանությանը տրամադրելու գործընթացը: Նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության 03.11.2011թ. նիստում: ՀՀ ոստիկանության բարեփոխումների ծրագրի շրջանակներում, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին

	նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության նախականխում	վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ոստիկանությանը տրամադրելու գործընթացի կանոնակարգմանը 39.2. Ազատազրկման վայրերում գտնվող թմրամոլների բժշկական վերականգնողական աշխատանքների կատարելագործում	հակազդելու և թմրամոլության կանխարգելման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 23-Լ հրամանով ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում ներդրվել է մեթադոնային փոխարինող բուժում:
40.	Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտում ընդգրկված մարմինների նյութատեխնիկական բազայի բարելավում	40.1. Սահմանային անցակետերում թմրամիջոցներ հայտնաբերող սարքերի ձեռքբերում և տեղադրում 40.2. Կասկածվող անձանց օրգանիզմում թմրամիջոցների առկայության նախնական ստուգման, ինչպես նաև թմրամիջոցի տեսակը տեղում որոշող էքսպրես-թեսթերի ձեռքբերում և կիրառում 40.3. Թմրամիջոցների, այդ թվում սինթետիկ ծագում ունեցող, հոգեներգործուն նյութերի, դեղամիջոցների որակական և քանակական քիմիական համալիր հետազոտություններ անցկացնելու նպատակով ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական ծառայության վերազինում: 40.4. Հանրապետության մարզերում ոստիկանության շնաբուծական ստորաբաժանումների ստեղծում:	ԱՄՆ դեսպանության կողմից տեխնիկական աջակցություն է ցուցաբերվել ԿՀԴՊԳՎ Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարն իրականացնող՝ 4-րդ վարչությանը. մասնավորապես տրամադրվել է համակարգչային տեխնիկա՝ (50.000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով): ՄԱԿ-ի զարգացման ծրագրի օժանդակությամբ արդեն իսկ ձեռք են բերվել կասկածվող անձանց օրգանիզմում թմրամիջոցների առկայության նախնական ստուգման, ինչպես նաեւ թմրամիջոցի տեսակը տեղում որոշող էքսպրես թեստերի նոր խմբաքանակ, որը կօգտագործվի ՀՀ ոստիկանության իրավասու ստորաբաժանումների կողմից թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարում:
41.	Մարդկանց առևտրի զոհերի պաշտպանության և ռեաբիլիտացիայի մեխանիզմի կատարելագործում	41.1. «ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների և ԿՀԴՊԳՎ միջև թրաֆիքինգի զոհերի ուղղորդման և թրաֆիքինգի մասին տեղեկատվության փոխանակման կարգը սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	
42.	Թրաֆիքինգի և	42.1. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ	Թրաֆիքինգի և հարակից հանցագործությունների դեմ պայքարի օրենսդրական

	հարակից հանցագործությունների դեմ պայքարի օրենսդրական բարեփոխում	և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	բարեփոխումների նպատակով մշակվել ոստիկանության նախաձեռնությամբ ՀՀ Ազգային Ժողով է ուղարկվել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրինագիծը, որն ընդունվել է 01.03.11թ., վավերացվել ՀՀ Նախագահի կողմից և ուժի մեջ մտել ապրիլի 9-ից:
43.	Ռիսկային բիզնես ոլորտների կանոնակարգում (աշխատանքի տեղավորման, տուրիստական գործակալությունների, հյուրանոցների, սաունաների, գիշերային ակումբների գործունեության)	43.1. «ՀՀ լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում	
	ը) Կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման, կիբեռհանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ		
44.	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված մեթոդների ներդրմանն	44.1. «Վերահսկելի մատակարարում և գնում» օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդի իրականացման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցառումների իրականացման շրջանակներում ՀՀ ոստիկանության կողմից մշակվել և ՀՀ արդարադատության նախարարությունում պետական գրանցում են ստացել ՀՀ ոստիկանության պետի 2 նորմատիվ հրամաններ՝ 2010 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ գաղտնի հիմունքներով համագործակցության և գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 3-ՆՀԳ և 2010 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման և արդյունքների փաստաթղթավորման
		44.2. Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման առանձին մեթոդների կիրառման մասին ոստիկանության պետի հրամանների նախագծերի մշակում	
		44.3. Անհետաձգելի դեպքերում հեռախոսային	

	ուղղված միջոցառումների իրականացում	խոսակցությունների գաղտնալսման թույլտվության, դրանց վերաբերյալ տեղեկությունների անհապաղ ստացման մեխանիզմի կատարելագործում	կարգը սահմանելու մասին» թիվ 2-ՆՀԳ հրամանները: Բացի այդ, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի թիվ 845-ՆՀԳ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից օպերատիվ հաշվառման գործեր կազմելու, վարելու, կարճելու, հաշվառման գործերի և դրանցով մշակվող, ստուգվող անձանց գրանցման և օպերատիվ հաշվառման կարգը»: Մշակվել են նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների 2 նախագիծ (կաշառք ստանալու կաշառք տալու նմանակման և հեռախոսային խոսակցությունների վերահսկման ՕՀՄ-ներին վերաբերող), որոնք դրվել են արտաքին շրջանառության մեջ:
45.	Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործում	45.1. Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում ԵՄ անդամ երկրների ոստիկանական կառույցների հետ համաձայնագրերի կնքում 45.2. Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի առաջատար երկրների փորձի ուսումնասիրում 45.3. Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կատարելագործման ծրագրի մշակում	Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործման համար ուսումնասիրվել է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի առաջատար երկրների փորձը, դրա հետ կապված ոստիկանության համապատասխան աշխատակիցները անցել են վերապատրստման դասընթացներ: Ներկայումս ԵՄ փորձագետի հետ իրականացվում են միջազգային փորձի ուսումնասիրություն: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում փորձագետն աջակցելու և խորհրդատվություն է տրամադրելու ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչությանը Եվրոպական երկրների կազմակերպված հանցավորության դեմ պայքարի առաջավոր փորձը ներդնելու և ԿՀԴՊ ԳՎ ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու, ինչպես նաև այդ նպատակով ԵՄ Թվինինգ, Տայեքս, Սիգմա և այլ գործիքների միջոցով օժանդակություն ստանալու հարցում: Հայաստան-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագրի և ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների շրջանակներում ոստիկանության կողմից մշակվել է «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման» ազգային ծրագիրը, որը հավանության է արժանացել 2011 թվականի նոյեմբերի 24-ին Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ միջգերատեսչական հանձնաժողովի կողմից, այնուհետև Ազգային անվտանգության խորհրդի նիստում: Ազգային ծրագիրը հաստատվել է ՀՀ Նախագահի 2011 թ. դեկտեմբերի 29-ի թիվ ՆԿ-232-Ն կարգադրությամբ: ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծված Պլաստիկ քարտերի և այլ վճարման միջոցների կեղծարարության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման միջգերատեսչական հանձնաժողովում մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
46.	Կոռուպցիոն	46.1. «Ֆիզիկական և իրավաբանական անձանց	Կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար

	հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացում	տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելու և շահագործելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	ուսումնասիրվել է կոռուպցիայի դեմ պայքարի (լատենտայնության նվազեցման) միջազգային փորձը: Ոստիկանության ուսումնական կենտրոնում ոստիկանության համապատասխան ծառայողների համար անց են կացվել կոռուպցիոն բնույթի հանցատեսակների դեմ պայքարի վերաբերյալ դասընթացներ:
		46.2. Տեղեկատվական համակարգի ստեղծում, որում կինտեգրվեն ֆիզիկական և իրավաբանական անձանց տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվական շտեմարանները (անշարժ գույքի կադաստր, ձեռնարկությունների պետական ռեգիստր, հարկային և մաքսային ծառայություններ, պետական գնումներ, լիցենզիա տրամադրող մարմիններ, մրցութային և դրամաշնորհային կազմակերպություններ)	
		46.3. Կոռուպցիայի դեմ պայքարի (լատենտայնության նվազեցման) միջազգային փորձի ուսումնասիրում, անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավական ակտերի մշակում	
		46.4. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացների շարունակականության ապահովում, ուսումնաթեմատիկ պլանների կատարելագործում՝ ուղղված աշխատանքի նոր ձևերի և մեթոդների ներդրմանը, տեսական և գործնական գիտելիքների համալրմանը	
47.	Կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեպքերով հե-	47.1. Միմյանց համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, «Բանկային գաղտնիքի մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքների դրույթները	

	տաքննության մարմնին դատարանի որոշման հիման վրա բանկային և վարկային կազմակերպություններից անհրաժեշտ տեղեկություն-ների տրամա-դրման գործընթացի կանոնակարգում		
48.	Մտավոր սեփականության ոլորտում իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացում	48.1. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում 48.2. «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	
49.	Անօրինական միգրացիայի հակազդման և կանխարգելման աշխատանքների բարելավում	49.1. Անօրինական միգրացիայի դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրություն, համապատասխան առաջարկությունների մշակում 49.2. «Հայաստանում միգրացիայի ոլորտի բարեփոխումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Միգրացիոն վարչարարության կատարելագործման նպատակով 2011 թվականի դեկտեմբերի 7-ին ոստիկանության ԱՎՎ և ԿՀԴՊԳՎ համապատասխան ծառայողները մասնակցեցին ՀՀ Արտաքին գործերի նախարարության և Միգրացիայի Միջազգային Կազմակերպության կողմից ՀՀ-ում ԵՄ խորհրդատվական խմբի և Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոնի աջակցությամբ կազմակերպված համաժողովին՝ նվիրված Շարժունակության շուրջ գործընկերության վերաբերյալ Եվրոպական Միության և ՀՀ-ի միջև 2011 թվականի հոկտեմբերի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված համատեղ հռչակագրի դրույթների քննարկմանը:

50.	Կիբեռհանցա-գործություն-ների դեմ պայքարի բարելավում	50.1. Ինտերնետային կապի օգտագործմամբ իրականացվող հանցագործությունների հայտնաբերման, բացահայտման, քննության միջազգային փորձի ուսումնասիրում, համապատասխան առաջարկությունների մշակում	Սույն թվականի դեկտեմբերի 8-ին ԵԱՀԿ աջակցությամբ ՀՀ ոստիկանության բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի կողմից կազմակերպվել է համաժողով՝ Հայաստանի Հանրապետությունում կիբեռանվտանգության կիբեռհանցագործության ընթացիկ իրավիճակի ուսումնասիրություն թեմայով: Համաժողովին մասնակցել են նաև պետական և ոչ պետական այլ մարմինների աշխատակիցներ (ՀՀ Նախագահի աշխատակազմ, Փորձաքննությունների Ազգային Բյուրո, Ազգային անվտանգության խորհուրդ, Տրանսպորտի և կապի նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն, բանկային համակարգ, կրթական հաստատություններ), բարձր տեխնոլոգիաների ոլորտում առաջատար կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցիչներ: ՀՀ ոստիկանությունում մշակվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասինե օրենքների նախագիծն արդեն իսկ դրվել է արտաքին շրջանառության: Այս օրենսդրական փոփոխությունները միտված են ակտիվացնելու պայքարը կեբեռհանցագործությունների կանխարգելման ոլորտում: Ինտերնետում անօրինական բովանդակության հաղորդումների գնահատման կենտրոնական կետի ստեղծման ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացման նպատակով ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և ԱՄՆ դեսպանատան հետ ձեռք է բերվել համաձայնություն, այն առումով, որ ԱՄՆ դեսպանատունն իր վրա է վերցնում կենտրոնի տեխնիկական ապահովման խնդիրը, իսկ ԵԱՀԿ գրասենյակը՝ իրավական խնդիրները: ԱՄՆ դեսպանության կողմից ԿՀԴՊԳՎ Բարձր տեխնոլոգիաների դեմ կատարվող հանցագործությունների բաժնին ցուցաբերվել է տեխնիկական աջակցություն. մասնավորապես, հատկացվել է համապատասխան համակարգչային տեխնիկա, տեղեկատվական համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ սերվեր և կոմունիկացիոն այլ սարքեր (82.000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով):
		50.2. Կիբեռհանցագործությունների դեմ պայքարում ինտերնետ և կապի ծառայություն մատուցող օպերատորների և իրավապահ մարմինների միջև փոխհամագործակցության կանոնակարգմանն ուղղված օրենսդրական ակտերի փաթեթի մշակում, համատեղ հուշագրերի ստորագրում	
		50.3. Ինտերնետում անօրինական բովանդակության հաղորդումների գնահատման կենտրոնական կետի ստեղծման ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացում	
թ) Այլ մարմինների և կազմակերպությունների հետ համագործակցության բարելավմանն ուղղված բարեփոխումներ			
51.	Հանրապետության իրավապահ մարմինների	51.1. Իրավապահ մարմինների և շահագրգիռ այլ գերատեսչությունների տվյալների բազաները մեկ միջավայրում ինտեգրում, միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում	

	հետ համագործակ-ցության բարելավում	51.2. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրում, կիրառելով էլեկտրոնային թվային ստորագրություն	
		51.3. Բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից համակարգչային կապի միջոցով տեղեկատվության ստացման հնարավորության ընձեռում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված մարմինների համար	
52.	Հանցավորությ-ան դեմ պայքարի ոլորտում պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների, հասարակա-կան կազմակերպու-թյունների հետ համագործակ-ցության կատարելագոր-ծում	52.1. Անչափահասների և կանանց հիմնահարցերով զբաղվող մասնագետների պրոֆեսիոնալ գիտելիքների բարելավման նկատառումներով շահագրգիռ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների համապատասխան փորձագետների մասնակցությամբ միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծում ՀՀ բոլոր մարզերում հանդիպումների և քննարկումների կազմակերպում	Հանցավորության դեմ պայքարի ոլորտում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության կատարելագործման համար կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ անչափահասների ու կանանց հիմանհարցերով զբաղվող մասնագետների հետ: Ընտանեկան բռնության ենթարկված կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության ճգնաժամային կենտրոնների հետ համագործակցության հիմնահարցերով իրականացվել են փորձագիտական աշխատանքներ: Ընտանեկան բռնության ենթարկված կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության ճգնաժամային կենտրոնների հետ համագործակցության հիմնահարցերով իրականացվել են փորձագիտական աշխատանքներ:
		52.2. Ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ճգնաժամային կենտրոնների հետ համագործակցության հիմնահարցերով ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով աշխատակիցների վերապատրաստում Երևանում, Վանաձորում, Կապանում և Գավառում	
		52.3. Տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհամագործակցության ոլորտում հուշագրերի, համաձայնագրերի կնքում	
53.	Հանցավորությ-ան դեմ	53.1. ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների հետ անօրինական	Իրավախախտ անչափահասների շրջանում իրականացվող կանխարգելիչ աշխատանքների, «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի» շրջանակներում ՀՀ

	պայքարի ոլորտում միջազգային կառույցների, օտարերկրյա պետություն-ների ոստիկանական մարմինների հետ փոխհամագործակցության ակտիվացում, աշխատանքա-յին նոր մեթոդների և ձևերի ներդրում	միգրացիայի բնագավառում կազմակերպվող դասընթացներին, խորհրդակցություններին ոստիկանության ծառայողներին ակտիվ ներգրավում	ոստիկանության նախաձեռնությամբ «Փրոջեքթ Հարմոնի» միջազգային հասարակական կազմակերպության հետ համատեղ 2006-2010թթ. Երևան, Վանաձոր, Գյումրի, Ալավերդի, Իջևան, Ճամբարակ և Թալին քաղաքներում բացվել են համայնքային վերականգնողական կենտրոններ: 2010 թվականի ընթացքում շարունակվել է համագործակցությունը թե առանձին միջազգային կազմակերպությունների և թե այլ երկրների համապատասխան գերատեսչությունների հետ, բացի այդ 2010-2011թթ. ընթացքում կնքվել են համագործակցության պայմանագրեր և հուշագրեր ՌԴ-ի, Իտալիայի, Լեհաստանի, Գերմանիայի և Իրանի ՆԳՆ-ների հետ: Ինտերպոլի անդամ երկրների հետ համագործակցությունը առավել սերտացնելու նպատակով նախապատրաստվել է «Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (Ինտերպոլի) ճամփորդական փաստաթուղթը ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Որոշման ընդունումից հետո նշված ճամփորդական փաստաթղթերը կրող անձինք հնարավորություն կստանան առանց մուտքի վիզայի հատելու ՀՀ պետական սահմանը:
		53.2. Փորձի փոխանակման և համագործակցության նոր ուղիների մշակման նպատակով մի շարք եվրոպական պետությունների իրավապահ մարմինների հետ գործնական հանդիպումների կազմակերպում	
		53.3. «Զանգ» իրավական քարոզչության ծրագրի շրջանակներում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով աշխատակիցների վերապատրաստում	
		53.4. Շեղվող վարքագիծ դրսևորող անչափահասների սոցիալական վերականգնողական համայնքային կենտրոնների ցանցի ընդլայնում	
		53.5. 1998 թ. հոկտեմբերի 2-ին Կերկիրայում ստորագրված «ՍԾՏՀ մասնակից պետությունների կառավարությունների միջև հանցավորության, մասնավորապես, դրա կազմակերպված ձևերի դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագրին կից լրացուցիչ արձանագրության հիման վրա ստեղծված կապի սպաների գործունեության արդյունավետության բարձրացում	
		53.6. Ինտերպոլի Գլխավոր Ասամբլեայի նստաշրջանների, Եվրոպական տարածաշրջանային կոնֆերանսներին ԱԿԲ-ների պետերի վեհաժողովներին, Եվրոպական կապի սպաների աշխատանքային հանդիպումներին ակտիվ մասնակցության ապահովում	
		53.7. Ինտերպոլի հեռահաղոր-դակցման I-24/7	

		համակարգին ՀՀ սահմանային անցակետերում ծառայություն կատարող վերակարգերի, ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների ինտեգրման ապահովում	
		53.8. Իտալիայի կառավարության, Գերմանիայի, Լեհաստանի ՆԳ նախարարությունների հետ համագործակցության մասին համաձայնագրերի ստորագրում	
54.	Հանցավորու-թյան դեմ պայքարի ոլորտում առաջավոր փորձ ունեցող երկրների ոստիկանական ուսումնական հաստատությունների հետ կադրերի վերապատրաստման և փորձի փոխանակման ապահովում	54.1. Համապատասխան փորձագետների կողմից ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունում անչափահասների հետ տարվող աշխատանքների կատարելագործմանն ուղղված դասընթացների կազմակերպում	
		54.2. Համապատասխան փորձագետների կողմից ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունում ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության հիմնահարցերով դասընթացների կազմակերպում	
		54.3. ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի շրջանակներում Ֆրանսիայի և Լեհաստանի ՆԳ նախարարությունների ուսումնական հաստատությունների կադրերի վերապատրաստման գործընթացի շարունակականության ապահովում	
		54.4. Զանգվածային անկարգությունների կանխման ուղղությամբ միջազգային փորձի ուսումնասիրում, մասնագիտական գիտական գիտելիքների կատարելագործում (ԱՄՆ, Ֆրանսիայի կառավարությունների, ԵԱՀԿ աջակցությամբ)	
		54.5. Ինտերպոլի Գլխավոր Քարտուղարությունում ՀՀ Ինտերպոլի ԱԿԲ ծառայողների	

		վերապատրաստման ապահովում	
		54.6. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը սահմանային անցակետերում առավել արդյունավետ իրականացնելու համար ՌԴ թմրամիջոցների վերահսկման դաշնային ծառայությունում օպերլիազորների վերապատրաստում	
55.	Ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում տեղեկատվության և միջազգային փորձի փոխանակում	55.1. ԱՄՆ և Եվրոպական երկրների ոստիկանական մասնագիտացված ծառայությունների փորձի ուսումնասիրում, կադրերի վերապատրաստում	
		55.2. Հակաահաբեկչական համատեղ վարժանքների պարբերաբար կազմակերպում և իրականացում՝ ՀԱՊԿ անդամ պետությունների մասնագիտացված ստորաբաժանումների հետ	
ժ) Ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ			
56.	«Թեժ գծի» գործունեության արդյունավետության բարձրացում	56.1. «Կազմ-հաստիքային փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում՝ ուղղված «Թեժ գծով» ստացվող տեղեկատվության մշակման, ամփոփման և ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ վերահսկողություն իրականացվող ստորաբաժանման ստեղծմանը	
57.	Ոստիկանություն-քաղաքացի կապի ամրապնդում, գործունեության թափանցիկության	57.1. ՀՀ ոստիկանության ինտերնետային պաշտոնական կայքէջի վերակազմակերպում՝ ստեղծելով քաղաքացիների հետ ամենօրյա հարցպատասխանի ծառայություն	Ոստիկանություն-քաղաքացի կապի ամրապնդման, գործունեության թափանցիկության ապահովման համար հիմնվել է ՀՀ ոստիկանության ինտերնետային պաշտոնական նոր կայքը՝ «www.police.am», որում քաղաքացիների հետ ամենօրյա հարց-պատասխանի ծառայության իրականացման համար առկա է առանձին էջ: 21.11.2011թ. ՀՀ ոստիկանության պետի կողմից ստորագրվել է «Ոստիկանություն-հասարակություն կապն ամրապնդելու և հասարակական կարգի պահպանման որակը բարելավելու մասին» թիվ 3302-Ա հրամանը, որով հանձնարարվել է բնակչության հետ անմիջականորեն շփվող ոստիկանության ծառայողներին առավել շատ ժամանակ անցկացնել
		57.2. ՀՀ ոստիկանության ինտերնետային պաշտոնական կայքէջում իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպում	
		57.3. Հասարակական կարգի պահպանման գործում	

	ապահովում	հասարակայնության ներգրավմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրում և ներդրում	սպասարկվող տարածքներում և իրենց աշխատանքում օգտագործել համայնքի բնակչության ներուժը:
		57.4. ՀՀ ոստիկանությանը կից հասարակական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրային միջոցների իրականացում	
		57.5. Ոստիկանության ծառայողների կողմից կատարված օրինախախտումների դեպքերով ծառայողական քննությունների արդյունավետության բարձրացում և արդյունքների հրապարակայնության ապահովում	
58.	Ոստիկանության ստորաբաժանումների աշխատանքի և քաղաքացիների սպասարկման պատշաճ որակի ապահովում	58.1. Ոստիկանության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների համար դիմումների ձևերը ոստիկանության պաշտոնական կայքէջում տեղադրելու, դրանք ինտերնետ համացանցով ներկայացնելու և այլ եղանակներով ներկայացման ու ընթացք տալու մատչելի համակարգի ներդրում	
59.	ՀՀ ոստիկանության մարմիններում և ստորաբաժանումներում քաղաքացիների դիմումների և բողոքների հաշվառման և վերահսկողության միասնական	59.1. Դիմումների և բողոքների հաշվառման և դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվության միասնական համակարգի ձևավորում	ՀՀ ոստիկանության մարմիններում և ստորաբաժանումներում քաղաքացիների դիմումների և բողոքների հաշվառման ու վերահսկողության միասնական համակարգի ստեղծման նպատակով 2010թ. օգոստոսի 17-ին ընդունվել է «ՀՀ ոստիկանության համակարգում ստացված դիմումների, բողոքների հաշվառման և դրանց արդյունքների վերաբերյալ միասնական հաշվետվություն ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի թիվ 1747-Ա հրամանը:
		59.2. Համակարգչային ծրագրի մշակում և ներդրում	

	համակարգի ստեղծում		
60.	Ոստիկանության գործունեության արդյունավետության գնահատման նոր, առավել առաջադիմական չափանիշների ներդրում	60.1. «Ոստիկանության ստորաբաժանումների գործունեության գնահատման չափանիշները սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	Մշակվել են Ոստիկանության տարածքային մարմինների գործունեության գնահատման չափանիշները, որոնք հաստատվել են ՀՀ Ոստիկանության պետի 2011 թվականի հուլիսի 6-ի թիվ 1660-Ա հրամանով:
61.	Ոստիկանության ծառայողի կողմից օրինականության պահպանման ապահովում	61.1. Ոստիկանության ծառայողների ռոտացիայի սկզբունքի կիրարկման ապահովում և դրա արդյունավետության գնահատում 61.2. Ոստիկանության տարբեր պաշտոնների խմբերի համար կոռուպցիայի դեմ պայքարի ուղեցույցների մշակում	ՀՀ կառավարության 15.09.2011թ. թիվ 1319-Ն որոշմամբ լրացումներ են կատարվել «Ոստիկանությունում ռոտացիայի ենթակա ծառայողների ցանկը և ռոտացիայի իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 06.11.2009թ. թիվ 1254-Ն որոշման մեջ. արդյունքում ռոտացիայի ենթակա ծառայողների ցանկում լրացվել են նաև ոստիկանության տարածքային բաժինների ու բաժանմունքների պետերի, ոստիկանության տարածքային քննչական բաժինների և բաժանմունքների պետերի, տարածքային պահպանության բաժինների ու բաժանմունքների պետերի, ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական բաժանմունքների պետերի և ավագ տեսուչների պաշտոնները: (Որոշումն ուժի մեջ է մտել հոկտեմբերի 8-ին):
62.	Հանցագործությունների մասին հաղորդումների պատշաճ գրանցման, արագ արձագանքման և ընթացքի լուծման արդյունավետ մեխանիզմի	62.1. Հանցագործությունների մասին հաղորդումների արագ արձագանքման «1-02» տեխնիկական համակարգի վերազինում և կատարելագործում 62.2. Հանցագործությունների գրանցման և հաշվառման միասնական կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Հանցագործությունների մասին հաղորդումների պատշաճ գրանցման, արագ արձագանքման և ընթացքի լուծման արդյունավետ մեխանիզմի ներդրման համար տեղադրվել է «AVAYA» տեսակի ժամանակակից համակարգ, աշխատանքներ են տարվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կազմում օպերատիվ արձագանքման կենտրոնի ստեղծման ուղղությամբ:

	ներդրում		
63.	ՀՀ ոստիկանության գործունեության յուրաքանչյուր ոլորտի համար հասարակայնության և զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության բարելավում	63.1. ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում՝ ուղղված զանգվածային լրատվության միջոցների հետ ոստիկանության արդյունավետ, օպերատիվ և արհեստավարժ շփումների ապահովմանը 63.2. Ոստիկանության ծառայողների համար զանգվածային լրատվության միջոցների հետ շփվելու ուղեցույցի մշակում	Ոստիկանության և հասարակության միջև կայուն կապ հաստատելու, հասարակական կարգի պահպանման գործում հասարակությանը ներգրավելու նպատակով ՀՀ տարածքում անց են կացվել շուրջ 400 հանդիպումներ ազգաբնակչության հետ: «Ոստիկանություն-հասարակություն» համագործակցությանն ուղղված վերոնշյալ միջոցառումները լուսաբանվել են «02» հաղորդաշարով: 2010 թվականի հոկտեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության պետի կողմից ընդունվել է ՀՀ ոստիկանության մարզային վարչություններում հասարակայնության հետ կապի պատասխանատուներ նշանակելու մասին թիվ 2050-Ա հրամանը, որով նշված պարտականությունը դրվել է մարզային վարչությունների պետերի ծառայության գծով տեղակալների վրա: Էստոնիայի և Ֆինլյանդիայի փորձի հիման վրա մշակվել է ոստիկանության ծառայողների կողմից զանգվածային լրատվության միջոցների հետ շփվելու ուղեցույց, որը հաստատվել է ՀՀ ոստիկանության պետի 18.03.2011թ. թիվ 535-Ա հրամանով:
ժա) Ոստիկանությունում ծառայող (աշխատող) անձանց սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ			
64.	Ոստիկանության անձնակազմի սոցիալական լրացուցիչ երաշխիքների ապահովում	64.1. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՕ-288-Ն օրենքի 16-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ ուղղված քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակված ոստիկանության ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքի պահպանմանը 64.2. «Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձանց հաշվառման, հերթագրման գործընթացը կազմակերպելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	Ոստիկանության ծառայողների սոցիալական պաշտպանության ուղղությամբ՝ 2010 թվականին ԱԺ-ի կողմից ընդունվեց օրենքների փաթեթ, որով պահպանվում է քաղաքացիական հատուկ ծառայության անցնող ոստիկանության ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքը և աշխատավարձի չափը: Մշակվել է«Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձանց հաշվառման, հերթագրման գործընթացը կազմակերպելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագիծ: Ներկայումս կատարվում են ուսումնասիրություններ՝ առաջիկա տարիների կտրվածքով ոստիկանության բոլոր աշխատակիցների սոցիալական պաշտպանության ուղղությամբ առավել հիմնավոր և իրատեսական առաջարկություններ ներկայացնելու համար: Աշխատանքներ են տարվում ոստիկանության զինծառայողների բնակարանային ապահովվածությունը գնահատելու ուղղությամբ: Այդ նպատակով անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու և իրավիճակը ճիշտ գնահատելու նպատակով ս/թ հուլիսի 7-ին տրվել է ՀՀ ոստիկանության պետի թիվ 23-Ց ցուցումը: Աշխատանքներն ավարտվել են հոկտեմբերի 1-ին: Քանի որ 2012թ.-ի բյուջեի չափաքանակներն արդեն հայտնի են, 2013-2014 թթ., որոշակի նպատակային միջոցներ

			ներգրավելու դեպքում հնարավոր կլինի սահմանված կարգով հերթագրել բնակարանի/բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ծառայողներին և առաջնահերթության կարգով սկսել բնակապահովման աստիճանական գործընթացը: Ոստիկանության ծառայողների համար կարևոր սոցիալական երաշխիք է հանդիսանում նաև 2011 թվականի դեկտեմբերի 8-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված այն դրույթը, համաձայն որի վեց ամիս և ավելի ժամկետով ուսման գործուղված ոստիկանության ծառայողներին ոստիկանության կադրերի գործող ռեզերվում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում այսուհետ վճարվելու է զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված դրամական բավարարումը:
65.	Ոստիկանությունում ծառայող (աշխատող) անձանց, նրանց ընտանիքի անդամների և կենսաթոշակառուների բուժման և հանգստի կազմակերպման բարելավում	65.1. Բուժծառայության կարողությունների, մատուցվող ծառայությունների ոլորտի ընդլայնում 65.2. Թանկարժեք վիրահատություններ և բուժում նախատեսող դեպքերում ծառայողների կատարած ծախսերի փոխհատուցման հնարավորությունների ուսումնասիրում և իրականացում 65.3. Ոստիկանության ծառայողներին, նրանց ընտանիքի անդամներին, կենսաթոշակառուներին առողջարանների և հանգստյան տների ուղեգրերի տրամադրում	Ոստիկանությունում ծառայող անձանց, նրանց ընտանիքի անդամների և կենսաթոշակառուների բուժման և հանգստի կազմակերպման բարելավման հետ կապված աշխատանքները ընթացքի մեջ են: Այդ կապակցությամբ 2010թ. բյուջեից հատկացվել է 11 մլն.դրամ, իսկ ՄԺԾԾ նախատեսվել է 2011թ. 15.մլն, 2012թ. 18մլն, 2013թ. 21.6 մլն դրամ,
66.	Ոստիկանության անձնակազմի իրավական պաշտպանության բարելավում	66.1. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ ուղղված ոստիկանությունում ծառայությունից ազատում նախատեսող կարգապահական կոպիտ խախտումների սպառիչ թվարկմանը 66.2. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում՝	Ոստիկանության ծառայողների իրավական պաշտպանության նպատակով մշակվել են համապատասխան օրենքների նախագծեր, որոնք ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել են 2010 թվականի աշնանային նստաշրջանի ընթացքում: Արդյունքում հստակեցվել են ,ոստիկանությունից ազատումե կարգապահական տույժի կիրառման հիմքերը, աշխատանքից ազատման վերաբերյալ վարչական բողոքարկման ժամկետները, տույժի տեսակների ցանկից հանվել է կարգապահական կալանքը: ՀՀ ԱԺ-ում է գտնվում «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

		ուղղված «Կարգապահական կալանքը» տույժերի ցանկից հանելուն	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով մասնավորապես, նախատեսվում է ստեղծել ոստիկանության ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնող մշտական գործող հանձնաժողով, որի կազմի մեջ կընդգրկվեն նաև բացի ոստիկանության բարձրաստիճան պաշտոնատար անձանցից նաև այլ պետական մարմինների և ոչ պետական մարմինների ներկայացուցիչներ: Օրինագծի ընդունման արդյունքում առավելագույնս կապահովվի ոստիկանության ծառայողների նկատմամբ իրականացվող ծառայողական քննության օբյեկտիվությունը, հիմնավորվածությունը և վերջին հաշվով՝ օրինականությունը: ՀՀ ոստիկանության պետի կողմից 08.07.2011թ. ստորագրվել է «Ոստիկանությունում գենդերային խնդիրներին ուղղված, մասնավորապես կանանց պատշաճ ընգդրկվածություն ապահովելու նկատառումներով համապատասխան ծրագրերի մշակման միջոցառումների պլանը հաստատելու մասին» հրամանը (թիվ 1696-Ա): ՀՀ ոստիկանության պետի կողմից 08.07.2011թ. ստորագրվել է «Ոստիկանությունում գենդերային խնդիրներին ուղղված, մասնավորապես կանանց պատշաճ ընգդրկվածություն ապահովելու նկատառումներով համապատասխան ծրագրերի մշակման միջոցառումների պլանը հաստատելու մասին» հրամանը (թիվ 16s96-Ա):
		66.3. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ ուղղված ոստիկանությունում աշխատանքային վեճերով ծառայողների կողմից վարչական բողոք ներկայացնելու ժամկետի երկարաձգմանը	
		66.4. «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ ուղղված ոստիկանության ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնող մշտական գործող հանձնաժողովի ստեղծմանը	
		66.5. Ոստիկանությունում գենդերային խնդիրներին ուղղված, մասնավորապես, կանանց պատշաճ ընդգրկվածություն ապահովելու նկատառումներով համապատասխան ծրագրերի մշակում	
67.	Ոստիկանության անձնակազմի համար աշխատանքային պատշաճ պայմանների ապահովում	67.1. Շենքային պայմանների բարելավում, անհրաժեշտ գույքով, տրանսպորտային միջոցներով և տեխնիկայով շարունակական ապահովում	Ոստիկանության անձնակազմի համար աշխատանքային պատշաճ պայմանների՝ շենքային պայմանների բարելավում, անհրաժեշտ գույքով, տրանսպորտային միջոցներով և տեխնիկայով շարունակական ապահովման համար ՀՀ ոստիկանության կողմից կատարվել են նախնական հաշվարկներ և ուղարկվել ՀՀ կառավարության աշխատակազմ: 2011 թվականի ընթացքում արտաբյուջետային միջոցների հաշվին վերակառուցվել է ՀՀ ոստիկանության ԱՎՎ 4 ստորաբաժանումների շենքերը: 2010 թվականի դեկտեմբերի 26-ին տեղի ունեցավ նաև Տավուշի մարզային վարչության նոր մասնաշենքի բացումը: 14.01.2011թվականին տեղի ունեցավ ԱՄՆ պետդեպարտամենտի ֆինանսական աջակցությամբ կառուցված ՀՀ ոստիկանության հրաձգարանի բացումը: 2010 թվականի դեկտեմբերի 26-ին տեղի ունեցավ նաև Տավուշի մարզային վարչության նոր մասնաշենքի բացումը:

Հավելված 2

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax: (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2011- 12.11/307

12.11.2011 թ.

ՀՀ ոստիկանության պետ
Վլադիմիր Գասպարյանին

Հարգելի պարոն ոստիկանապետ

Ըստ ՀՀ Կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի թիվ 354-Ն որոշմամբ հաստատված ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ հաստատված ժամանակացույցի՝ մի շարք միջոցառումների կատարող է հանդիսանում ՀՀ ոստիկանությունը:

2010 թ. մարտից Հելսինկյան Քաղաքացիական Ասամբելայի Վանաձորի գրասենյակը իրականացնում է «Երիտասարդների ներգրավումը Հարավային Կովկասի իրավապաշտպանական շարժման մեջ» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ոստիկան-քաղաքացի հարաբերությունների մոնիթորինգ, որի ընթացքում դիտարկվել են ոստիկանության մի շարք բաժիններ, անց են կացվել հարցազրույցներ ոստիկանության ծառայողների հետ: Վերոնշյալ գործողությունները նախապես համաձայնացվել են ՀՀ ոստիկանության պետի հետ: Ներկա պահին ամփոփվում և վեր են լուծվում մոնիթորինգի արդյունքները:

Մեր կազմակերպությունը կարևորում է ոստիկանության համակարգի բարեփոխումների ծրագրով նախատեսված միջոցառումները ոստիկան-քաղաքացի հարաբերությունների շրջանակներում մարդու իրավունքների խախտումները բացառելու նպատակով:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ դիմում եմ Ձեզ ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հարցով մեր ուսումնասիրությունները ամբողջացնելու և վերջնական զեկույցը ՀՀ ոստիկանությանը ներկայացնելու նպատակով:

Կից ներկայացվում է հարցադրումների ցանկը, 8 թերթից:

Հարգանքներով՝
կազմակերպության նախագահ Արթուր Սաքունց

Կատ.՝ Ա. Չիլինգարյան
achilingaryan@hcav.am

6.4. Պարեկապահակետային ծառայությունը անհրաժեշտ հանդերձավորումով, հատուկ միջոցներով և զենքով ապահովում

- Ե՞րբ և ի՞նչ ժամկետներում է իրականացվել պարեկապահակետային ծառայության անհրաժեշտ հանդերձավորումով, հատուկ միջոցներով և զենքով ապահովումը
- Քանի՞ պարեկապահակետային ծառայող է ապահովվել անհրաժեշտ հանդերձավորումով, հատուկ միջոցներով և զենքով
- Մասնավորապես անհրաժեշտ ի՞նչ հանդերձավորումով, հատուկ միջոցներով, զենքով է ապահովվել պարեկապահակետային ծառայությունը և ի՞նչ քանակությամբ
- Ո՞ր կազմակերպության միջոցով է իրականացվել պարեկապահակետային ծառայության անհրաժեշտ հանդերձավորումով, հատուկ միջոցներով և զենքով ապահովումը /խնդրում եմ նշել կազմակերպության ամբողջական անվանումը, կազմակերպության գրանցման և գործունեության հասցեն/
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել տվյալ միջոցառման իրականացման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են իրացվել ըստ ուղղությունների

7. Ոստիկանության Երևան քաղաքի վարչության և ենթակա տարածքային մարմինների օպերատիվ ստորաբաժանումներում քրեական հետախուզության ծառայության ճյուղային սպասարկման /նեղ մասնագիտացման/ սկզբունքի ներդրում

7.1. «Կազմ-հաստիքային փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում

- Ինչո՞վ է պայմանավորված վերը նշված հրամանի ընդունման անհրաժեշտությունը
- Կազմ-հաստիքային ի՞նչ փոփոխություններ է նախատեսվում կատարել ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծով
- Մշակվե՞լ է արդյոք հրամանը, եթե ոչ, ապա երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տրամադրել հրամանի օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ խնդում եմ տրամադրել հրամանի նախագծի օրինակը

7.2. «Գործառույթային վերաբաշխման մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում

- Ինչո՞վ է պայմանավորված «Գործառույթների վերաբաշխման մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի ընդունումը
- Ո՞ր գործառույթները և ու՞մ միջև է նախատեսվում վերաբաշխել նշված հրամանով
- Մշակվե՞լ է արդյոք «Գործառույթային վերաբաշխման մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Ընդունվե՞լ է արդյոք նշված հրամանը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում ընդունել
- Խնդրում եմ տրամադրել «Գործառույթային վերաբաշխման մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագիծը/հրամանը

9. Ոստիկանության միասնական կրթահամալիրի (ուսումնական հաստատություն) կազմակերպում

9.1. «ՀՀ ոստիկանության կառուցվածքը և աշխատողների առավելագույն թիվը և ղեկավարի տեղակալների թիվը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.12.2002թ. 2069-Նգ որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում

- Ինչպիսի՞ փոփոխություններ կամ լրացումներ են նախատեսվում կատարել «ՀՀ ոստիկանության կառուցվածքը և աշխատողների առավելագույն թիվը և ղեկավարի տեղակալների թիվը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ
- Մշակվե՞լ է արդյոք որոշման նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Ընդունվե՞լ է արդյոք որոշումը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում ընդունել
- Խնդրում եմ տրամադրել որոշման օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ խնդրում եմ տրամադրել որոշման նախագծի օրինակը

9.3. «ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում

- Ինչո՞վ է պայմանավորված «ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը
- Մշակվե՞լ է արդյոք որոշման նախագիծը , եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տրամադրել որոշման օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ խնդրում եմ տրամադրել որոշման նախագծի օրինակը

10. Կրթական աստիճանական համակարգի ներդրում

10.1. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում

- Ի՞նչ փոփոխություններ է նախատեսվում մտցնել «Ոստիկանության ծառայության մասին» ՀՀ օրենքում
- Մշակվե՞լ է արդյոք «Ոստիկանության ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը
- Խնդրում եմ տրամադրել օրենքի օրինակը, եթե այն ընդունվել է, եթե այն չի ընդունվել՝ խնդրում եմ տրամադրել օրենքի նախագծի օրինակը

10.2. «Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.08.2003թ. 1184-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում

- Ի՞նչ փոփոխություն և լրացում է նախատեսվում մտցնել «Ուսուցիչների ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ
- Մշակվե՞լ է արդյոք որոշման նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տարամադրել որոշման օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ խնդրում եմ տրամադրել որոշման նախագծի օրինակը

10.3. «Ուսուցիչների ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում՝ նախատեսելով բոլոր խմբերի պաշտոնների համար վերապատրաստման (որակավորման) դասընթացների պարբերաբար իրականացում

- Ի՞նչ փոփոխություն և լրացում է նախատեսվում կատարել «Ուսուցիչների ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003թ. 174-Ն որոշման մեջ
- Մշակվե՞լ է արդյոք որոշման նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տրամադրել որոշման օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ խնդրում եմ տրամադրել որոշման նախագծի օրինակը

10.4. «Ուսուցիչների ծառայողի ատեստավորման անցկացման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.12.2002թ. 2147-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում

- Ի՞նչ փոփոխություն և լրացում է նախատեսվում կատարել «Ուսուցիչների ծառայողի ատեստավորման անցկացման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.12.2002թ. 2147-Ն որոշման մեջ
- Մշակվե՞լ է արդյոք որոշման նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տրամադրել որոշման օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ խնդրում եմ տրամադրել որոշման նախագծի օրինակը

10.5. Նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության համար ուսումնական նոր ծրագրերի մշակում

- Ինչո՞վ է պայմանավորված ուսումնական նոր ծրագրերի մշակման անհրաժեշտությունը
- Ի՞նչ նոր մեթոդներ, մոտեցումներ են նախատեսվում ձևակերպել ուսումնական նոր ծրագրերի մեջ
- Մշակվե՞լ են արդյոք ուսումնական նոր ծրագրերը, եթե ոչ՝ որ փուլում է գտնվում ծրագրերի մշակումը
- Ու՞մ կողմից են մշակվել/ ու՞մ կողմից է նախատեսվում մշակել ուսումնական նոր ծրագրերը
- Ու՞մ կողմից են հաստատվել ուսումնական նոր ծրագրերը, եթե դեռևս չեն հաստատվել՝ ում կողմից է նախատեսվում հաստատել
- Ի՞նչ չափանիշների հիման վրա են մշակվել նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության համար ուսումնական նոր ծրագրերը

- Խնդրում եմ տրամադրել նոր ուսումնական ծրագրերի օրինակները

10.6. Ուստիկանության ուսումնական հաստատությունում ուսուցման նոր, առաջադիմական մեթոդների աստիճանական ներդրում (ինտերակտիվ, ներգրավված, խաղային և այլն)

- Ուսուցման ի՞նչ նոր մեթոդներ են ներդրվել ուսումնական հաստատությունում մինչ այժմ, ի՞նչ նոր մեթոդներ է նախատեսվում ներդնել
- Ո՞ր առարկաների դասավանդման ժամանակ են ներդրվել նոր մեթոդներ
- Կազմվե՞լ են արդյոք նոր մեթոդներ կիրառման ուղեցույցներ, եթե այո՝ ում կողմից են կազմվել
- Անցե՞լ են արդյոք նոր մեթոդներ կիրառող դասախոսները նոր մեթոդների կիրառմանն ուղղված մասնագիտական վերապատրաստում
- Քանի՞ դասախոս է անցել վերը նշված վերապատրաստումը, ո՞վ է անցկացրել վերապատրաստումը
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել պետական բյուջեից նոր մեթոդների ներդրման համար: Հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ ուղղություններով /համապատասխան նյութատեխնիկական բազայի ապահովման, նոր մեթոդների կիրառմանն ուղղված մասնագիտական վերապատրաստման դասընթացների իրականացման և այլն/

10.7. Ուսումնական ծրագրում օտար լեզուներով շփման նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված դասընթացների ընդգրկում

- Ի՞նչ օտար լեզուների դասընթացներ են ընդգրկվել
- Ակադեմիական քանի՞ դասաժամ է ընդգրկվել յուրաքանչյուր օտար լեզվի դասավանդման համար
- Ի՞նչ որակավորում ունեցող դասախոսներ են դասավանդում

11. Ուսումնական գործընթացում պրակտիկ փորձի կիրառում

11.1. Բարձր որակավորում ունեցող ոստիկանության բարձրագույն և գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների կողմից ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունում դասավանդման գործընթացին ներգրավում

- Ոստիկանության բարձրագույն և գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող քանի՞ ծառայող է ներգրավվել ՀՀ ոստիկանության ուսումնական դասավանդման գործընթացին, քանիսի՞ն է նախատեսվում ներգրավել
- Ո՞ր առարկաների դասավանդման նպատակով են ներգրավվել համապատասխան ծառայողները, քանի՞ դասաժամ է դասավանդվել
- Խնդրում եմ տրամադրել համապատասխան ծառայողների անունները, դասավանդման վայրերը, դասավանդման առարկան, դասավանդման ժամանակահատվածները

12. Ոստիկանության ուսումնական հաստատություն (համակարգ) ընդունվող թեկնածուների գիտելիքների և ունակությունների ստուգման նոր չափանիշների ներդրում

12.1. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում

- Ի՞նչ փոփոխություններ և լրացումներ են նախատեսվում կատարել «Ոստիկանության ծառայության մասին» ՀՀ օրենքում ոստիկանության ուսումնական հաստատություն ընդունվող թեկնածուների գիտելիքների և ունակությունների նոր չափանիշների ներդրման և կիրառման նպատակով
- Մշակվե՞լ է արդյոք օրենքի նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տրամադրել օրենքի օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ խնդրում եմ տրամադրել օրենքի նախագծի օրինակը

12.2. «Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.08.2003թ. 1184-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում

- Ի՞նչ փոփոխություններ և լրացումներ է նախատեսվում կատարել «Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.08.2003թ. 1184-Ն որոշման մեջ
- Մշակվե՞լ է արդյոք որոշման նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տրամադրել որոշման օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ որոշման նախագծի օրինակը

12.3. «Ոստիկանությունում պաշտոնի նշանակման համար եռամսյա փորձաշրջան անցնելու կարգ և պայմաններ» սահմանելու մասին ՀՀ կառավարության 23.01.2003թ. 112-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում

- Ի՞նչ փոփոխություն և լրացում է նախատեսվում կատարել «Ոստիկանությունում պաշտոնի նշանակման համար եռամսյա փորձաշրջան անցնելու կարգ և պայմաններ» սահմանելու մասին ՀՀ կառավարության 23.01.2003թ. 112-Ն որոշման մեջ
- Մշակվե՞լ է արդյոք որոշման նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տրամադրել որոշման օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ խնդրում եմ տրամադրել որոշման նախագծի օրինակը

12.4. Ընդունելության թեստերի մշակում և դրանց համակարգչային գնահատման մեխանիզմի ներդրում

- Ե՞րբ և ու՞մ կողմից են մշակվել և հաստատվել ընդունելության թեսթերը, համակարգչային գնահատման մեխանիզմները
- Ի՞նչ իրավական ակտով են հաստատվել և կիրառության մեջ դրվել ընդունելության թեսթերը և համակարգչային գնահատման մեխանիզմները

- Ե՞րբ են ներդրվել և կիրառվել ընդունելության թեսթերը և դրանց համակարգչային գնահատման մեխանիզմները
- Որքա՞ն ֆինանսական միջոց է հատկացվել ընդունելության թեսթերի մշակման և համակարգչային գնահատման մեխանիզմների մշակման և ներդման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞ն են իրացվել և ի՞նչ ուղղություններով

13. Ոստիկանության ուսումնական հաստատությունում պրոֆեսիոնալ-դասախոսական կազմի որակավորում, նրանց մասնագիտական գիտելիքների մշտական համալրման իրական մեխանիզմների ստեղծում

13.2. «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում

- Ի՞նչ փոփոխություն է նախատեսվում մտցնել «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ
- Մշակվե՞լ է արդյոք որոշման նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տրամադրել որոշման օրինակը, եթե ընդունվել է, եթե ոչ՝ խնդրում եմ տրամադրել որոշման նախագծի օրինակը

14. Ոստիկանության համակարգի գործունեության կատարելագործմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների խթանում

14.1. Ոստիկանության ուսումնական հաստատությունում գիտական խորհրդի ձևավորում

- Ձևավորվե՞լ է արդյոք ոստիկանության ուսումնական հաստատությունում գիտական խորհուրդ, եթե ոչ՝ ձևավորման որ փուլում է գտնվում, եթե այո՝ երբ է ձևավորվել
- Ու՞մ կողմից է հաստատվել գիտական խորհրդի կազմը կամ ու՞մ կողմից է նախատեսվում հաստատվել
- Եթե գիտական խորհուրդը արդեն ձևավորվել է, ապա խնդրում եմ տրամադրել գիտական խորհրդի անդամների ամբողջական ցանկը՝ ըստ պաշտոնների, աշխատավայրերի

15. Միջազգային ոստիկանական ուսումնական համակարգին ինտեգրում

15.1. Միացում միջազգային կրթական տեղեկատվական ցանցին (CIPOL, POLIS և այլն)

- Ե՞րբ և ո՞ր միջազգային կրթական ցանցերին է միացել ՀՀ ոստիկանությունը մինչ այժմ
- Ի՞նչ միջոցառումներ են իրականացվել և ի՞նչ միջոցառումների են մասնակցել ՀՀ ոստիկանության ծառայողները նշված կրթական տեղեկատվական ցանցերին միանալուց հետո

15.2. Համաձայնագրերի կնքում օտարերկրյա պետությունների ոստիկանական ուսումնական առաջատար հաստատությունների հետ կադրերի պատրաստման և վերապատրաստման ոլորտում

- Օտարերկրյա ո՞ր պետությունների և ուսումնական ո՞ր հաստատությունների հետ են կնքվել համաձայնագրեր կադրերի պատրաստման և վերապատրաստման ոլորտում
- Ի՞նչ ուղղություններով է նախատեսվում իրականացնել կադրերի վերապատրաստումներ
- Խնդրում եմ տրամադրել կնքված համաձայնագրերի օրինակները

15.3. Ինտերպոլի հակակոռուպցիոն ակադեմիայում (Վիեննա) կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ընդգրկված ծառայողների վերապատրաստում

- Ե՞րբ և քանի՞ ծառայող է անցել վերապատրաստում Ինտերպոլի հակակոռուպցիոն ակադեմիայում, որքա՞ն ժամանակահատվածում
- Ի՞նչ չափորոշիչներով են ընտրվում վերապատրաստման ուղարկվող ծառայողները
- ՀՀ ոստիկանության ո՞ր բաժինների/բաժանմունքների ծառայողներն են անցել վերապատրաստում
- Խնդրում եմ տրամադրել վերապատրաստում անցած ծառայողների տվյալները ըստ ժամանակագրական հերթականության (անուն ազգանուն, ծառայության վայր, հաստիք)
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել ծառայողների վերապատրաստման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն է իրացվել և մասնավորապես ի՞նչ ուղղություններով
- Ո՞վ է կրել/կրում վերապատրաստման ուղարկվող ոստիկանության ծառայողների ճանապարհածախսը, հյուրանոցային, սննդի և այլ ծախսերը

16.4. Ոստիկանության ուսումնական հաստատությունում քաղաքացիների և կազմակերպությունների վճարովի հիմունքներով կրթական ծառայությունների մատուցման մեխանիզմների ներդրման նպատակով ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում

- Ինչո՞վ է պայմանավորված վերը նշված որոշման ընդունման անհրաժեշտությունը
- Մշակվե՞լ է արդյոք որոշման նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տրամադրել որոշման օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ խնդրում եմ տրամադրել որոշման նախագծի օրինակը

17. Ծառայողական պարապմունքների համակարգի կատարելագործում

17.1. «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում

- Ի՞նչ փոփոխություններ և լրացումներ է նախատեսվում մտցնել «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու

մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ ծառայողական պարապմունքների համակարգի կատարելագործման նպատակով

- Մշակվե՞լ է արդյոք Կառավարության որոշման նախագիծը, եթե ոչ՝ երբ է նախատեսում մշակել
- Խնդրում եմ տրամադրել որոշման օրինակը, եթե այն ընդունվել է, եթե ոչ՝ խնդրում եմ տրամադրել որոշման նախագծի օրինակը

25.2. Ձերբակալված անձանց պահելու պայմանների բարելավում

- Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել ձերբակալված անձանց պահելու պայմանների բարելավման նպատակով և ի՞նչ խնդիրներ են լուծվել ձերբակալված անձանց պահելու պայմանների բարելավման արդյունքում /շենքային պայմանների բարելավում, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավում, բուժսպասարկման ծառայության բարելավում և այլն/
- Ու՞մ կողմից, ի՞նչ չափանիշների կիրառմամբ է իրականացվել յուրաքանչյուր ՁՊՎ-ի պայմանների բարելավման համար կարիքների գնահատումը
- Ու՞մ կողմից են համակարգվում ձերբակալված անձանց պահելու պայմանների բարելավման ուղղությամբ իրականացվող միջոցառումները
- Հայաստանի Հանրապետության քանի՞ ՁՊՎ-ում է կատարվել պայմանների բարելավում և յուրաքանչյուր ՁՊՎ-ում մասնավորապես ի՞նչ պայմաններ են բարելավվել
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել ձերբակալված անձանց պահելու պայմանների բարելավման ուղղությամբ, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են իրացվել և մասնավորապես ի՞նչ գործողությունների իրականացման համար
- Որքա՞ն հավելյալ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ ձերբակալված անձանց պահելու պայմանների բարելավում կատարելու համար

26. Մարդու և քաղաքացու խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի լրացուցիչ երաշխիքների ամրագրում

26.1. Զանգվածային հրապարակային միջոցառումների իրավաչափ սահմանափակման, զանգվածային անկարգությունների ժամանակ ուժի կիրառման միջազգային փորձի ուսումնասիրում, ըստ անհրաժեշտության՝ իրավաստեղծ աշխատանքների իրականացում

- Ու՞մ կողմից է կատարվել զանգվածային հրապարակային միջոցառումների իրավաչափ սահմանափակման, զանգվածային անկարգությունների ժամանակ ուժի կիրառման միջազգային փորձի ուսումնասիրում
- Խնդրում եմ տրամադրել միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կազմված փաստաթուղթը (հաշվետվություն, տեղեկանք, զեկույց և այլն)
- Ուսումնասիրության արդյունքում ի՞նչ իրավական փաստաթղթերի նախագծերի մշակման անհրաժեշտություն է առաջացել, ի՞նչ իրավական փաստաթղթեր են մշակվել, որո՞նք են ընդունվել
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել միջազգային փորձի ուսումնասիրության իրականացման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են իրացվել և ի՞նչ ուղղություններով

26.2. Հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, նրանց կողմից զանգվածային անկարգությունների ժամանակ ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների գործադրման, ինչպես նաև բանակցություններ վարող և ԶԼՄ-ների հետ շփվող ծառայողների համար պարտադիր դասընթացների կազմակերպում

- Քանի՞ դասընթաց է իրականացվել և ի՞նչ ժամանակամիջոցի ընթացքում
- Որքա՞ն է եղել մեկ դասընթացի տևողությունը
- Ի՞նչ թեմաներ են ուսուցանվել դասընթացների ընթացքում, որքա՞ն ակադեմիական դասաժամ է հատկացվել յուրաքանչյուր թեմայի ուսուցանման համար
- Դասընթացների ընթացքում մասնավորապես ո՞ր խնդիրներն են հանդիսացել դասավանդման և քննարկման առարկա
- Քանի՞ ծառայող է մասնակցել դասընթացներին, ՀՀ ոստիկանության ո՞ր բաժանմունքների ծառայողներն են մասնակցել
- Ո՞վ է հոգացել դասընթացների մասնակիցների ճանապարհածախսը, սննդի և ըստ անհրաժեշտության գիշերակացի ծախսերը
- Ովքե՞ր են ներգրավվել որպես դասընթացավարներ (անուն, ազգանուն, մասնագիտություն, տվյալներ աշխատանքի վայրի մասին)
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել դասընթացների կազմակերպման և իրականացման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ ուղղություններով

30. Հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների (այդ թվում՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման առումով) իրականացման իրավական բազայի կատարելագործում

30.1. Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրում

- Ո՞ր երկրների՝ հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների իրականացման փորձն է ուսումնասիրվել
- Ի՞նչ եզրակացություններ են արվել և նշված ոլորտում գործող օրենսդրական կարգավորման և օրենսդրության կիրառման ի՞նչ խնդիրներ են վերհանվել
- Խնդրում եմ ներկայացնել միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կազմված փաստաթուղթը (հաշվետվություն, տեղեկանք, զեկույց և այլն)

30.2. «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակում

- Ի՞նչ փոփոխություններ և լրացումներ են նախատեսվում կատարել «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում
- Մշակվե՞լ են արդյոք նախագծերը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում մշակել
- Խնդրում եմ տրամադրել նշված օրենքները, եթե չեն ընդունվել՝ օրենքների նախագծերը

30.3. Հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցների մշակում ու ներդրում

- Ու՞մ կողմից, ե՞րբ և քանի՞ ուղեցույց է մշակվել
- Ու՞մ կողմից են հաստատվել ուղեցույցները և ի՞նչ իրավական ակտով
- Ե՞րբ և քանի՞ օրինակից են տպագրվել ուղեցույցները
- Ե՞րբ են ներդրվել ուղեցույցները, եթե չեն ներդրվել՝ երբ է նախատեսվում ներդնել
- Ոստիկանության ծառայողներն անցե՞լ են արդյոք ուղեցույցների կիրառմանն ուղղված մասնագիտական վերապատրաստում
- Ոստիկանության ո՞ր բաժիններից և քանի՞ ծառայող է անցել վերապատրաստում
- Խնդրում եմ տրամադրել մշակված յուրաքանչյուր ուղեցույցի օրինակը
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել ուղեցույցների մշակման և ներդման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ ուղղություններով

30.4. Զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցություններ վարող ծառայողների համար ուղեցույցների մշակում և ներդրում

- Ու՞մ կողմից, ե՞րբ և քանի՞ ուղեցույց է մշակվել
- Ու՞մ կողմից են հաստատվել ուղեցույցները և ի՞նչ իրավական ակտով
- Ե՞րբ և քանի՞ օրինակից են տպագրվել ուղացույցները
- Ե՞րբ են ներդրվել ուղեցույցները, եթե չեն ներդրվել՝ երբ է նախատեսվում ներդնել
- Ոստիկանության ծառայողները անցե՞լ են արդյոք վերապատրաստում ուղեցույցների կիրառման վերաբերյալ
- Խնդրում եմ տրամադրել յուրաքանչյուր ուղեցույցի օրինակը
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել ուղեցույցների մշակման և ներդրման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ ուղղություններով

31. Ոստիկանության կողմից առանձին ծառայությունների մատուցման ժամանակակից չափանիշների ներդրում, տեխնիկական հագեցվածության ապահովում, աշխատանքների թափանցիկության ապահովում

31.2. Աշխատանքային սպասարկման պայմանների բարելավում (աշխատանքի կազմակերպման տեխնիկական հագեցվածության ապահովում, ՀՀ օրենսդրությունը լուսաբանող ցուցատախտակներով և այլ անհրաժեշտ գույքով կահավորված սպասասրահների ստեղծում և այլն)

- Յուրաքանչյուրից ի՞նչ քանակությամբ և ի՞նչ տեխնիկական միջոցներ են ձեռք բերվել (համակարգիչ, տպող սարք, պատճենահանող սարք և այլն) աշխատանքային սպասարկման պայմանների բարելավման նպատակով

- ՀՀ ոստիկանության ո՞ր բաժիններին/բաժանմունքներին է տրամադրվել տեխնիկական միջոցներ և յուրաքանչյուրից ի՞նչ քանակությամբ
- ՀՀ ոստիկանության քանի՞ բաժիններում/բաժանմունքներում են ստեղծվել սպասասրահներ
- ՀՀ ոստիկանության ո՞ր բաժինների/բաժանմունքների սպասասրահներում է տեղադրվել ՀՀ օրենսդրությունը լուսաբանող ցուցատախտակներ
- ՀՀ օրենսդրության ի՞նչ դրույթներ են լուսաբանվում ոստիկանության բաժինների/բաժանմունքների սպասասրահներում տեղադրված ցուցատախտակների վրա
- Ի՞նչ քանակությամբ և ի՞նչ գույքով (սեղան, նստարան և այլն) է կահավորվել ՀՀ ոստիկանության յուրաքանչյուր բաժնի/բաժանմունքի սպասասրահը
- Ո՞ր կազմակերպություններն են հանդիսացել անհրաժեշտ կահավորանքի մատակարարը, ծառայությունների մատուցողը
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել պետական բյուջեից և արտաբյուջետային միջոցներից աշխատանքային պայմանները բարելավելու համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են իրացվել և ի՞նչ ուղղություններով

54. Հանցավորության դեմ պայքարի ոլորտում առաջավոր փորձ ունեցող երկրների ոստիկանական ուսումնական հաստատությունների հետ կադրերի վերապատրաստման և փորձի փոխանակման ապահովում

54.1. Համապատասխան փորձագետների կողմից ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունում անչափահասների հետ տարվող աշխատանքների կատարելագործմանն ուղղված դասընթացների կազմակերպում

- Քանի՞ դասընթաց է կազմակերվել մինչ այժմ, քանի՞ դասընթաց է նախատեսվում կազմակերպել, ի՞նչ թեմաների շուրջ են իրականացվել դասընթացները
- Որքա՞ն ժամանակ է տրամադրվել յուրաքանչյուր թեմայի ուսուցանման համար
- Քանի՞ ոստկանության ծառայող են մասնակցել յուրաքանչյուր դասընթացին և ՀՀ ոստիկանության ո՞ր բաժիններից/բաժանմունքներից
- Ո՞վ է հոգացել դասընթացների մասնակիցների ճանապարհածախսը, սննդի և ըստ անհրաժեշտության գիշերակացի ծախսերը
- Ովքե՞ր են հանդիսացել դասընթացավարները
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել դասընթացների կազմակերպման և իրականացման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են իրացվել և ի՞նչ ուղղություններով
- Խնդրում եմ տրամադրել իրականացված դասընթացների և մասնակիցների ցանկը՝ նշելով վերջիններիս ծառայության վայրը և հաստիքը, դասընթացի տևողությունը, մասնակիցների կողմից ձեռք բերված գիտելիքների գնահատման արդյունքները

54.2. Համապատասխան փորձագետների կողմից ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունում ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության հիմնահարցերով դասընթացների կազմակերպում

- Քանի՞ դասընթաց է կազմակերպվել մինչ այժմ, քանի՞ դասընթաց է նախատեսվում կազմակերպել, ի՞նչ թեմաների շուրջ են իրականացվել դասընթացները
- Որքա՞ն ժամանակ է տրամադրվել յուրաքանչյուր թեմայի ուսուցանման համար

- Ոստկանության քանի՞ ծառայող է մասնակցել յուրաքանչյուր դասընթացին և ՀՀ ոստիկանության ո՞ր բաժիններից/բաժանմունքներից
- Ո՞վ է հոգացել դասընթացների մասնակիցների ճանապարհածախսը, սննդի և ըստ անհրաժեշտության գիշերակացի ծախսերը
- Ովքե՞ր են հանդիսացել դասընթացավարները
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել դասընթացների կազմակերպման և իրականացման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են իրացվել և ի՞նչ ուղղություններով
- Խնդրում եմ տրամադրել իրականացված դասընթացների և մասնակիցների ցանկը՝ նշելով վերջիններիս ծառայության վայրը և հաստիքը, դասընթացի տևողությունը, մասնակիցների կողմից ձեռք բերված գիտելիքների գնահատման արդյունքները

54.4. Զանգվածային անկարգությունների կանխման ուղղությամբ միջազգային փորձի ուսումնասիրում, մասնագիտական գիտական գիտելիքների կատարելագործում (ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կառավարությունների, ԵԱՀԿ-ի աջակցությամբ)

- Ու՞մ կողմից է կատարվել զանգվածային անկարգությունների կանխման ուղղությամբ միջազգային փորձի ուսումնասիրումը
- Ո՞ր երկրների փորձն է ուսումնասիրվել
- ՀՀ զանգվածային անկարգությունների կանխման վերաբերյալ օրենսդրական կարգավորման և օրենքի կիրառման ի՞նչ խնդիրներ են վեր հանվել
- Խնդրում եմ տրամադրել ուսումնասիրության արդյունքում կազմած փաստաթղթի օրինակը (տեղեկանքի, ամփոփման, զեկույցի կամ այլ տեսքով)

57. Ոստիկանություն-քաղաքացի կապի ամրապնդում, գործունեության թափանցիկության ապահովում

56.1. ՀՀ ոստիկանության ինտերնետային պաշտոնական կայք-էջի վերակազմակերպում՝ ստեղծելով քաղաքացիների հետ ամենօրյա հարց-պատասխանի ծառայություն

- Ո՞վ է իրականացրել ՀՀ ոստիկանության ինտերնետային պաշտոնական կայք-էջի վերակազմակերպման աշխատանքները
- Քաղաքացիները ի՞նչ հարցերով են դիմել ՀՀ ոստիկանության ինտերնետային պաշտոնական կայք-էջի հարց-պատասխան ծառայության միջոցով
- Ում կողմից և ի՞նչ գործողություններ են ձեռնարկվել քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ /հարուցվել է քրեական գործ, նշանակվել ծառայողական քննություն և այլն/
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել ՀՀ ոստիկանության ինտերնետային պաշտոնական կայք-էջի վերակազմակերպման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ ուղղություններով

57.2. ՀՀ ոստիկանության ինտերնետային պաշտոնական կայք-էջում իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպում

- Քանի՞ իրավական ակտի նախագիծ է դրվել հանրային քննարկման մինչ այժմ
- Ո՞ր իրավական ակտերի նախագծերն են դրվել հանրային քննարկման

60. Ոստիկանության գործունեության արդյունավետության գնահատման նոր, առավել առաջադիմական չափանիշների ներդրում

60.1. «Ոստիկանության ստորաբաժանումների գործունեության գնահատման չափանիշները սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում

- Ինչով է պայմանավորված ոստիկանության ստորաբաժանումների գործունեության գնահատման չափանիշների սահմանման անհրաժեշտությունը
- Ոստիկանության ստորաբաժանումների գործունեության գնահատման ի՞նչ չափանիշներ են ներդրվել/ նախատեսվում ներդնել
- Ընդունվե՞լ է արդյոք նշված հրամանը, եթե ոչ՝ երբ է նախատեսվում ընդունել, մշակման ո՞ր փուլում է գտնվում հրամանը այժմ
- Խնդրում եմ տրամադրել հրամանի նախագծի/հրամանի օրինակը

61. Ոստիկանության ծառայողի կողմից օրինականության պահպանման ապահովում

61.2. Ոստիկանության տարբեր պաշտոնների խմբերի համար կոռուպցիայի դեմ պայքարի ուղեցույցների մշակում

- Ու՞մ կողմից, ե՞րբ և քանի՞ ուղեցույց է մշակվել
- Ու՞մ կողմից են հաստատվել ուղեցույցները և ի՞նչ իրավական ակտով
- Ե՞րբ և քանի՞ օրինակից են տպագրվել ուղացույցները
- Ե՞րբ են ներդրվել ուղեցույցները, եթե չեն ներդրվել՝ երբ է նախատեսվում ներդնել
- Ինչպե՞ս են ուղեցույցները տարածվել համապատասխան ծառայողների միջև, ոստիկանության քա՞նի ծառայող է ստացել ուղեցույցները
- Ոստիկանության ծառայողները անցե՞լ են արդյոք վերապատրաստում ուղեցույցների կիրառման վերաբերյալ
- Խնդրում եմ տրամադրել յուրաքանչյուր ուղեցույցի օրինակը
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել ուղեցույցների մշակման և ներդրման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ ուղղություններով

62. Հանցագործությունների մասին հաղորդումների պատշաճ գրանցման, արագ արձագանքման և ընթացքի լուծման արդյունավետ մեխանիզմի ներդրում

62.1. Հանցագործությունների մասին հաղորդումների արագ արձագանքման «1-02» տեխնիկական համակարգի վերազինում և կատարելագործում

- Ե՞րբ է վերազինվել և կատարելագործվել հանցագործությունների մասին հաղորդումների արագ արձագանքման «1-02» տեխնիկական համակարգը
- Ի՞նչ քանակությամբ և ի՞նչ սարքավորումներով է վերազինվել համակարգը
- Ի՞նչ մատակարարող կազմակերպությունից են ձեռք բերվել համապատասխան սարքավորումները /խնդրում եմ նշել կազմակերպության ամբողջական անվանումը, կազմակերպության գրանցման և գործունեության հասցեն/
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել նշված միջոցառման իրականացման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ գործողությունների վրա

- Ինչպե՞ս եք գնահատում հանրության մասնակցությունը կայք-էջում տեղադրված իրավական ակտերի հանրային քննարկումներին

57.3. Հասարակական կարգի պահպանման գործում հասարակայնության ներգրավմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրում և ներդրում

- Ու՞մ կողմից և ե՞րբ է կատարվել հասարակական կարգի պահպանման գործում հասարակայնության ներգրավմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրումը
- Խնդրում եմ տրամադրել ուսումնասիրության արդյունքում կազմած փաստաթղթի օրինակը (տեղեկանքի, ամփոփման զեկույցի կամ այլ տեսքով)
- Ի՞նչ օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության և/կամ առկա ՀՀ օրենսդրության կիրառման հետ կապված ի՞նչ խնդիրներ են վերհանվել ուսումնասիրության արդյունքում
- Ի՞նչ իրավական ակտերի նախագծեր են մշակվել ուսումնասիրության արդյունքում վերհանված խնդիրների լուծման նպատակով
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել հասարակական կարգի պահպանման գործում հասարակայնության ներգրավմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրման և ներդրման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ ուղղություններով

59. ՀՀ ոստիկանության մարմիններում և ոստիկանության ստորաբաժանումներում քաղաքացիների դիմումների և բողոքների հաշվառման և վերահսկողության միասնական համակարգի ստեղծում

59.1. Դիմումների և բողոքների հաշվառման և դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվության միասնական համակարգի ձևավորում

- Ինչո՞վ է պայմանավորված դիմումների և բողոքների հաշվառման և դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվության միասնական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը
- Ե՞րբ և ու՞մ կողմից է ձևավորվել դիմումների և բողոքների հաշվառման և դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվության համակարգը
- Ու՞մ կողմից է ընդունվել համակարգի ներդրման վերաբերյալ համապատասխան իրավական ակտը
- Գործողությունները համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից իրականացնելու պարագայում խնդրում եմ տրամադրել տեղեկություն ծառայություններ մատուցող կազմակերպության մասին
- Որքա՞ն ֆինանսա կան միջոցներ են հատկացվել համակարգի ձևավորմանն ուղղված միջոցառումների իրականացման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ ուղղություններով

59.2. Համակարգչային ծրագրի մշակում և ներդրում

- Ու՞մ կողմից և ե՞րբ է մշակվել և ներդրվել համապատասխան ծրագիրը
- Ե՞րբ է ներդրվել ծրագիրը, եթե դեռևս չի ներդրվել՝ երբ է նախատեսվում ներդնել
- Ի՞նչ ընթացակարգով է ընտրվել համապատասխան ծրագիր մշակող կազմակերպությունը
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել նշված միջոցառման իրականացման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ ուղղություններով

67. Ոստիկանության անձնակազմի համար աշխատանքային պատշաճ պայմանների ապահովում

67.1. Շենքային պայմանների բարելավում, անհրաժեշտ գույքով, տրանսպորտային միջոցներով և տեխնիկայով շարունակական ապահովում

- ՀՀ ոստիկանության ո՞ր բաժիններում/բաժանմունքներում է իրականացվել վերանորոգման աշխատանքներ
- Ո՞ր բաժինների/բաժանմունքների համար են կառուցվել նոր շենքեր, ո՞ր բաժինների/բաժանմունքների համար է նախատեսվում կառուցել
- Ի՞նչ քանակությամբ և ի՞նչ գույքով է ապահովվել ՀՀ ոստիկանության յուրաքանչյուր բաժինը/բաժանմունքը
- Տրանսպորտային ի՞նչ միջոցներ են ձեռք բերվել, տրանսպորտային ի՞նչ միջոցներ է նախատեսվում ձեռք բերել
- ՀՀ ոստիկանության յուրաքանչյուր բաժնին/բաժանմունքին ի՞նչ տեսակի և տրասպորտային քանի՞ միջոց է տրամադրվել և ի՞նչ նպատակներով շահագործման համար
- Ամսական որքա՞ն վառելիք է տրամադրվում տրասպորտային միջոցների շահագործման նպատակով մեկ մեքենայի հաշվարկով
- Ի՞նչ քանակությամբ և ի՞նչ այլ տեխնիկայով է ապահովվել ՀՀ ոստիկանության յուրաքանչյուր բաժինը/բաժանմունքը
- Ամսական կտրվածքով ի՞նչ քանակությամբ և ի՞նչ գույքով և տեխնիկայով է ապահովվում ՀՀ ոստիկանության յուրաքանչյուր բաժինը/բաժանմունքը
- Որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացվել տվյալ միջոցառման իրականացման համար, հատկացված ֆինանսական միջոցներից որքա՞նն են ծախսվել և ի՞նչ ուղղություններով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 587-125

10/4-1- 4447

N---------- ,,23,,11----------2011թ.

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ
Ա.Սաքունցին

ՀՀ ոստիկանությունում ուսումնասիրվել է Ձեր դիմումը՝ ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին:

ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 19-ի <<ՀՀ ոստիկանության կառուցվածքը և աշխատողների առավելագույն թիվը և ղեկավարների թիվը հաստատելու մասին>> թիվ 2069-ՆԳ որոշման մեջ կատարված փոփոխություններին վերաբերող Ձեր հարցադրումների մասով տեղեկատվություն չենք կարող տրամադրել, որովհետև <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող իրավական ակտերը կամ դրանց առանձին մասերը հրապարակման ենթակա չեն: Համանման դրույթ սահմանված է նաև <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում:

Ինչ վերաբերում է ՀՀ ոստիկանության կողմից շրջանառության մեջ դրված իրավական ակտերի նախագծերին, ապա նշենք, որ դրանց կարող եք ծանոթանալ ՀՀ ոստիկանության www.police.am ինտերնետային կայքի <<Օրենսդրություն>> բաժնում, որտեղ <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 27.1 հոդվածի 4-րդ մասի համաձայն հանրային քննարկման են

դրվում ՀՀ ոստիկանության կողմից շրջանառության մեջ դրված և ազդեցության գնահատման ուղարկված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: Իսկ ոստիկանության կողմից շրջանառության մեջ դրված և ընդունված իրավական ակտերը տեղակայված են <<Օրենսդրություն>> բաժնի <<Գործող>> ենթաբաժնում:

Բացի այդ, ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրային միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ վերջնական տեղեկատվություն հնարավոր չէ տրամադրել, քանի որ նշված ծրագիրն այս պահին գտնվում է ամփոփման փուլում:

ՊԵՏ՝
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ *Վ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

Կատարող՝
ԿՎՎ ԲԶԾՀ բաժնի տեսուչ
Անահիտ Աբրահամյան
Հեռ. 56-56-27